



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԱԴԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՏՋԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Երկիր՝ ՀԱՅԱՍՏԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵԴԻԱ ՄՈԴԵԼ ՍՊԸ

ՀԱՍՑԵ՝ Կիևյան 12/10, 0028 Երևան, Հայաստանի Հանրապետություն

Հեռ.../ֆաքս՝ +374 10 270873, կայք՝ www.mediamodel.am

Պատասխանատու՝ Ադրինե Բաբլոյան

Հաշվետվությունը պատրաստել են.

Թիմի ղեկավար/հեղինակ՝ Ադա Բաբլոյան

Տվյալների մշակման մասնագետ՝ Բագրատ Հարությունյան

Դաշտային աշխատանքի ղեկավարներ՝ Տիգրան Հարությունյան, Գայանե Դաջունց

Հաշվետվության թարգմանություն՝ Տաթևիկ Հովհաննիսյան

Հետազոտությունն իրականացվել է «Սեյվ դը չիդրեն» կազմակերպության

«Նախաձեռնություն հանուն երեխայի առողջության և կրթության» ծրագրի շրջանակներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....	5
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ.....	9
ԱՄՓՈՓԱԳԻՐ.....	17
ԳԼՈՒԽ I. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆՏՐԱՆՔԸ.....	26
ԳԼՈՒԽ II. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	37
ԳԼՈՒԽ III. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ. ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	37
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՄՋ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՅՎՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....	40
ԲԱՑԱՐՁԱԿ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ.....	46
ՄՈՒՏՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ.....	49
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ.....	56
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇԸ, ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ.....	62
ԳԼՈՒԽ IV. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱԼԸ. ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	62
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԸ.....	62
ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՋԱՆՔԵՐՆ ՈՒ ՄՈՒՏՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ	67
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	76
Հավելված 1. Հարցաթերթ.....	80
Հավելված 2. Ընտրանքի իրազործումը.....	80
Հավելված 3. Լրացուցիչ բազմաչափ բաշխման աղյուսակներ.....	86
Հավելված 4. Կիսափակ հարցերի «Այլ» տարբերակների բառային մեջբերումներ.....	94

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՀ ԴՐ	Հայաստանի Հանրապետության դրամ
ՎՄԶ	Վաղ մանկության զարգացում
ՖԽՔ	Ֆոկլուս խմբային քննարկում
ՏՏ	Տնային տնտեսություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ԿԱՊԿՈՒ	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ԲՀՄԳԿ	Բժշկա-հոգեբանական-մանկավարժական գնահատման կենտրոն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճակագրական ծառայություն
ԾԽԵ	Ծնողագուրկներ և խոցելի երեխաներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՅՈՒՆԻՍԵՖ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
ՀԲ	Համաշխարհային բանկ

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Հաշվետվության մեջ մեջբերված և օգտագործված հիմնական հասկացությունների սահմանումները.

Վաղ մանկություն է համարվում երեխայի ծննդյան օրվանից մինչև ութ տարեկան ընթացքը: Դա այն ժամանակահատվածն է, երբ տեղի է ունենում ուղեղի աճը: Այս տարիներին դրվում է երեխայի շարունակական զարգացման հիմքը:

Վաղ մանկության զարգացումը դեպի ֆորմալ ուսուցում երեխայի համար սահուն անցում ապահովող նախապատրաստական փուլ է: Այն կենտրոնանում է երեխայի անձի ամբողջական զարգացման վրա՝ հաշվի առնելով երեխայի սոցիալական, էմոցիոնալ, ճանաչողական և ֆիզիկական պահանջմունքները, և ստեղծում կյանքի ընթացքում երկարաժամկետ ուսուցման և բարեկեցության համար ամուր և ընդարձակ հիմքեր:

Նախադպրոցական հաստատություն (նաև մնուր, դպրոցահենք նախակրթարան, մանկապարտեզ). կրթական հաստատություն կամ ուսումնառության վայր, որը մատուցում է վաղ մանկության խնամքի, զարգացման և կրթության ծառայություններ 3-6 տարեկան երեխաների համար՝ ապահովելով տարրական դպրոցում պարտադիր կրթությանն անցնելու նախապատրաստական գործառնություն:

Խոցելիությունը այլ հասակակիցների համեմատությամբ այնպիսի բացասական արդյունքներ ցուցաբերելու հավանականություն է, ինչպիսիք են՝ կրթության կորուստը, հիվանդացությունն ու թերսնումը:

Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշ. նախադպրոցական կրթական հաստատություններում ընդգրկված 0-5 տարեկան ՀՀ մանկահասակ բնակչության ընդհանուր թվաքանակի համամասնությունը՝ արտահայտված տոկոսներով՝ հիմնված ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների վրա:

Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշ. նախադպրոցական կրթական հաստատություններում ընդգրկված 0-5 տարեկան ՀՀ մանկահասակ բնակչության ընդհանուր թվաքանակի համամասնությունը՝ արտահայտված տոկոսներով՝ հիմնված մարզային իշխանություններից հավաքագրված տվյալների վրա:

Հարաբերական ընդգրկվածության ցուցանիշ. որևէ նախադպրոցական կրթական ծառայության/դասընթացի մեջ ընդգրկված 3-5 տարեկան երեխաների համամասնությունը հետազոտության ընտրանքում՝ արտահայտված տոկոսներով՝ հիմնված հարցման արդյունքների վրա:

Հասանելիություն/մատչելիություն. հնարավորություն, իրավունք և թույլտվություն ձեռք բերելու, մուտք գործելու, օգտվելու նախադպրոցական կրթական ծառայություններից:

Մուտք. նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվելու ընթացքը:

Ընդունելություն. նախադպրոցական հաստատություն ընդունվելու/ընդգրկվելու թույլտվության ֆորմալ կամ ոչ ֆորմալ ընթացակարգերի ամբողջություն:

Չընդգրկվածություն. որևէ տեսակի ՎՄՋ ծառայության մեջ չընդգրկված լինելը, նախադարձ-
ցական կրթությունից դուրս մնալը:

Ներառական կրթություն. որակյալ կրթություն բոլոր երեխաների համար՝ ներառյալ կրթության
առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողներին (հաշմանդամության և այլ պատճառներով):

Ներառական կրթություն. մոտեցում է իրավունքների վրա հիմնվող որակյալ կրթությանը,
որով ամրագրվում են մուտքի և մասնակցության հավասարության սկզբունքները՝ դրականորեն
արձագանքելով բոլոր երեխաների կրթության առանձնահատուկ կարիքներին և կարողու-
թյուններին:

Ներառական կրթությունը երեխայակենտրոն է. այն հարմարվելու պատասխանատվությունը
դնում է ոչ թե առանձին երեխայի, այլ կրթության համակարգի վրա: Այլ ոլորտների և ավելի լայն
հանրության աջակցության շնորհիվ այն ակտիվորեն աշխատում է՝ ապահովելու յուրաքանչյուր
երեխայի (անկախ սեռից, լեզվական հնարավորություններից, կրոնից, ազգությունից կամ այլ
հատկանիշներից) իմաստավից մասնակցությունն ու ուսուցումը իր հասակակիցների հետ և նրա
ողջ ներուժի զարգացումը¹:

Աղքատ ՏՏ-ներ. Ընտրանքում այն տնային տնտեսությունները, որոնք իրենց եկամտի ավելի
քան 62%-ը ծախսում են սննդի սպառման վրա:

¹ «Սեյլ դը չիլդրեն» կազմակերպություն (2014), «Սեյլ դը չիլդրեն» կազմակերպությունը պաշտպանում է ներառական
կրթության սկզբունքը:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ, ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Ընտրանքում SS-ների բաշխումն՝ ըստ բնակավայրերի տիպի.....	20
Աղյուսակ 2. Ընտրանքի բաշխումն՝ ըստ ՀՀ մարզերի և պետական մանկապարտեզների առկայության	20
Աղյուսակ 3. Ֆոկուս խմբային քննարկումների ընտրանքի բաշխումը.....	23
Աղյուսակ 4. Ընտրանքի բաշխումը՝ ըստ սննդի ամսական ծախսի հարաբերության ընտանիքի ընդհանուր եկամուրների մեծությանը.....	25
Աղյուսակ 5. Ընտրանքի բաշխումն աղքատ և ոչ-աղքատ SS-ների.....	25
Աղյուսակ 6. Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների մոդելները.....	33
Աղյուսակ 7. Նախադպր. կրթ. մասին իրազեկվածություն.....	37
Աղյուսակ 8. ՎՄԶ նկատմամբ հեղափոխականություն.....	37
Աղյուսակ 9. Որքանով կարևոր էք համարում Ձեր համայնքում 3-6 տարեկան երեխաների ընդգրկումը նախադպրոցական կրթական հաստատություններում:.....	38
Աղյուսակ 10. Պարտադիր նախադպրոցական կրթության կարևորման պարճառները.....	39
Աղյուսակ 11. Դեպքեր, երբ նախադպրոցական կրթությունը պարտադիր է.....	39
Աղյուսակ 12. Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը՝ հիմնված ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների վրա.....	41
Աղյուսակ 13. Ընդգրկվածության ցուցանիշների համեմատություն.....	42
Աղյուսակ 14. Նախադպրոցական կրթական հաստատությունների տեսակները.....	43
Աղյուսակ 15. Հաճախումների ինտենսիվությունը՝ աղքատ ու ոչ-աղքատ SS-ների շրջանում.....	45
Աղյուսակ 16. Սպառվող նախադպրոցական կրթական ծառայությունների թիվը SS-ներում.....	45
Աղյուսակ 17. Երեխաների ընդգրկվածությունը (%-ը մարզում SS-ների թվից).....	46
Աղյուսակ 18. Պետական մանկապարտեզ հաճախողները՝ աղքատ և ոչ- աղքատ SS-ների շրջանում.....	46
Աղյուսակ 19. Մուտքի դյուրինության գնահատականը՝ աղքատ և ոչ-աղքատ SS-ների շրջանում.....	46
Աղյուսակ 20. Մուտքի խոչընդոտներն՝ ըստ մարզերի.....	47
Աղյուսակ 21. Մանկապարտեզ չընդունելու պարճառաբանությունները	48
Աղյուսակ 22. Մանկապարտեզների աշխատանքի կանոնավորությունը քաղաքային և գյուղական բնակավայրերում.....	50
Աղյուսակ 23. Պետական և մասնավոր մանկապարտեզների ծառայությունների որակի գնահատումը.....	52
Աղյուսակ 24. Խոսելով Ձեր երեխայի մանկապարտեզի մասին՝ որքանով եք համամիտ հետևյալ դպրողությունների հետ (տոկոսներով).....	53
Աղյուսակ 25. Մանկապարտեզների ծառայությունների համար ամսական ծախսերը.....	56
Աղյուսակ 26. Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների բաշխումն ըստ բնակավայրի տիպի և երեխաների սեռի.....	57
Աղյուսակ 27. Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած/չընդգրկված երեխաների բաշխումն ըստ աղքատության կարգավիճակի.....	58
Աղյուսակ 28. Չընդգրկված երեխաների ծնողների կողմից նախադպրոցական հաստատություններում ընդգրկելու փորձերը.....	58
Աղյուսակ 29. Չընդգրկվածության ընդհանուր պարճառները.....	59
Աղյուսակ 30. Մանկապարտեզների կամ այլ նախադպրոցական ծառայությունների հանդեպ չընդգրկված երեխաների ծնողների պահանջները (տոկոսը պարասիսաններից).....	60
Աղյուսակ 31. Համայնքի, սոցիալական կամ առողջապահական ծառայությունների, այլընտրանքային կրթական ծառայությունների ներկայացուցիչների կողմից	

առաջարկություններ/հորդորներ նախադպրոցական կրթական հասարակություններում երեխաներին ընդգրկելու կապակցությամբ.....	61
Աղյուսակ 32. Տնային պայմաններում և հասարակություններում ՎՄՁ ծառայությունների որակի համեմատություն.....	62
Աղյուսակ 33. Տնային պայմաններում ինսամբի առավելություններն ու թերությունները.....	63
Աղյուսակ 34. Նախադպրոցական կրթական ծառայությունների կարևորությունն ու մարչելիությունը, հիմնական սահմանափակումները.....	65
Աղյուսակ 35. Այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների առավելությունների/թերությունների վերաբերյալ ընկալումները.....	66
Աղյուսակ 36. Նախադպրոցական կրթական հասարակությունների մարտահրավերների խմբային ընկալումը.....	66
 Գծապարկեր 1. Ինչ էք կարծում, արդյոք, 3-6 տարեկան երեխաների ընդգրկումը նախադպրոցական հասարակություններում պետք է լինի.....	38
Գծապարկեր 2. Պետական մանկապարտեզներ հաճախելիության ցուցանիշը քաղաքային և գյուղական բնակավայրերում.....	43
Գծապարկեր 3. Նախադպրոցական կրթության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը՝ ըստ մանկապարտեզ հաճախելու.....	44
Գծապարկեր 4. Մուտքի խոչընդոտների տարածվածություն.....	48
Գծապարկեր 5. Երեխային մանկապարտեզ տեղավորելու համար ձեռնարկված քայլերը.....	49
Գծապարկեր 6. Մանկապարտեզների նյութատեխնիկական ապահովվածության գնահատականները (առկայության դեպքում).....	50
Գծապարկեր 7. Մանկապարտեզի գործունեության գնահատականները.....	51
Գծապարկեր 8. Քաղաքային և գյուղական մանկապարտեզներում ԿԱՊԿՈՒ երեխաների ներառվածությունը.....	53
Գծապարկեր 9. Հարցվողների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ երեխաներին մանկապարտեզներում ընդգրկելու վերաբերյալ.....	54
Գծապարկեր 10. Հարցվողների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ երեխաներին մանկապարտեզներում ընդգրկելու վերաբերյալ՝ ըստ մանկապարտեզում այդպիսի երեխաների փաստացի ընդգրկվածության.....	55
Գծապարկեր 11. Պարկերացումները նախադպրոցական կրթությունից դուրս մնալու հնարավոր պարճառների մասին.....	59
 Պարկեր 1. ՎՄՁ ռազմավարության հիմնական միտումները առաջիկա տարիների համար.....	28
Պարկեր 2. Միջգերատեսչական համագործակցության ընդհարվող ցանց.....	35
Նկար 1. 3-5 տարեկան երեխաների չընդգրկվածության ցուցանիշները ՀՀ մարզերում.....	57

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, ընդհանուր առմամբ նախադպրոցական կրթությունն ուղղված է մինչև 6 տարեկան ազգաբնակչության խմբին: Հայաստանում նախադպրոցական կրթական ծառայությունները մեծ մասամբ գտնվում են պետական հոգաձության ծրագրերի ներքո: Վաղ մանկության զարգացումը (ՎՄԶ) ընդգրկված է կրթական և սոցիալական քաղաքականության հայեցակարգի կարևորագույն ուղղությունների շարքում, ինչպես պետական, այդպես էլ միջազգային կազմակերպությունների ծրագրերի շրջանակում: Այնուամենայնիվ, նախակրթարանների և ՎՄԶ կենտրոնների թիվը բավարար չէ: Հայաստանում նախակրթարանների և ՎՄԶ կենտրոնների ծառայություններն իրականացվում են համայնքային, գերատեսչական և ոչ պետական հաստատությունների կողմից, որոնք գտնվում են մեծամասամբ տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվության տակ, իսկ գերատեսչական և մասնավոր հաստատությունների թիվը մեծ չէ: Ազգաբնակչության այլ խմբերի հետ համեմատած՝ նախադպրոցական կրթության հասանելիության սահմանափակումների հիմնական կրողն են առավել խոցելի խմբի երեխաները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակն էր կատարել Հայաստանում երեխաների համար նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության գնահատում (ներառյալ առավել խոցելի երեխաների խմբերը): Գնահատման թիրախն են Հայաստանի 10 մարզերի և մայրաքաղաք Երևանի բոլոր այն ընտանիքները, որոնք ունեն 3-5 տարեկան երեխաներ և որոնք հանդիսանում են 2016-2017թթ.-ին նախակրթության և ՎՄԶ կենտրոնների փաստացի կամ պոտենցիալ շահառուներ: Գնահատման մեթոդաբանությունը հիմնված է համակցված մեթոդների մոտեցման վրա, որը թույլ է տալիս համադրել (ա) քանակական տվյալների հավաքագրումը՝ քանակական մեթոդների կիրառմամբ, և (բ) խորքային տեղեկատվության հավաքագրումը՝ որակական մեթոդների կիրառմամբ: Հաշվետվության մեջ ներկայացված բացահայտումները հիմնված են այն տվյալների վրա, որոնք ստացվել են հետևյալ աղբյուրներից. 20 կիսաձևայնացված հարցազրույց համայնքային և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների և դոնոր կազմակերպությունների փորձագետների հետ, Հայաստանի տարածքում 599 դեմ առ դեմ ձևայնացված հարցազրույց 3-5 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքների հետ, 9 ֆոկլուս խմբային քննարկում Հայաստանի 3 մարզերից ընտրված, մանկապարտեզ չհաճախող երեխաներ ունեցող ընտանիքների 3 կատեգորիաների շրջանում (աղքատ ընտանիքներ (որտեղ մեկ շնչի հաշվով ամսական ծախսը ցածր է աղքատության վերին ընդհանուր գծից կամ 40,000 ՀՀ դր-ից), բարեկեցիկ ընտանիքներ (որտեղ մեկ շնչի հաշվով ամսական ծախսերը բարձր են միջին անվանական ամսական աշխատավարձի մեծությունից կամ 158.000 ՀՀ դր-ից) և 3-5 տարեկան ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքներ):

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2016թ.-ի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակատվածում Հայաստանի 10 մարզերում և մայրաքաղաք Երևանում: Քանակական հարցման ընտրանքի ծավալը կազմել է 600 (իրագործված ընտրանքը՝ 599) տնային տնտեսություն, 95% վստահության միջակայքում՝ սահմանային սխալի $\pm 4\%$ մեծությամբ: Ընտրանքը կառուցվել է բազմաստիճան հավանականային ներկայացուցչական ընտրանքային ռազմավարության հիման վրա: Հարցման վերլուծական նպատակներից ելնելով՝ որպես աղքատ տնային տնտեսություններ են սահմանվել ընտրանքում հայտնված այն տնային տնտեսությունները, որոնց ընդհանուր ամսական եկամուտների ավելի քան 62%-ը ծախսվում է սննդի վրա:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՑ

ՆԱԽԱԴԱՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Համաձայն փորձագիտական գնահատման՝ Հայաստանում որոշում կայացնողների շրջանում նկատելի է նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը մեծացնելու և համընդանուր կրթության հայեցակարգը զարգացնելու պատրաստականությունը: Այնուամենայնիվ, գործառնական մակարդակում նախադպրոցական կրթության հայեցակարգի վերջնական տարբերակի մշակումները գտնվում են անցումային փուլում: Առաջիկա տարիների ՎՄՋ ռազմավարության հիմնական ուղղություններն են՝

- ա.** անցում դեպի պարտադիր նախադպրոցական կրթության 5-6 տարեկան երեխաների համար՝ այլընտրանքային առավել ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ,
- բ.** գյուղական համայնքներում անվճար նախադպրոցական կրթության համար բյուջեների վերաբաշխում մանկապարտեզներից դեպի այլընտրանքային ծառայություններ (հատկապես դեպի դպրոցահենք նախակրթարաններ),
- գ.** նախադպրոցական կրթության տեղայնացում առավել համապարփակ հիմնական և ավագ դպրոցի կրթության ռազմավարության համատեքստում՝ որդեգրելով, այսպես կոչված, «1+1» բանաձևը,
- դ.** թիրախավորված քաղաքականության բացակայություն ներառական նախադպրոցական կրթության, հատկապես վաղ տարիքի երեխայի խնամքի բնագավառում (0-ից 3 տարեկան երեխաների համար),
- ե.** տարամիտում գյուղական ու քաղաքային քաղաքականության զարգացումներում:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐ

Նկատվում է ամբողջական տվյալների շտեմարանի, ինչպես նաև տվյալների հավաքագրման, պահպանման, շրջանառման և վերլուծության ընթացակարգերի և մշտադիտարկման գործիքների պակաս, մասնավորապես նախադպրոցական տարիքի երեխաների թվի, տարբեր տեսակի նախակրթարանների թվի՝ ներառյալ այլընտրանքային նախադպրոցական կրթական կենտրոնների վերաբերյալ, ընդգրկվածության և չընդգրկվածության ցուցանիշների, սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների, ԿԱՊԿՈՒ երեխաների, փախստական-տեղահանված ընտանիքների երեխաների թվի վերաբերյալ: Տարբեր գերատեսչությունների կողմից (օրինակ՝ սոցիալական աջակցության ծառայություններ, տարածքային կառավարման մարմիններ, ամբուլատորիաներ, Սփյուռքի նախարարություն և այլն) իրենց նպատակների իրացման համար ձևավորված առանձին շտեմարաններն ամբողջական և փոխկապակցված չեն. դրանք չեն կարող կիրառվել նախադպրոցական կրթության մեջ մատչելիության խոչընդոտ ունեցող կամ չընդգրկված երեխաներին թիրախավորելու համար:

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՎՄՋ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի մարզերում առ այսօր փորձարկված նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելներից են.

- ա)** նախադպրոցական խմբեր դպրոցում կամ դպրոցահենք նախակրթարաններ՝ նախատեսված 5 տարեկան, հետագայում նաև 4 տարեկան երեխաների համար,
- բ)** մանկապարտեզ, որը հարմարեցված է առանձնահատուկ կրթական կարիքների համար կամ որտեղ առկա է հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատող և, ըստ անհրաժեշտության, աշխատակազմին վերապատրաստող շրջիկ մասնագիտական խումբ,
- գ)** ՎՄՋ կենտրոն, որը ոչ միայն կազմակերպում է ուսուցողական միջոցառումներ, այլև տրամադրում առողջության և երեխաների պաշտպանության ու վերականգնման ծառայություններ,

- դ) ծնողների անհատական աջակցության կենտրոններ կամ տնային աջակցության («տնայց»)/շրջիկ աջակցման խմբեր,
- ե) խաղերի, խնամքի և ուսուցողական միջոցառումների «ապահովում տան պայմաններում» ծնողական խմբերի միջոցով, հատկապես փոքր և հեռավոր համայնքների համար, որտեղ երեխաների թիվը բավարար չէ ՎՄՁ խումբ ստեղծելու համար:

Նշված մոդելներից միայն երկուսն են ապահովված նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և թիրախավորելու հատուկ մեխանիզմներով:

ՉԸՆԴԳՐԿՎԵԼԸ ՎՄՁ-ՈՒՄ

Ըստ փորձագետների՝ Հայաստանում նախադպրոցական ծրագրերում չընդգրկված հիմնական սոցիալական խմբերն են՝ (ա) մարզերի փոքր, նոսր բնակեցված կամ հեռավոր գյուղական կամ քաղաքային համայնքները, (բ) ԿԱՊԿՈՒ երեխաները, (գ) Սիրիայից և Իրաքից փախստականների երեխաները, (դ) ծայրահեղ աղքատ կամ ռիսկային ընտանիքները (շեղվող վարք, ակոհոլիզմ, հատուկ հաստատություններում գտնվող երեխաներ ունեցող ընտանիքները): Նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաների բացահայտման և հավաքագրման մեխանիզմները բացակայում են, պատասխանատու մարմինները չունեն հատուկ լիազորություններ՝ կապված երեխաների կրթության իրավունքի պարտադիր իրացման հետ, քանի որ նախադպրոցական կրթությունը Հայաստանում պարտադիր չէ:

ՆԵՐԱՌԱԿԱՆ ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական մակարդակի կրթության ներառականության փորձագիտական գնահատականը ամենացածրն է՝ համեմատած հիմնական կամ բարձրագույն կրթության օղակների հետ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և կարիքների գնահատման գործակալությունները չեն գործում որպես ամբողջական համակարգ ներառական կրթություն իրականացնող հաստատությունների հետ, հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի ամփոփության պատճառով նախակրթական ծրագրերից դուրս մնացած երեխաների վերաբերյալ ճշգրիտ տվյալները բացակայում են: Ոչ միայն ծնողները նախաձեռնող չեն ԿԱՊԿՈՒ իրենց երեխաներին պետական մանկապարտեզ տեղավորելու հարցում՝ նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, այլև մանկապարտեզների տնօրենները ցանկություն չունեն ներգրավել ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ հիմնականում պատճառաբանելով, որ մանկապարտեզում չկան համապատասխան պարագաներ, մասնագետներ և հատուկ խնամքի պայմաններ:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

ՎՄՁ ոլորտում իրականացվող ջանքերը կրում են տեղայնացված բնույթ, նկատվում է ոլորտում գործող կազմակերպությունների, մարզային իշխանությունների և այլ շահագրգիռ կառույցների համագործակցության պակաս: Միջգերատեսչական համագործակցության ոլորտում նկատվում են կրկնակի ուշադրության արժանացող ուղղություններ և անուշադրության մատնված հարցեր: Առկա է այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների պակաս հատկապես սոցիալապես խոցելի ընտանիքների շրջանում:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄԻՑ

ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

Հարցվողների մեծամասնությունը (ընտրանքի ավելի քան 80%-ը) կարծում է, որ մինչև 6 տարե-

կան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական կրթական հաստատություններում «շատ կարևոր է» ու «հիմնականում կարևոր է»: Հարցվողների համար ավանդաբար ամենակարևոր հաստատություններ են համարվում մանկապարտեզներն ու դպրոցահենք նախակրթարանները: Երեխայի ընդգրկվածությունը որևէ տեսակի ՎՄՁ ծառայության մեջ ընկալվում է դրական, իսկ հարցվածների ավելի քան 62%-ը դրական են կողմնորոշված դեպի նախադպրոցական կրթության **պարտադիր** բնույթը: Հայաստանյան հասարակության մեջ ձևավորված է երեխաների և ծնողների համար նախադպրոցական կրթության սոցիալական գործառնությունների մասին բավականին խորքային ընկալում՝ հատկապես շեշտադրվում են այնպիսի սոցիալական գործառնություններ, ինչպիսիք են դպրոցում ուսումնական առաջադիմության ապահովումը (պատասխանների 33.4%-ը), երեխայի մոտ շփման և հաղորդակցության հմտությունների ձևավորումը (պատասխանների 31.4%-ը) և երեխայի ընդհանուր զարգացվածության, բարեկրթության ապահովումը (պատասխանների 30.5%-ը):

ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Գոյություն ունի որոշակի տարբերություն պաշտոնական վիճակագրության հիման վրա հաշվարկված ընդգրկվածության ցուցանիշների և այլ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա հաշվարկված ցուցանիշների միջև: Տարբերությունը պայմանավորված է, նախ և առաջ, նախադպրոցական տարիքի սահմանման տարբերվող մոտեցումներով (0-ից 6 տարեկան երեխաներ կամ միայն 3-6 տարեկան երեխաներ), ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխաների թվաքանակի մասին տարբեր տվյալներով: **Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը** 2013-2015թթ-ին միջինում կազմել է 28%: Այն հաշվարկվում է Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) կողմից որպես նախադպրոցական հաստատություններում գրանցված երեխաների համամասնությունը նախադպրոցական տարիքի ՀՀ բնակչության թվից՝ արտահայտված տոկոսներով: Այս ցուցանիշը քաղաքային բնակավայրերում կազմում է 35.6%, իսկ գյուղական բնակավայրերում այն շատ ցածր է՝ 15.8%: **Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշը** 2016թ. համար կազմում է 50.5%: Այն հաշվարկվել է հետազոտական թիմի կողմից տարածքային կառավարման մարզային գործակալությունների կողմից տրամադրված տվյալների հիման վրա՝ որպես տվյալ մարզի նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 0-5 տարեկան երեխաների համամասնությունը մարզի մանկահասակ բնակչության ընդհանուր թվաքանակից՝ արտահայտված տոկոսներով: **Հարաբերական ընդգրկվածության ցուցանիշը** կազմում է մոտավորապես 60%: Այն հաշվարկվել է հարցման արդյունքում ստացված տվյալների հիման վրա հետազոտական խմբի կողմից՝ որպես պետական և մասնավոր մանկապարտեզներ հաճախող 3-5 տարեկան երեխաների համամասնությունը հարցված ընտանիքների երեխաների ընդհանուր թվին՝ արտահայտված տոկոսներով (տվյալները վերաբերվել են 684 երեխաների, որոնցից 65.3%-ը 3-5 տարեկան են և 34.7%-ը՝ 5-6 տարեկան):

ՀԱՃԱԽԵԼԻՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընտրանքում ընդգրկված երեխաների 59.4%-ը հաճախում է պետական մանկապարտեզներ, մինչդեռ մասնավոր մանկապարտեզներն այդքան էլ նախընտրելի չեն (հաճախելիության ցուցանիշը ընտրանքում՝ 3% է): Երեխաների շրջանում բավականին մեծ տոկոս են կազմել այլընտրանքային ծառայություններից (խմբակներ, հատուկ դասընթացներ և այլն) օգտվողները: Ընդհանուր առմամբ, նախադպրոցական կրթական հաստատությունների հաճախելիությունը բավական ինտենսիվ է, քանի որ ընդգրկված երեխաների 89.4%-ը հաճախում են նախակրթական հաստատություններ ամեն օր, իսկ ընդգրկվածների 84%-ը ՎՄՁ կենտրոններում օրական անցկացնում են 4 ժամից ավելի: Քաղաքային երեխաները երկու անգամ ավելի են հաճախում նախադպրոցական կրթական հաստատություններ, քան գյուղաբնակները: Միաժամանակ օրական տևողության և հաճախումների պարբերականության առումով գյուղերի բնակիչներն ու աղ-

քատ ընտանիքների երեխաներն ավելի ինտենսիվ են հաճախում մանկապարտեզ: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներն ավելի են հակված ընդգրկել իրենց երեխաներին նախադպրոցական կրթական հաստատություններում: Բացի այդ նրանք, ովքեր ունեն աշխատանք, երկու անգամ ավելի շատ են իրենց երեխաներին ուղարկում ՎՄՁ կենտրոններ, քան չաշխատող ծնողները:

ՄՈՒՏՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Ընտրանքում ընդգրկված այն ՏՏ-ներից, որոնց երեխաները հաճախում են մանկապարտեզ, մոտավորապես յուրաքանչյուր երրորդը կամ 36,7%-ը նշել են, որ ելնելով իրենց փորձից՝ իրենց համայնքում հեշտ չէ 3-5 տարեկան երեխային տեղավորել պետական մանկապարտեզ: Մանկապարտեզների մատչելիությունից անբավարարվածների թիվն առավել մեծ է աղքատ ՏՏ-ների շրջանում: Ըստ տվյալների՝ գյուղական բնակավայրերում երկու անգամ ավելի հեշտ է տեղավորել երեխային պետական մանկապարտեզ, քան քաղաքային բնակավայրերում: Դեպի ՎՄՁ կենտրոններ մուտքի խոչընդոտներն առավել տարածված են Լոռվա մարզում (ընդգրկված ընտանիքների 25%-ը), Երևանում (23.5%) և Կոտայքում (17.6%), իսկ Գեղարքունիքում և Տավուշում մանկապարտեզներն առավել մատչելի են:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Մանկապարտեզ չընդունելու ամենատարածված պատճառը մանկապարտեզներում տեղերի բացակայությունն է: Ընդունելության ամենատարածված խոչընդոտներից է (պատասխանների ավելի քան 60%) ընդունելության ընթացակարգում բյուրոկրատական քաշքշուկը, մասնավորապես կապված երկար ժամանակ սպասելու, հերթագրման և հաստատությունում բազմաթիվ փաստաթղթեր, տեղեկանքներ պահանջելու հետ: Կոռուպցիոն մեխանիզմները, ինչպիսիք են օրինակ՝ համայնքի ղեկավարության հատուկ կարգադրությունը կամ նվերների/ոչ պաշտոնական վճարման պահանջը, դեռևս լայնորեն տարածված են (պատասխանների մոտ 16.5%-ը): Միաժամանակ մանկապարտեզի ընդունելությունն ապահովվում է նաև ոչ ֆորմալ մեխանիզմներով (ինչպիսիք են՝ երրորդ անձանց/միջնորդների ներգրավվածությունը)։ Վերջիններս կիրառվել են մանկապարտեզ հաճախող ՏՏ-ների 28.4%-ի կողմից: Գոյություն ունի որոշակի միտում կատարել նախնական ընտրություն և մուտքի սահմանափակում առանձին ընտանիքների համար հատկապես բարձր պահանջարկ վայելող/գերծանրաբեռնված մանկապարտեզներում՝ դրանց ղեկավարության (այդ թվում տնօրենների, համայնքի ղեկավարների) կողմից:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿ

Հայաստանում մանկապարտեզների որակի հետ առնչվող ամենալուրջ խնդիրներից է մանկապարտեզների անկանոն աշխատանքը. մանկապարտեզ հաճախող ընտանիքների 12.1%-ը նշել են, որ իրենց մանկապարտեզը սեզոնային է և կանոնավոր չի աշխատում: Այս ցուցանիշը հատկապես բարձր է գյուղական համայնքներում: Չնայած ծառայությունների որակի միջին գնահատականները բավարար են՝ գնահատականները ծառայությունների այնպիսի կողմի վերաբերյալ, ինչպիսին է դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցումը, ավելի ցածր են (4,4 միավոր), քան ՎՄՁ այլ ծառայությունների վերաբերյալ գնահատականները, մասնավորապես՝ աշխատաժամերի հարմարություն, ստեղծագործականության զարգացում կամ ինքնուրույնության, տրամաբանելու հմտությունների փոխանցում (համապատասխանաբար՝ 4,6; 4,56; 4,53): Մասնավոր մանկապարտեզները ստացել են մի փոքր ավելի բարձր գնահատական՝ ըստ դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցման չափանիշի (4.5 միավոր համեմատած պետական մանկապարտեզների համար 4.4 միավորի հետ), սակայն, ընդհանուր առմամբ, նրանք ստացել են ավելի ցածր միավորներ բոլոր մնացած գնահատման չափանիշներով:

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գյուղական համայնքներում հարցվողների 92.6%-ը նշում է, որ այն մանկապարտեզում, ուր հաճախում է իրենց երեխան, ԿԱՊԿՈՒ երեխաներ ընդգրկված չեն, այդ ցուցանիշը քաղաքային համայնքներում կազմել է 83.7%: Հարցվողների 14.5%-ը պնդում է, որ բացասաբար կվերաբերվեին, եթե իրենց երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին ԿԱՊԿՈՒ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներ: Գյուղական համայնքների բնակիչներն ավելի հանդուրժող են ներառական նախադպրոցական կրթության հարցում, քան քաղաքային բնակչությունը: Աշխատանք ունեցող հարցվողներն ավելի դրական են տրամադրված ներառական կրթության հանդեպ, իգական սեռի հարցվողներն ավելի անհանդուրժող են, քան տղամարդիկ: Մանկապարտեզներում ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության վերաբերյալ դրական ընկալման ամենացածր ցուցանիշն ու չեզոք ընկալման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել են Երևանում: Այն հարցվողները, ում երեխան հաճախում է մանկապարտեզ, որտեղ կան ԿԱՊԿՈՒ երեխաներ, ավելի դրական են տրամադրված ԿԱՊԿՈՒ երեխաների ներառվածության հարցում:

ՎՄՋ ԾԱԽՍԵՐԸ

ՎՄՋ-ի հետ կապված ընդհանուր ծախսերն ավելի մեծ են քաղաքային բնակավայրերում, քան գյուղական. ՀՀ-ում ՏՏ կողմից նախադպրոցական կրթությանն առնչվող ամսական միջին ծախսը կազմում է 4700 ՀՀ դրամ: Գյուղական համայնքներում ոչ պաշտոնական վճարների, հատուկ պարագաների/պիտույքների և այլ դրամահավաքների հետ կապված ծախսերը մի քանի անգամ նվազ են քաղաքային բնակիչների ամսական նույն ծախսերի մեծությունից:

ՉԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

Հայաստանում նախադպրոցական կրթությունից 3-6 տարեկան երեխաների չընդգրկվածության ցուցանիշը կազմում է 32.7%: Գյուղաբնակ երեխաներն ավելի շատ են դուրս մնում ծառայություններից, քան քաղաքաբնակները: Չընդգրկված երեխաների խնամքը հիմնականում իրականացվում է նրանց ծնողների կողմից (հայր, մայր) և ոչ թե տատիկ/պապիկների: Նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաներն առավել հաճախ աղքատ ՏՏ-ից են: Առհասարակ նախակրթական հաստատություններից չօգտվողների ցուցանիշը առավել բարձր է հետյալ մարզերում՝ Տավուշ (մարզում ընտրանքի երեխաների 61.7%-ը), Կոտայք (59.1%) և Լոռի (53.2%), մինչդեռ դուրս մնացածների ամենացածր ցուցանիշները ստացվել են Երևան քաղաքի համար (Երևանում երեխաների 17.3% չի հաճախում որևէ նախադպրոցական կրթական հաստատություն), Արագածոտնի մարզի (22.9%) և Արմավիրի մարզի համար (24.5%):

ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՁԱՆՔԵՐԸ

Դուրս մնացած ընտանիքների ավելի քան 1/3-ը նշում են, որ իրենց կողմից ձեռնարկվել են հատուկ քայլեր երեխային նախադպրոցական հաստատություն տեղավորելու ուղղությամբ: Երեխաներին մանկապարտեզ չտանելու ամենատարածված երեք պատճառաբանություններն են՝ համայնքում/մոտակայքում որևէ գործող մանկապարտեզի կամ այլ նախադպրոցական ծառայության բացակայությունը, համայնքում գործող մանկապարտեզների կամ այլ նախադպրոցական ծառայությունների չբավարարելը ծնողների պահանջներին և որևէ պատճառով երեխային մանկապարտեզ չընդունելը տնօրինության կողմից: Դուրս մնացած ընտանիքների 95%-ը նշել է, որ համայնքի, սոցիալական կամ առողջապահական ծառայությունների, այլընտրանքային կրթական ծառայությունների ներկայացուցիչները երբևէ չեն դիմել իրենց երեխաներին նախադպրոցական կրթության հաստատությունում ընդգրկելու առաջարկությամբ/հորդորով:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ

ՉՐՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐ

Մանկապարտեզ չհաճախող երեխաների ընտանիքների հետ անցկացված ՖԽ-ներից պարզվել է, որ նրանք կարևորում են նախադպրոցական կրթությունը երեխայի զարգացման և ընդհանուր առմամբ ընտանիքի կյանքում: ՖԽ մասնակիցների մեծամասնությունը փորձեր են ձեռնարկել իրենց երեխաներին տեղավորելու մանկապարտեզներում: Հիմնականում երեխաները դուրս են մնացել համայնքում կամ մոտակայքում պետական մանկապարտեզների բացակայության և մուտքի խոչընդոտների առկայության պատճառով: Լավ սննդից և հիգիենայից բացի, որպես տան պայմաններում երեխաների խնամքի առավելություններ՝ մասնակիցներն առանձնացրել են այն, որ երեխաներն ավելի ամուր են կապվում ընտանիքի մյուս անդամներին, ավելի լավ են հաղորդակցվում ծնողների և տատիկ-պապիկների հետ, ունենում են ավելի ամուր դիմադրողականություն և հազվադեպ են հիվանդանում շնչառական հիվանդություններով: Մանկապարտեզի աշխատակիցները չունեն սկսնակ փուլում երեխաների հետ աշխատելու հատուկ ուղեցույց և չեն տիրապետում համագործակցության ձեռքբերման հատուկ հմտությունների (այդ իսկ պատճառով շատ երեխաներ դուրս են մնում մանկապարտեզից առաջին հաճախումների փուլում, երբ դաստիարակները չեն կարողանում լեզու գտնել լացող և հուզվող մանուկների հետ): Հաջորդ խնդիրը հաստիքների պակասն է և դաստիարակի օգնականի գերծանրաբեռնվածությունը, որոնք հանգեցնում են երեխաների նկատմամբ ուշադրության պակասի և խնամքի որակի անկման: Մուտքի խոչընդոտների շարքում մասնակիցներն, առաջին հերթին, նշում են պետական մանկապարտեզների գերծանրաբեռնվածությունն ու գրանցման երկար հերթերը, ինչը կապված է կոռուպցիոն ռիսկ պարունակող մեխանիզմների գործառնման հետ, ինչպիսիք են՝ կաշառքը, երրորդ անձի կամ միջնորդի ներգրավվումը, մանկապարտեզի տնօրենի կամ աշխատակիցների անհանդուրժող կամ կոպիտ վերաբերմունքը դիմորդների նկատմամբ: Ըստ արդյունքների՝ աղքատ ընտանիքներն ավելի հաճախ են ենթարկվել ոչ պաշտոնական վճարների կամ նվերների կորզման, քան բարեկեցիկները: Ամենայն հավանականությամբ, սա կարող է բացատրվել նրանով, որ մանկապարտեզների տնօրեններն ունեն թաքնված մտադրություն չընդունելու սոցիալապես խոցելի երեխաներին, հետևաբար, նրանք ստեղծում են լրացուցիչ խոչընդոտներ ծնողների համար՝ պարտադրելով նրանց ինքնուրույն հրաժարվել հաստատությունից:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաներն առավել խոցելի են նախադպրոցական կրթության հաստատություններից դուրս մնալու տեսանկյունից: Այս ընտանիքները հանդիպել են բազմաթիվ խոչընդոտների իրենց երեխաներին պետական ներառական նախակրթական հաստատություններ ընդգրկելու ընթացքում: ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին պետական մանկապարտեզներում առավել հաճախ պարզաբանվել է, որ հաստատությունը չունի առանձնահատուկ կրթության պայմաններ: Մանկապարտեզներն առավել անմատչելի են ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար: Բացի դրանից, ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներն ունենում են կոնֆլիկտներ ու վիճաբանություններ ընտանիքում ավագ սերնդի ներկայացուցիչների հետ՝ կապված երեխայի ներառվածության կարիքների հետ: Ավագ սերունդն առավել հակված է թաքցնել ընտանիքի խնդիրները հասարակությունից և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մեկուսացնել տանը: ՖԽ մասնակիցները նշել են, որ ավելի հաճախ նրանք նախընտրում են մասնավոր ծառայություններն ու հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, որոնցում վերաբերմունքն իրենց հանդեպ շատ ավելի բարյացկամ է: Հաջորդ մարտահրավերը, որի հետ առերեսվում են ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքները, հավելյալ ծախսերն ու բարդություններն են: Վերջիններս կապված չեն նախադպրոցական ծառայությունների հետ ուղղակիորեն, սակայն անուղղակիորեն առնչ-

վում են ՎՄԶ ծառայությունների հետ՝ դեպի առողջապահական և վերականգնողական ծառայություններ մուտք ունենալու տեսանկյունից: Հետազոտության ընթացքում բացահայտվել են բազմաթիվ դեպքեր/պատումներ ամբուլատոր և այլ բժշկական ծառայություններում կոռուպցիոն դրսևորումների, ոչ պատշաճ վերաբերմունքի և անմատչելիության վերաբերյալ, հատկապես հատուկ կարիքների գնահատման և անվճար բժշկական ծառայությունների կազմակերպման գործընթացներում:

ԳԼՈՒԽ I

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԸՆՏՐԱՆՔԸ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՌԱՐԿԱՆ

Հետազոտության նպատակն էր Հայաստանում երեխաների համար նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության գնահատումը (ներառյալ երեխաների առավել խոցելի խմբերին): Հայտնի է, որ խոցելիություն հասկացությունն օգտագործվում է տարբեր ոլորտներում՝ արտացոլելու վատ արդյունքի, ռիսկայնության կամ վտանգավորության պոտենցիալ առկայությունը: Երեխայի խոցելիության բազմաթիվ սահմանումներ կան: Օրինակ՝ Համաշխարհային բանկի «Ծնողագուրկ ու խոցելի երեխաները (ԾԽԵ)» ուղեցույցի մեջ խոցելիությունը սահմանվում է որպես «երեխաների խումբ, որոնք իրենց հասակակիցների հետ համեմատած կրում են բացասական արդյունքներ, ինչպիսիք են կրթության կորուստը, հիվանդացությունը և թերսնումը»²: Այս ձեռնարկում տարանջատված են խոցելի երեխաների հետևյալ հիմնական կատեգորիաները՝

1. փողոցային երեխաներ,
2. մանկական աշխատանքի վատթարագույն ձևեր կատարող երեխաներ,
3. զինված հակամարտությունից տուժած երեխաներ,
4. ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ից տուժած երեխաներ,
5. հաշմանդամություն ունեցող երեխաներ,
6. տեղական ԾԽԵ խմբեր:

Համաձայն «Վորլդ Վիժըն» կազմակերպության ԾԽԵ ծրագրային մոտեցման ամփոփագրի՝ այդ սահմանման մեջ ներառված են՝ «այն երեխաները, որոնք բնակվում են մեկ հարկի տակ մեկ կամ մեկից ավելի հիվանդություն ունեցող, մահամերձ կամ վատառողջ անձանց հետ, ծնողագուրկ են, կամ ունեն հիվանդության պատճառով անգործունակ խնամակալներ, ինչպես նաև ծեր և թույլ խնամակալներ»³:

«Խոցելիության» սահմանման համար համապարփակ աշխատանք է իրականացվել Սքինների կողմից, ով խոցելի երեխաներին սահմանում է որպես «երեխաներ, որոնց հիմնական կենսական իրավունքներից որևէ մեկը բավարարված չէ»: Հետևաբար, բացի նրանից, որ ծնողակությունը դիտարկվում է որպես խոցելիության սահմանման կարևոր հենասյուն, այս սահմանումը կենտրոնանում է կախվածության երեք հիմնարար գործոնների վրա.

- նյութական գործոն՝ դրամ, սնունդ, հագուստ, կացարան, առողջապահություն և կրթություն,
- զգայական գործոն՝ խնամք, սեր, աջակցություն, զգացմունքների արտահայտման և զսպման անձնական տարածություն,
- սոցիալական գործոն՝ հասակակիցների աջակցության խմբի բացակայություն, վարքային նմուշների, բարդ իրավիճակներում կողմնորոշվելու, ռիսկերի կառավարման ուղեցույցների բացակայություն⁴:

² World Bank. OVC Core Definitions. [Last accessed on 2015 Apr 15]. Available from: <http://info.worldbank.org/etools/docs/library/164047/howknow/definitions.htm>

³ Geneva: World Vision International/HIV/AIDS Hope Initiative; 2002. World Vision. Summary of OVC Programming Approaches.

⁴ Skinner D, Tsheko N, Mtero-Munyati S, Segwabe M, Chibatamoto P, Mfecane S, Chandiwana B, Nkomo N, Tlou S, Chitiyo G. Towards a definition of orphaned and vulnerable children, AIDS Behav. 2006 Nov; 10(6): 619-26.

Համաձայն «Մեյլ դը չիդրեն» կազմակերպության կողմից տրված սահմանման՝ առավել զրկվածը և խոցելի են այն երեխաներն, ովքեր գոյատևելու, սովորելու և պաշտպանված լինելու առավել քիչ հնարավորություն ունեն։ Բազմաթիվ գործոններ կան, որոնք պայմանավորում են երեխայի խոցելիությունն ու մարզինալացումը, ներառյալ եկամուտները, աղքատությունը, գենդերային գործոնը, աշխարհագրությունը, էթնիկությունը կամ խավը, հաշմանդամությունը։ Հաճախ հենց այս գործոնների համադրությունն է բերում երեխաների գոյատևման, սովորելու կամ պաշտպանված լինելու իրավունքի ոտնահարմանը։

Տվյալ հետազոտության շրջանակում որպես առավել խոցելի երեխաներ են սահմանվել աղքատ երեխաները, հաշմանդամություն ունեցող երեխաները, տեղահանված կամ փախստական երեխաներն ու փոքրամասնության խմբերի երեխաները։

Գնահատումն իրականացվել է Հայաստանի 10 մարզերի և մայրաքաղաք Երևանի բոլոր այն ընտանիքներին, որոնք ունեն 3-5 տարեկան երեխաներ և որոնք հանդիսանում են 2016-2017թթ. նախադպրոցական կրթության և ՎՄՁ փաստացի կամ պոտենցիալ շահառուներ։ Հետևաբար, գնահատման հիմնական թիրախ են հանդիսացել ՎՄՁ ծառայությունների պոտենցիալ շահառուները, հատկապես սոցիալապես խոցելի և հատուկ կարիքներ ունեցող ընտանիքները, ինչպես նաև շահագրգիռ խմբերը, այդ թվում՝ համապատասխան նախարարությունները, տեղական, մարզային և հանրապետական իշխանության մարմինները, գործընկեր կազմակերպություններն ու տեղերում ծառայություն մատուցողները։

Գնահատման հիմնահարցերն ուղղված էին հետևյալին.

- որքան է Հայաստանում նախադպրոցական կրթական ծառայություններում ընդգրկվածության/մուտքի համընդհանուր ցուցանիշը, մասնավորապես՝ գյուղական և քաղաքային բնակավայրերում,
- պոտենցիալ շահառուների դժվարության խմբերն ունեն սահմանափակ մուտք կամ առհասարակ մուտքի բացակայություն դեպի նախադպրոցական կրթական ծառայություններ և ինչո՞ւ,
- որո՞նք են ծառայություններից դուրս մնալու հիմնական պատճառները,
- որո՞նք են ոլորտում պետության կողմից իրականացված ընթացիկ քայլերը,
- որքանո՞վ են քաղաքականության և պրակտիկայի մեջ տեղի ունեցող փոփոխությունները բավարարում թիրախային խմբի կարիքները,
- որո՞նք են թիրախային խմբի հիմնական կարիքներն ու սպասումները, և ինչպե՞ս կարող են դրանք բավարարվել սոցիալական ծառայությունների և այլ բարեփոխումների համատեքստում։

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գնահատման մեթոդաբանությունը հիմնված է համակցված մեթոդների մոտեցման վրա, որը թույլ է տալիս համադրել (ա) քանակական տվյալների հավաքագրումը՝ քանակական մեթոդների կիրառմամբ, և (բ) խորքային տեղեկատվության հավաքագրումը՝ որակական մեթոդների կիրառմամբ։ Այս մոտեցումը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել հիմնախնդրի մասին՝ ապահովելով ինչպես գնահատվող ցուցանիշների վիճակագրական նշանակալիությունը, այնպես էլ թիրախում գտնվող խմբերի և համայնքների կենսափորձի և միջավայրային համատեքստի մասին պատկերացում։ Համակցված մեթոդներով հետազոտական ռազմավարությունը կառուցված է շարունակական և հաջորդական մոտեցումների տարրերի համադրմամբ։ Ըստ այդմ, սկզբնական փուլում կատարվել է հիմնականում որակական տվյալների հավաքագրում (օգտագործելով փաստաթղթերի ավանդական վերլուծության մեթոդը, կլոր-սեղան քննարկումների ու ոչ ֆորմալ հարցազրույցների մեթոդներն իրագործող և գործընկերային հանրույթների ներկայացուցիչների շրջանում)։ Այնուհետև հետազո-

տությունը մեկնարկել է քանակական մեթոդներ (դեմ առ դեմ ձևայնացված հարցազրույցներ Հայաստանում 3-5 տարեկան երեխաներ ունեցող փաստացի/պոտենցիալ շահառու-ընտանիքների հետ), որոնց զուգընթաց իրականացվել են առանցքային տեղեկատուների կիսաձևայնացված հարցազրույցներ սոցիալական ծառայությունների, կրթության վարչությունների, ՎՄՁ ծառայությունների մատուցող գործակալությունների ներկայացուցիչների հետ: Վերջին փուլում առանձնացվեցին նախադպրոցական կրթությունից դուրս մնացած ընտանիքներ, որոնց անդամների հետ անցկացվեցին խորացնող ֆոկլոր խմբային քննարկումներ (ՖԽԲ): ՖԽԲ-ները ապահովեցին հավելյալ խորքային տվյալներ՝ դեպքեր/պատումներ հետազոտության արդյունքներն ընդհանրացնելու և եզրահանգումները ստուգելու համար: Այսպիսով, **հաշվետվությունում ներկայացված բացահայտումները հիմնված են փորձագիտական հարցազրույցներից, դեմ առ դեմ ձևայնացված հարցազրույցներից⁵ և ֆոկլոր խմբային քննարկումներից ստացված տվյալների վրա:**

ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՈՒՄՆ ՈՒ ԸՆՏՐԱՆՔԸ

Դաշտային աշխատանքներն իրականացվել են 2016թ.-ի նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 28-ն ընկած ժամանակահատվածում Հայաստանի 10 մարզերում և մայրաքաղաք Երևանում: Հետազոտության հիմնական գործիքներն էին՝ (1) ձևայնացված դեմ առ դեմ հարցազրույցի հարցաթերթ՝ հետևյալ թեմատիկ ուղղություններով. նախադպրոցական կրթության մասին իրազեկվածությունն ու ընկալումը, նախադպրոցական կրթության մատչելիությունն ու որակը, տնային տնտեսության եկամուտներն ու ծախսերը, հարցվողի սոցիալ-ժողովրդագրական տվյալները, (2) համայնքային ու մարզային տեղական ինքնակառավարման մարմինների, համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ դեմ առ դեմ հարցազրույցի կիսաձևայնացված ուղեցույցներ՝ հետևյալ թեմատիկ ուղղություններով. նախադպրոցական կրթական ծառայություններից օգտվողների վերաբերյալ վիճակագրական և այլ ցուցանիշներ, դուրս մնացածների և չընդգրկման պատճառների վերաբերյալ տեղեկատվություն, ինստիտուցիոնալ մակարդակում հիմնախնդիրների և գործնական քայլերի վերաբերյալ տեղեկատվություն, (3) ՖԽԲ ուղեցույց չընդգրկված ընտանիքների համար՝ վիզուալացման տեխնիկաների կիրառությամբ: Դաշտային աշխատանքների մեկնարկից առաջ բոլոր գործիքներն անցել են փորձարկում և վերանայվել փորձարկման արդյունքների հիման վրա: Ստանդարտացված հարցաթերթի փորձարկումն իրականացվել է 18 փորձնական հարցազրույցների միջոցով Երևանում և Երևանին մոտ գտնվող Կոտայքի մարզի 2 բնակավայրերում (Կաթնաղբյուր (գործում է սեզոնային մանկապարտեզ) և Իգդիր (գործում է փոքր մանկապարտեզ)): Մնացած գործիքների փաթեթները փորձարկվել են ընտրանքային փոքր ծավալներով: Հարցազրույցավարները մասնակցել են երկու հիմնական վերապատրաստման դասընթացների: Ընդհանուր առմամբ, դաշտային աշխատանքներին մասնակցել են 9 հարցազրույցավար, 2 ՖԽԲ մոդերատոր և 2 որակական հարցազրույցավար:

Հարցման ընտրանքի ծավալը կազմել է 600 (իրագործված ընտրանքը՝ 599) տնային տնտեսություն, 95% վստահելիության միջակայքում՝ սահմանային սխալի $\pm 4\%$ մեծությամբ: Ընտրանքի հաշվարկն ու դրա բաշխումը ՀՀ մարզերով հիմնված է Ազգային վիճակագրական ծառայության 2016թ.-ի պաշտոնական տվյալներին համապատասխան՝ 3-5 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքների թվի մասին տվյալների վրա⁶:

⁵ Տես Հավելված 1. Հարցաթերթ

⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 2016 <http://www.armstat.am/file/doc/99499383.pdf>

Ընտրանքը կառուցվել է բազմաստիճան հավանականային ներկայացուցչական ընտրանքային ռազմավարության հիման վրա: Ընտրանքի ծածկույթն է ՀՀ ողջ տարածքը՝ ներառյալ գյուղական բնակավայրերը: Ընտրանքի կառուցման ընթացակարգերը ներառել են հետևյալ փուլերը.

ՔԱՅԼ 1 - Ընտրության առաջնային միավորների կլաստերների բաշխում՝ հիմնված Հայաստանի գյուղական ու քաղաքային բնակավայրերում մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակի վրա:- Բաշխումը հետևյալն է.

- Երևան – 30% կամ 180 հարցազրույց,
- մարզային քաղաքային բնակավայր – 33% կամ 198 հարցազրույց,
- մարզային գյուղական բնակավայր – 36% կամ 216 հարցազրույց:

Աղյուսակ 1. Ընտրանքում ՏՏ-ների բաշխումն՝ ըստ բնակավայրերի տիպի

Բնակավայրի տիպը	Թիվ	Տոկոս
Քաղաքային	381	63.6
Գյուղական	218	36.4
Ընդամենը	599	100

ՔԱՅԼ 2 - Ընտրանքային առաջնային միավորների ընտրություն. հաշվի առնելով բնակավայրերում պետական մանկապարտեզների առկայությունը՝ ընտրվեցին 2-ական գյուղական և քաղաքային բնակավայրեր (որտեղ մանկապարտեզ առկա է և առկա չէ)⁷: Նախադպրոցական կրթական հաստատությունների պաշտոնական ցանկը վերստուգվել է դաշտային աշխատանքից առաջ հետազոտական թիմի կողմից՝ ընտրության չափանիշներին համապատասխանելու տեսանկյունից:

Աղյուսակ 2. Ընտրանքի բաշխումն՝ ըստ ՀՀ մարզերի և պետական մանկապարտեզների առկայության

ՄԱՐԶ		Քանակ	Տոկոս
Արմավիր	Չկա մանկապարտեզ	10	24,4
	Կա մանկապարտեզ	31	75,6
	Ընդամենը	41	100,0
Արագածոտն	Չկա մանկապարտեզ	10	23,8
	Կա մանկապարտեզ	32	76,2
	Ընդամենը	42	100,0
Արարատ	Չկա մանկապարտեզ	10	26,3
	Կա մանկապարտեզ	28	73,7
	Ընդամենը	38	100,0
Գեղարքունիք	Չկա մանկապարտեզ	10	25,0
	Կա մանկապարտեզ	30	75,0
	Ընդամենը	40	100,0

⁷ Օգտագործվել են ՀՀ Կրթության և գիտության նախարարության 2016թ.-ի պաշտոնական տվյալները, տես՝ Նախադպրոցական կրթական հաստատությունների ցանկը՝ <http://edu.am/index.php/am/about/view/105>.

Կոտայք	Չկա մանկապարտեզ	11	25,6
	Կա մանկապարտեզ	32	74,4
	Ընդամենը	43	100,0
Լոռի	Չկա մանկապարտեզ	10	23,8
	Կա մանկապարտեզ	32	76,2
	Ընդամենը	42	100,0
Շիրակ	Չկա մանկապարտեզ	10	23,8
	Կա մանկապարտեզ	32	76,2
	Ընդամենը	42	100,0
Սյունիք	Չկա մանկապարտեզ	10	23,8
	Կա մանկապարտեզ	32	76,2
	Ընդամենը	42	100,0
Տավուշ	Չկա մանկապարտեզ	10	24,4
	Կա մանկապարտեզ	31	75,6
	Ընդամենը	41	100,0
Վայոց Ձոր	Չկա մանկապարտեզ	10	23,8
	Կա մանկապարտեզ	32	76,2
	Ընդամենը	42	100,0
Երևան	Կա մանկապարտեզ	180	100,0

ՔԱՅԼ 3 - Տնային տնտեսությունների ընտրություն. պատահական ընտրանքի գններատորի միջոցով ընտրվել են 2 մեկնարկային կետեր՝ հասցեներ, որոնցից կատարվել է երթուղու ուղիվագծումը՝ աջակողմյան պտույտի սկզբունքով՝ ըստ համապատասխան քայլի: Հարցազրույցները տեղերում անց են կացվել միայն 3-5 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսություններում: Հարցազրույցի անցկացման անհնարինության դեպքերում փոխարինման համապատասխան քայլով ընտրվել են հաջորդ հասցեները: Արդյունքում թիրախային տնային տնտեսությունների կազմում միջինում եղել է 6 անդամ, մինչև 18 տարեկան երեխաների միջին թիվը SS-ում կազմել է 2:

ՔԱՅԼ 4 - Հարցվողների ընտրություն. որպես դեմ առ դեմ հարցազրույցի հարցվող ընտրվել են SS այն անդամները, ովքեր հիմնականում զբաղվում են ընտանիքում երեխաների խնամքով և առավել իրազեկ են երեխաների առօրյայից և ՎՄԶ-ից: Ընտրանքում հարցվողների բաշխումը՝ ըստ սեռի, տարիքի, զբաղվածության, 3-5 տարեկան երեխայի հետ նրանց առնչության և այլն, ներկայացված է Հավելված 2-ի Աղյուսակներ 3-9-ում:

Դեմ առ դեմ հարցազրույցների տվյալները մուտքագրվել են SPSS ծրագրային միջավայր՝ շտեմարանի օգտագործման պատշաճ ուղեցույցի մշակմամբ: Կիսափակ հարցերի դեպքում «այլ» պատասխաններից ստացված առավել տարածված բառային տարբերակները ներկայացված են Հավելված 4-ում:

Կիրառվել է որակի վերահսկման բազմամակարդակ մոդել, որի շնորհիվ կրկնակի ստուգման և հետալսների միջոցով վերահսկվել է հարցազրույցների մոտավորապես 20%: Իսկ որակի վերահսկման խմբի կողմից տվյալների մուտքագրումից առաջ շտկվել և տրամաբանական ստուգման են ենթարկվել բոլոր (100%) հարցաթերթերը: Օգտագործվել է տվյալների կրկնակի մուտքագրման ընթացակարգ՝ SPSS ֆորմատում համակարգչային սքրիպթավորման կիրառությամբ: Որակական տվյալների որակի ապահովման համար պարբերաբար կազմակերպվել են մոդերատորների/հարցազրուցավարների համար ներթիմային քննարկումներ: **Համակցված մեթոդաբանության հիմքում շարունակական և հաջորդական մոտեցումների զուգադրումը թույլ**

Է տվել ուժեղացնել գնահատման ռազմավարությունը՝ կատարելով տվյալների տրիանգուլյացիա ոչ միայն տարբեր աղբյուրների, այլև տարբեր մեթոդների և տարբեր հետազոտական խմբերի տվյալների համադրությամբ:

Որակական բաղադրիչի համար կիրառվել է հետևյալ ընտրանքային ռազմավարությունը.

1. «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության հետ համագործակցությամբ հետազոտական խումբը ձևավորել է առանցքային տեղեկատուների/փորձագետների 20 հոգանոց անվանացանկ՝ հիմնականում ընդգրկելով հետևյալ ոլորտները՝
 - a. տեղական և մարզային իշխանություններ,
 - b. պատասխանատու գերատեսչությունների ներկայացուցիչներ,
 - c. Հայաստանում ՎՄԶ ոլորտի փորձագետներ:

Ընտրվել է 10-ական փորձագետ ազգային և մարզային մակարդակներում (յուրաքանչյուր մարզից 1-ական փորձագետ): Ընդամենը անց է կացվել և ձայնագրվել 20 կիսաձևայնացված հարցազրույց:

2. Ընդամենը 9 ՖԽԲ-ներ են անցկացվել այն ընտանիքների անդամների հետ, ովքեր չեն օգտվում մանկապարտեզների ծառայություններից: ՖԽԲ ընտրանքում ընդգրկվել են հետևյալ մարզերը. Տավուշ, Վայոց Ձոր և մայրաքաղաք Երևան: Գաղափարն այն էր՝ որպեսզի մի կողմից ներկայացված լինեն երկրի հյուսիսը, հարավն ու կենտրոնը (Տես Աղյուսակ 3-ը), իսկ մույս կողմից ընտրվեն այնպիսի մարզեր, որտեղ սոցիալապես խոցելի խմբերը առավել գերակշռող են: Ուստի, Տավուշը ընտրվել է որպես հայ-ադրբեջանական սահմանային մարզ, որի որոշ համայնքներ գտնվում են պարբերական կրակի տակ, առկա են տեղահանվածներ, աղքատության բարձր մակարդակ, ինչպես նաև զրանցվել են 2 և ավելի չափանիշներով երեխաների խոցելիության ամենաբարձր ցուցանիշները (մարզի երեխաների մոտավորապես 76%-ը⁸): Վայոց Ձորի մարզն ընտրվել է՝ հաշվի առնելով աղքատության բարձր ցուցանիշները, ազգաբնակչության մեծ ցրվածքը, փոքր ու նոսր տեղակայված բնակավայրերը, ինչպես նաև երեխաների խոցելիության բարձր մակարդակը: Մայրաքաղաք Երևանը, հանդիսանալով երկրի առավել ուրբանացված ու խիտ բնակեցված քաղաքը, թիրախավորվել է, որպեսզի ՖԽԲ-ներ անցկացվեն ոչ միայն աղքատ քաղաքաբնակների շրջանում, այլև ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքների, ինչպես նաև նախադպրոցական կրթությունից դուրս մնացած բարեկեցիկ ընտանիքների հետ: Վայոց Ձորում հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ պաշտոնական տվյալների բացակայության և մարզում հատուկ կարիքներով ընտանիքների հետ աշխատող կազմակերպությունների բացակայության պատճառով, որոշում կայացվեց ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքների ՖԽԲ-ի մասնակիցներին անդամագրել Արարատի մարզի հարակից բնակավայրերից: **ՖԽԲ-ների մասնակիցներն ընտրվել են 3 հիմնական կատեգորիաներից. աղքատ ընտանիքներ (որտեղ մեկ շնչի հաշվով ամսական ծախսերը ցածր են աղքատության վերին ընդհանուր գծից կամ 40,000 ՀՀ դր-ից), բարեկեցիկ ընտանիքներ (որտեղ մեկ շնչի հաշվով ամսական ծախսերը բարձր են միջին ամսական անվանական աշխատավարձի չափից կամ 158.000 ՀՀ դր-ից) և 3-5 տարեկան ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքներ:**

⁸ Համաձայն «Մանկական աղքատությունը Հայաստանում» բազմակի և համընկնող խոցելիության ազգային վերլուծության, ՅՈՒՆԻՍԵՖ, 2016

Աղյուսակ 3. Ֆոկուս խմբային քննարկումների ընտրանքի բաշխումը

Թիրախ	ՖԻՔ աղքատ ընտանիքների անդամների հետ	ՖԻՔ բարեկեցիկ ընտանիքների անդամների հետ	ՖԻՔ ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքների հետ	Ընդամենը ՖԻՔ
Հյուսիս/Տավուշի մարզ	1	1	1	3
Հարավ/Վայոց Ձորի և Արարատի մարզեր	1	1	1	3
Կենտրոն/ Երևան	1	1	1	3
Ընդամենը	3	3	3	9

Յուրաքանչյուր ՖԻ կազմված էր քաղաքային և գյուղական բնակավայրերից 5-8 մասնակցից: Մասնակիցներն ընտրվել են թիրախային տարածքներում ԿԱՊԿՈՒ և աղքատ բնակչության հետ աշխատող կազմակերպությունների և գործակալությունների ցանկերից: ՖԻՔ-ների ամբողջական սղագրությունը մշակվել է հայերեն տարբերակով, կատարված ձայնագրություններն արխիվացվել են:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ, ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ, ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Դաշտային աշխատանքներ իրագործող թիմը կապ է հաստատել ընտրված համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ներկայացնելով «Մեյլ դը չիլդրեն» կազմակերպության կողմից տրամադրված պաշտոնական նամակը, և խնդրել աջակցություն դաշտային աշխատանքի կազմակերպման և ՖԻՔ անցկացման համար համայնքային որևէ շինության տարածքում (օրինակ՝ գյուղապետարանի շենք, բժշկական և մշակութային կենտրոններ, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի տեղի գրասենյակներ և այլն): **Ընդհանուր առմամբ, գյուղական բնակչությունն առավել բարյացակամ էր տրամադրված, քան քաղաքային բնակչությունը: Երեխաներ ունեցող ընտանիքների մեծ մասին հետաքրքրում էր հետազոտության թեման, նրանք ցանկանում էին մասնակցել հարցմանը և կիսվել նախադրոշմային կրթության հետ կապված իրենց խնդիրներով ու փորձով: Ձևայնացված հարցազրույցի միջին տևողությունը կազմել է 12 րոպե: Փորձագիտական հարցազրույցները միջինում տևել են 40-ից 60 րոպե: Ֆոկուս-խմբերի միջին տևողությունը կազմել է 65 րոպե:**

Դաշտի սահմանափակումների և մարտահրավերների շարքում արժի առանձնացնել հատուկ կարիքներ ունեցող ընտանիքների հավաքագրման դժվարությունները: Մասնավորապես՝ Վայոց Ձորի մարզում անհնար էր գտնել որևէ պաշտոնական տվյալների շտեմարան ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքների վերաբերյալ կամ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանք տանող որևէ ակտիվ կազմակերպություն: Վայոց Ձորում հաշմանդամություն ունեցող երեխաների վերաբերյալ պաշտոնական տվյալների բացակայության և մարզում հատուկ կարիքներով ընտանիքների հետ աշխատող կազմակերպությունների բացակայության պատճառով որոշում կայացվեց ԿԱՊԿՈՒ երեխաներ ունեցող ընտանիքների ՖԻՔ-ի մասնակիցներին անդամագրել Արարատի մարզի հարակից բնակավայրերից: Դեմ առ դեմ ձևայնացված հարցազրույցների ընտրանքի իրականացումը խնդրահարույց էր Երևանում, որտեղ շատ դժվար էր թիրախավորել մինչև 6 տարեկան երեխաներ ունեցող ընտանիքներին և մուտք գործել մայրաքաղաքի կենտրոնական համայնքներում գտնվող շինություններ:

Ըստ Հավելված 2-ի Աղյուսակներ 3-4-ի՝ ընտրանքում հարցվողների 78.1%-ը կազմել են կանայք, և 63.2%-ը՝ 18-35 տարեկանները, ինչը պայմանավորված է երեխայի խնամքի և առօրյայի վերաբերյալ առավել իրազեկ ՏՏ անդամներին ընտրելու պահանջով: Ընտրված հարցվողների 82%

երեխայի ծնողներն են (Տես Հավելված 2, Աղյուսակ 5): Այնուամենայնիվ, հարցաշարի որոշ հատվածներում (ինչպիսին օրինակ՝ ծախսեր և եկամուտներ բաժնում) թույլատրվել էր տեղեկատվությունը հստակեցնել ՏՏ այլ անդամների հետ:

Այլ սահմանափակումներից անհրաժեշտ է առանձնացնել պետական կառավարման մարմինների կողմից բավարար տեղեկատվություն տրամադրելու ցանկության բացակայությունը, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները հրաժարվեցին տրամադրել որևէ վիճակագրական տվյալ (տվյալները հավաքագրվեցին այլ աղբյուրներից), մինչդեռ մարզերից մեծ մասում տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներն առավել համագործակցող էին և աջակցեցին թիմին թեմայի վերաբերյալ վիճակագրության հավաքագրման գործում:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՉԱՓՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ուսումնասիրության շրջանակում աղքատության սահմանումն ու դրա չափումը հիմնված է ոչ թե բացարձակ աղքատության չափման մեթոդաբանության վրա, այլ հարաբերական աղքատության և համեմատական մոտեցման վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս հետազոտողին հավաքագրված տեղեկատվությունն օգտագործել համեմատական հետազոտությունների համար՝ անկախ տարադրամի փոխարժեքի տատանումներից, աղքատության պարենային գծի պաշտոնական սահմանումից և պարենային զամբյուղի հիմնարար մեծությունից: Տնային տնտեսության կենսամակարդակն ու սոցիալական դիրքը գնահատվել են որպես սննդի վրա կատարված միջին ամսական ծախսի համամասնությունը ընդհանուր այլ ծախսերից: Այս մեթոդաբանության կիրառման դեպքում իրական եկամտի չափը կամ եկամտի աղբյուրները թաքցնելու հարցվողի մտադրությունը ազդեցություն չի թողնում վերջնական չափման արդյունքի վրա: Գնահատման արժեքը հաշվարկվում է [0:1] միջակայքում, որտեղ 1-ը վերաբերում է այն տնային տնտեսություններին, որոնք ողջ բյուջեն սպառում են սննդի վրա, իսկ 0-ն վերաբերվում է այն ՏՏ-ներին, որոնց սննդի սպառման վրա ծախսվող գումարը ընդհանուր ծախսերից կազմում է 0-ի ձգտող մեծություն (Տես Աղյուսակ 4): Իրականում անհնար է ստանալ բացարձակ արժեքներ հարաբերականորեն փոքր ընտանիքների համար, սակայն այս մոտեցումը հնարավորություն է տալիս չափել աղքատությունը՝ անտեսելով անվանական ընթացիկ գներն ու փոխարժեքի տատանումները, աշխարհագրական դիրքի առանձնահատկություններն ու համեմատության համար անհրաժեշտ այլ գործոններ: **Հետևաբար, ելնելով հարցման վերլուծական նպատակներից՝ որպես աղքատ տնային տնտեսություններ են սահմանվել ընտրանքում հայտնված այն տնային տնտեսությունները, որոնց ընդհանուր ամսական եկամուտների ավելի քան 62%-ը ծախսվում է սննդի վրա: Հաշվարկը հիմնված է 2 հիմնական փոփոխականների վրա. (ա) սննդի և այլ պարագաների վրա սպառման ամսական ծախսեր (բ) տարբեր աղբյուրներից ստացված ՏՏ ամսական եկամուտների հանրագումար⁹ (Տես Աղյուսակ 4): Ելնելով վերլուծական նպատակներից՝ ընտրանքը բաժանվել է երկու հիմնական կատեգորիաների՝ աղքատներ (սննդի ծախսը կազմում է ընդհանուր ծախսից 62% և ավելի) և ոչ աղքատ (սննդի ծախսը կազմում է 62%-ից պակաս) (տես Աղյուսակ 5):**

⁹ Մանրամասների համար տես՝ Հավելված 1. Հարցաթերթ:

Աղյուսակ 4. Ընտրանքի բաշխումը՝ ըստ սննդի ամսական ծախսի հարաբերության ընտանիքի ընդհանուր եկամուտների մեծությանը

Համամասնությունը (բիսար) 0-ից 1	Ընդամենը
<= ,35	9.4%
,36 - ,42	9.4%
,43 - ,45	9.7%
,46 - ,48	9.7%
,49 - ,52	10.9%
,53 - ,56	14.7%
,57 - ,61	6.9%
,62 - ,67	10.6%
,68 - ,74	8.4%
,75+	10.3%
Ընդամենը	100.0%

Աղյուսակ 5. Ընտրանքի բաշխումն աղքատ և ոչ-աղքատ ՏՏ-ների

ՏՏ տիպը	Տոկոսը ընտրանքում
Աղքատ	60.8%
Ոչ աղքատ	39.2%
Ընդամենը	100.0%

ԳԼՈՒԽ II

ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համատեքստ

Համաձայն ՎՄՁ ժամանակակից տեսությունների՝ նախադպրոցական կրթությունը դրական ազդեցություն ունի երեխաների զարգացման վրա: Նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածությունը կարող է ընդլայնել երեխայի ճանաչողական կարողությունները, գրագիտությունն ու հաջողության հասնելու համար անհրաժեշտ սոցիալական հմտությունները, ինչպես նաև խթանել դպրոցական ձեռքբերումները տարրական դասարաններում՝ ի վերջո նվազեցնելով հատուկ կրթության կարիքներն ու նույն դասարանում մնալու հավանականությունը, ավելացնելով դպրոցական առաջադիմության ներուժը: Հատկապես նպատակահարմար է համարվում կարիքավոր կամ խոցելի խմբերի երեխաների շրջանում նախադպրոցական կրթության հասանելիության խթանումը: Խոցելի ընտանիքների համար նմանատիպ ծրագրերի իրականացումը դարձել է առաջնային Հայաստանում ոլորտի ակտիվ դերակատարների համար, քանի որ տնային միջավայրում երեխաները չեն նախապատրաստվում դպրոցին: Ենթադրվում է, որ ԿԱԿՈՒ կամ սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների համար որակյալ նախադպրոցական կրթության տրամադրման դեպքում նրանք լիովին պատրաստ կլինեն ստանալու պարտադիր կրթություն այլ ընտանիքների երեխաների հետ միասին: Այս բոլոր գաղափարները հետազոտության փորձագետների կողմից պատշաճ մակարդակով ընկալվել և սահմանվել են որպես հիմք Հայաստանում նախադպրոցական կրթության հայեցակարգի համար: **Ինչպես նշված էր նախորդ գլխում՝ 20 հիմնական առանցքային տեղեկատու/փորձագետներից բաղկացած ցանկը ներառել է հետևյալ ոլորտները՝ համայնքային և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, համապատասխան նախարարությունների, գերատեսչությունների և գործընկեր կազմակերպությունների, Հայաստանում ՎՄՁ ոլորտում գործունեություն ծավալող ՀԿ-ների ներկայացուցիչներ: Ցուցակագրվածներից 10-ն ընտրվել են որպես ազգային մակարդակի փորձագետ, և 10-ը՝ տեղական մակարդակի (1-ական փորձագետ ՀՀ յուրաքանչյուր մարզի համար):**

Սովետական Հայաստանն ուներ նախադպրոցական կրթության հարուստ ավանդույթ՝ հիմքում ունենալով պետական մանկապարտեզները, որտեղ մինչև 6 տարեկան երեխաները ստանում էին համապատասխան խնամք և դպրոցին նախապատրաստող գիտելիք: Անկախ Հայաստանը լրջագույն սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամի առջև կանգնեց 1991թ. սկսած, և նախադպրոցական կրթության կառավարումը պետության կողմից բավականին բարդացավ: 1996թ. ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, և վաղ մանկության զարգացման համար պատասխանատու դարձավ համայնքը, որի հետևանքով ՎՄՁ ծառայությունները սկսեցին ֆինանսավորվել տեղական բյուջեի հաշվին՝ ծնողների կողմից վճարովի հիմունքներով: Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման մարմինները ոչ միշտ էին տիրապետում բավարար վարչական, մասնագիտական ու ֆինանսական միջոցների մանկապարտեզների գործունեությունը պատշաճ կազմակերպելու համար: Արդյունքում մանկապարտեզներում երեխաների ընդգրկվածությունը խիստ նվազեց:

Նախադպրոցական կրթության հայեցակարգը. զարգացումներն ու միտումները

Հետազոտության ընթացքում ոլորտի 20 փորձագետների հետ անցկացվել է հարցազրույց նախադպրոցական կրթության տարբեր ասպեկտների մատչելիության, խնդիրների և հետագա զարգացման հեռանկարների վերաբերյալ: **Ըստ հետազոտության արդյունքների՝ պետք է փաստել, որ թե՛ ազգային, թե՛ տեղական մակարդակի տարբեր ոլորտներից ընտրված փորձագետները շեշտադրել են, որ Հայաստանում որոշում կայացնողների շրջանում նկա-**

տելի է նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը մեծացնելու և համընդհանուր կրթության հայեցակարգը զարգացնելու պատրաստակամությունն ու վճռականությունը: Այնուամենայնիվ, գործառնական մակարդակում նախադպրոցական կրթության հայեցակարգը դեռևս չունի հստակ տեսլական. համակարգի վերջին բարեփոխումները (հիմնված 2008-2015թթ զարգացման ռազմավարության վրա) ընթացքի մեջ են: Անկախ փորձագետներից շատերը նշել են **նախադպրոցական կրթության և մասնավորապես վաղ մանկության խնամքի (0-3 տարեկան երեխաների համար) բնագավառում թիրախավորված քաղաքականության բացակայության և գյուղական/քաղաքային բնակավայրերի միջև քաղաքականությունների ակնհայտ անջրպետի մասին:**

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ այս ոլորտի քաղաքականության վերջնական պատկերը հստակ չէ ո՛չ Հայաստանում աշխատող դոնոր կազմակերպությունների, ո՛չ համապատասխան նախարարությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների համար: Գլխավոր հակասությունը ծագում է պետական ու համայնքային բյուջենների սղության և միաժամանակ համընդհանուր նախադպրոցական կրթության սոցիալական պահանջի հստակ գիտակցման միջև: **ՀՀ Կառավարությունը փորձում է նախադպրոցական կրթությունը տեղայնացնել առավել համապարփակ՝ հիմնական և ավագ դպրոցի կրթության ռազմավարության համատեքստում՝ որդեգրելով, այսպես կոչված, «11+1» բանաձևը:** Բանաձևը ներկայացվել է 2016-2025թթ. Կրթության զարգացման ազգային ծրագրի նախագծում, որը հանձնվել է հանրային քննարկման: Պաշտոնական փաստաթուղթն ամբողջությամբ դեռևս չի տեղադրված համապատասխան նախարարությունների պաշտոնական կայքերում՝ հանրային օգտագործողների համար: Հետևաբար, ներքոնշյալ տեղեկատվությունը հիմնված է այն գնահատականների վրա, որոնք ստացվել են ծրագրի քննարկմանը մասնակից պետական և քաղաքացիական հասարակության փորձագետներից հետազոտության արդյունքում:

Փաստաթղթին իրազեկ փորձագետների կարծիքով՝ բանաձևի հիմքում դրված են մի շարք կարևոր պնդումներ, որոնք ներկայացված են ստորև: Միջնակարգ կրթությունը, որն սկսվում է 6 տարեկանից, պարտադիր է Հայաստանում, սակայն այն չի ներառում նախադպրոցական կրթությունը: Կրթության և գիտության նախարարությունը (ԿԳՆ) պատասխանատու է պետական դպրոցների և դրանց ծրագրերի համար, մինչդեռ նախադպրոցական ծառայությունները մատուցվում են համայնքային բյուջեններից՝ տեղական որոշում կայացնողների կողմից: Սակայն հարկ է նշել, որ ՎՄՁ հաստատությունների ուսումնական պլանները մշակվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից, իսկ ՎՄՁ անձնակազմը (դաստիարակներ, դաստիարակի օգնականներ) վերապատրաստվում են Կրթության ազգային ինստիտուտի (ԿԱԻ) կողմից, որը գործում է ՀՀ ԿԳՆ հովանու ներքո: Այնուամենայնիվ, Հայաստանի կողմից վավերացված բազմաթիվ միջազգային փաստաթղթերի համաձայն՝ Հայաստանը պարտավորվում է ապահովել երեխաներին նախադպրոցական գիտելիքով նախքան տարրական կրթության մեջ ընդգրկելը: 2016-2025թթ. Կրթության զարգացման ազգային ծրագրի նախագծով՝ առաջին դասարանին նախապատրաստող, այսպես կոչված, դպրոցահենք նախակրթարանների միջոցով նախատեսվում է ապահովել 5 տարեկանների ընդգրկվածությունը որոշ դպրոցներում՝ աստիճանաբար տարածելով մոտեցումը բոլոր մյուս դպրոցների վրա: **Նման մոտեցումը թույլ է տալիս հիմնական կրթության համակարգը կառուցել 11-ամյա հիմնական կրթության և 1-ամյա նախադպրոցական կամ դպրոցահենք կրթության (11+1 բանաձև) համադրման միջոցով՝ 12-ամյա պարտադիր կրթության շրջանակներում:**

Հայաստանի Կառավարությունը մի շարք օրենսդրական քայլեր է ձեռնարկել ընդլայնելու ՎՄՁ ձևաչափերը՝ սկզբում կենտրոնանալով մանկապարտեզների վրա, որոնք ավանդաբար եղել են Սովետական Հայաստանի նախադպրոցական կրթության իրացման հիմնական ձևը, այնուհետև ցուցաբերելով հետաքրքրություն նախադպրոցական կրթության այլընտրանքային

Ծախսարդյունավետ ծառայությունների հանդեպ: Պետական կառույցները ներկայացնող փորձագետներից շատերը բարձր գնահատեցին այլընտրանքային մոտեցումը՝ համարելով այն քիչ ծախսատար և առավել իրատեսական: Մյուս կողմից, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները մատնանշեցին ռազմավարության նեղ ուղղվածությունը, որն առաջնություն է տալիս նախադպրոցական պատրաստությանը, այլ ոչ թե՛ վաղ մանկության խնամքին: Որպես փաստ պետք է նշել, որ ռազմավարությունը որևէ քայլեր չի նախատեսում մինչև 4 տարեկան երեխաների համար: Դեռևս հստակ չէ, թե ինչպես են բավարարվելու մինչև 5 տարեկան երեխաների կարիքները:

Այսպիսով, ըստ փորձագիտական գնահատման՝ առաջիկա տարիների համար նախադպրոցական կրթության զարգացման առավել իրատեսական սցենարը ներառում է հետևյալ միտումները (տես Պատկեր 1)։



Պատկեր 1 ՎՄՁ ռազմավարության հիմնական միտումները առաջիկա տարիների համար

Նախադպրոցական կրթության կառավարումը

Բոլոր փորձագետները հանգել են այն մտքին, որ հայաստանյան հասարակության շրջանում գոյություն ունի նախադպրոցական կրթության և ՎՄՁ-ի նկատմամբ մեծ պահանջարկ, մինչդեռ ծառայությունների առաջարկն ու դրանց որակը բավարար չեն: Հարցված բոլոր փորձագետ-

ները նշում են, որ այն կարծրատիպը, թե հայ ընտանիքում ինստիտուցիոնալ ծառայությունների համեմատ գերադասվում է տնային պայմաններում խնամքը, և որ ծնողները նախընտրում են իրենց երեխաներին չուղարկել նախադպրոցական հաստատություններ, չի համապատասխանում իրականությանը ո՛չ մայրաքաղաքի, ո՛չ գյուղական ու քաղաքային բնակավայրերի համար, ինչպես նաև բարեկեցիկ ու աղքատ ընտանիքների դեպքում: Ըստ փորձագիտական գնահատման՝ խոցելի ընտանիքներն են հատկապես հետաքրքրված ստանալու կազմակերպված ՎՄՁ ծառայություն և նախադպրոցական կրթություն իրենց երեխաների համար: Շատ հաճախ կան ծառայություններ չեն գործում, կան էլ դրանք վճարովի հիմունքով են, և հասանելի չեն աղքատ ընտանիքներին: **Հետևաբար, նախադպրոցական կրթության մատչելիությունը սահմանափակված է ոչ թե ծնողների բացասական ընկալման կամ իրազեկվածության պակասի պատճառով, այլ տվյալ ծառայությունների մատուցման համար պետության և համայնքի մոտ անհրաժեշտ միջոցների սակավության կամ բացակայության պատճառով:**

Ցածր ընդգրկվածության ցուցանիշն¹⁰ արտացոլում է նախադպրոցական կրթության կառավարման վատ վիճակը, նախադպրոցական կրթության հաստատությունների սակավությունը, հատկապես գյուղական բնակավայրերում, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բյուջետային հատկացումներ կատարելու դժկամությունը: Համաձայն մարզային փորձագետների՝ հաճախ գյուղապետերը հրաժարվում են ծախսեր պլանավորել մանկապարտեզների համար՝ վստահ լինելով, որ երեխաների նախադպրոցական կրթության կարիքները կհոգան ընտանիքում, մինչդեռ համայնքն ունի զարգացման համար «ավելի կարևոր» ուղղություններ: Տեղական իշխանությունները ՎՄՁ-ն չեն համարում սոցիալական ներդրումների կամ սոցիալական կապիտալի ձևավորման համար հարմար ոլորտ: Այն դիտարկվում է որպես ծախսաշատ ու ավելորդ մարտահրավեր համայնքային բյուջեի համար: Մարզերում մանկապարտեզներն անվճար չեն, սակայն չնչին վճարներն անգամ հասանելի չեն երիտասարդ ընտանիքների համար:

Այս առումով Երևանի քաղաքապետարանի փորձը բացառիկ է, քանի որ այն համայնքային բյուջեից հոգում է մանկապարտեզների բոլոր ծախսերը՝ ապահովելով անվճար ամենօրյա խնամք, սնունդ ու նախադպրոցական պատրաստվածություն: Միաժամանակ, քանի որ մանկապարտեզները գերծանրաբեռնված են, և դրանց նկատմամբ պահանջարկը մեծ է, Երևանի իշխանություններն ավելի շատ մտահոգված են ծառայությունների որակով և մուտքի/ընդունելության ընթացակարգերի թափանցիկության ապահովմամբ, քան, ընդհանուր առմամբ, 3-5 տարեկան երեխաների ընդգրկվածության մակարդակով:

Այսպես, Երևանի քաղաքապետարանի և ԿԳՆ-ի ներկայացուցիչների հետ հարցազրույցներից պարզ դարձավ, որ փորձագետները հիմնականում անտեղյակ են պաշտոնական ընդգրկվածության ցուցանիշներից ու ստանդարտներից: Քաղաքապետարանի ներկայացուցիչներն անգամ զարմացած էին, երբ լսեցին, որ, ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, 2015թ. Երևանում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածությունը 50%-ից պակաս է: Սա թույլ է տալիս եզրակացնել, որ պետական մարմիններում ավելի շատ մտահոգ են ձեռք բերվածը պահպանելով, քան նոր մոտեցումներ առաջադրելով՝ իրենց ծառայություններից դուրս մնացողներին ընդգրկելու համար:

¹⁰ Ընդգրկվածության ցուցանիշների մասին առավել մանրամասն տե՛ս՝ Գլուխ 2-ում:

Տվյալների շտեմարաններ

Ընդհանուր առմամբ, բոլոր փորձագետները նշեցին մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակի վերաբերյալ վիճակագրության և հստակ տվյալների պակասը, ինչպես նաև առանձին սոցիալական խմբերի համար ընդգրկվածության ցուցանիշների¹¹ բացակայությունը: Մանկահասակ բնակչության պաշտոնական թվաքանակը հաշվարկվում է ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2011թ Մարդահամարի տվյալների և տարեկան ընտրանքային հետազոտությունների (տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ)) և այլ աղբյուրների հիման վրա: Հետագա տարիների ցուցանիշները 2011թ.Մարդահամարի տվյալների հետ համադրելիությունն ապահովելու համար ՀՀ ԱՎԾ-ն վերահաշվարկում է ընթացիկ տարվա բնակչության թվի ցուցանիշները՝ օգտագործելով տարբեր աղբյուրներից ստացված տվյալներն ու 2011թ. ՀՀ Մարդահամարի տվյալները: Հետևաբար, ՀՀ ԱՎԾ-ի հարաբերական ցուցանիշները (ինչպիսին, օրինակ՝ ընդգրկվածության ցուցանիշն է), որոնք ստացվում են բնակչության թվից, նույնպես վերահաշվարկվում են: Հանրության համար հասանելի տարեգրքերում և այլ հաշվետվություններում տվյալները ներկայացնելիս ԱՎԾ-ն օգտագործում է տարիքային կատեգորիաներ: Մանկահասակ բնակչության վերաբերյալ բազմաչափ բաշխման աղյուսակներում օգտագործվում են 0-ից 4 և 5-ից 9-ը տարիքային միջակայքերը, ինչն անհնար է դարձնում այդ հաշվետվությունների օգտագործումը նախադպրոցական տարիքի երեխաների (0-5 տարեկան) վերաբերյալ տվյալներ ստանալու համար: Բաշխման այլ հիմքով տվյալներ ստանալու համար անհրաժեշտ է հատուկ պաշտոնական հարցում ուղարկել ԱՎԾ-ին: Այնուամենայնիվ, ԱՎԾ-ից կարելի է ստանալ նախադպրոցական կրթության մեջ մանկահասակ բնակչության ներգրավվածության վերաբերյալ որոշ տվյալներ, որոնք, սակայն, հիմնված են նախադպրոցական կրթության նեղացված սահմանման վրա, ըստ որի՝ այն նույնացվում է մանկապարտեզների միջոցով մատուցվող ծառայությունների հետ: Այլ ՎՄՁ ծառայություններում ընդգրկվածության վերաբերյալ վիճակագրությունը բացակայում է: Նախադպրոցական տարիքի երեխաներին առնչվող մանրամասն տվյալների պակասը ԱՎԾ տվյալների շտեմարաններում ակնհայտ է: Վիճակագրության մյուս աղբյուրը համայնքների կողմից տեղերում տարեկան հավաքագրվող տվյալներն են, որոնք պահպանվում են Տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից, բաց չեն հանրության համար և չեն ձևավորում համապարփակ շտեմարան: Փորձագետները կարևորել են վերջերս մշակված շտեմարանը՝ պետական մանկապարտեզներում ընդգրկված/հերթագրված երեխաների վերաբերյալ: Ինչպես նշեցին համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչները, ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող ՀԿ-ների և Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի (ԲՀՄԳ) ներկայացուցիչները՝ ԿԱՊԿՈՒ երեխաների և սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների վերաբերյալ ամբողջական տվյալների շտեմարաններ նույնպես չկան: Յուրաքանչյուր գործակալություն մշակում է սեփական տվյալների շտեմարանը (օրինակ՝ երեխաների կարիքների գնահատման շտեմարան, կամ «Փարոս» սոցիալական աջակցման համակարգի երեխաների տվյալների շտեմարան), որոնք չունեն համադրման հնարավորություններ և չեն վերաբերում նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի: Անհնար է հաշվարկել, թե մինչև 6 տարեկան երեխաների որ մասն է դուրս մնում բոլոր տիպի նախադպրոցական ծառայություններից, նրանց որ մասն են կազմում ԿԱՊԿՈՒ երեխաները, սիրիահայ ընտանիքների երեխաները կամ այլ խոցելի խմբերի երեխաները: Գոյություն ունեն որոշակի **տվյալների աղբյուրներ**, որոնք հատուկ մշակված են տարբեր գերատեսչությունների կարիքների համար (օրինակ՝ սոցիալական աջակցման ծառայությունների, տարածքային կառավարման գործակալությունների, ամբուլատորիաների, Սփյուռքի նախարարության և այլոց համար), որոնք **ամբողջական և փոխկապակցված չեն և չեն կարող կիրառվել նախադպրոցական կրթության մեջ մատչելիության խոչընդոտ ունեցող կամ չընդգրկված երեխաներին թիրախավորելու համար:**

¹¹ Առավել մանրամասն տվյալների համար տես էջեր 30-32:

Կենտրոնացված տվյալների շտեմարանի բացակայությունը պետք է որ լուրջ մտահոգություն լիներ քաղաքականություն մշակողների համար, սակայն, ցավոք, հետազոտությունը բացահայտեց պետական և տարածքային կառավարման մարմինների շրջանում թիրախային քաղաքականության կառավարման նկատմամբ հետաքրքրության պակաս: Պետական փորձագետները իրազեկված չեն նախադպրոցական կրթության մատչելիության ցուցանիշի մասին, և իրականում «վիճակագրությունը լուրջ չեն ընդունում»: Նրանք ավելի շատ տեղյակ են այն երեխաների մասին, ովքեր ընդգրկված են նախադպրոցական կրթության մեջ, քան հաստատություններից դուրս մնացածների մասով: **Նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաների բացահայտման և հավաքագրման մեխանիզմները բացակայում են, պատասխանատու մարմինները չունեն հատուկ լիազորություններ՝ կապված երեխաների կրթության իրավունքի պարտադիր իրացման հետ, քանի որ նախադպրոցական կրթությունը Հայաստանում պարտադիր չէ:** Միայն ծնողների կամավոր դիմումից հետո գործակալությունները իրավասու են կոնկրետ միջոցառումներ նախաձեռնել:

Այլընտրանքային նախադպրոցական ծառայություններ

Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներին թիրախավորելու բեռը հիմնականում ընկած է միջազգային կազմակերպությունների, ՀԿ-ների և հատուկ ֆոնդերի վրա: Այդ կազմակերպություններից ընտրված փորձագետները սահմանեցին Հայաստանում նախադպրոցական կրթությունից դուրս մնացողների հիմնական սոցիալական խմբերը.

- մարզերի փոքր, նոսր բնակեցված կամ հեռավոր գյուղական կամ քաղաքային բնակավայրերի երեխաներ,
- ԿԱՊԿՈՒ երեխաներ,
- սիրիահայ, իրաքյան փախստական երեխաներ,
- ծայրահեղ աղքատ կամ ռիսկային ընտանիքների երեխաներ (շեղվող վարք, ալկոհոլիզմ, հատուկ հաստատություններում գտնվող երեխաներ և այլն):

Տարբեր նախագծեր ու փորձնական ծրագրեր են իրականացվում վերոնշյալ խոցելի խմբերից յուրաքանչյուրի համար: Ամենախոշոր ծրագիրն իրականացվում է այն բնակավայրերի համար, որտեղ չկան գործող մանկապարտեզներ: Այդ ծրագիրն իրականացվում է Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկային ծրագրի 1 և 2-ի աջակցման շնորհիվ: 2010-2014թթ ընթացքում հիմնվել են ավելի քան 280 դպրոցահենք նախակրթարաններ ՀՀ ԿԳՆ ԾԻԳ-ի կողմից՝ ներգրավվելով 5-6 տարեկան ավելի քան 8.000 երեխաների: Մինչև 2019թ.-ը նախատեսվում է Հայաստանի մարզերում նախակրթարանների թիվն ավելացնել ևս 120-ով: Նախակրթարաններ բացվել են արդեն Շիրակի, Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի, Լոռվա և Արմավիրի մարզերում:

2011-2016թթ. «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը հիմնել է 21 դպրոցահենք նախակրթարաններ: Այս զարգացումներին զուգահեռ՝ Համաշխարհային Բանկի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ սերտ համագործակցությամբ կարևոր աշխատանքներ տարվել են նախադպրոցական կրթության չափորոշիչների սահմանման և կատարելագործման ուղղությամբ: ՅՈՒՆԻՍԵՖ-ը ՀՀ ԿԳՆ-ի և համայնքների հետ միասին նախաձեռնել է **աղքատ համայնքների համար այլընտրանքային մոդելների** փորձարկմանն ուղղված փոքրածավալ պիլոտային ծրագրեր: Դրանցից մեկը 3-5 տարեկան երեխաների համար ՎՄՋ-ի **ընտանիքահենք համայնքային ծառայության մոդելն** է, որը փորձարկվել էր Սյունիքում: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ծրագրից իրազեկ այլ փորձագետների՝ այս մոդելը ծախսարդյունավետ է, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտագործելու համայնքի սոցիալական կապիտալը և ապահովելու համապատասխան ՎՄՋ ծառայություններ տեղերում: Հիմնականում մոդելը ենթադրում է համայնքից մի քանի ծնողների ներգրավում, ովքեր վերապատրաստվելուց հետո հիմնում են տնային պայմաններում ՎՄՋ ծառայությունների կենտրոններ:

Ծրագրերի հաջորդ շարքը վերաբերվում է ԿԱՊԿՈՒ երեխաներին: Բոլոր երեխաների համար (ներառյալ ԿԱՊԿՈՒ) կրթության իրավունքը սահմանված է «Կրթության մասին» ՀՀ օրենքով և «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքով: Այնուամենայնիվ, չնայած ներառական կրթության փիլիսոփայությունն արդեն գործի է դրվել հիմնական կրթության մակարդակում, և ՀՀ-ում գոյություն ունեն ավելի քան 139 գործառնող ներառական դպրոցներ բոլոր մարզերում, նախադպրոցական մակարդակում ԿԱՊԿՈՒ երեխաների ներառման խնդիրը դեռևս թիրախավորված չէ: **Ընդհանուր առմամբ, նախադպրոցական մակարդակի կրթության ներառականությանը տված փորձագիտական գնահատականը ավելի ցածր է՝ համեմատած միջին կամ բարձրագույն կրթության օղակների հետ:** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և նրանց կարիքների գնահատման համար գործառույթ ունեցող մարմինները չեն գործում որպես ամբողջական համակարգ ներառական կրթություն իրականացնող հաստատությունների հետ, այդ պատճառով, փորձագետները չեն տիրապետում հավաստի տվյալների այն երեխաների մասին, ովքեր դուրս են մնում նախակրթարաններից հաշմանդամության կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի հետևանքով:

Մասնագետների հետ հարցազրույցներից պարզվել է, որ մի կողմից՝ **ծնողները նախաձեռնող չեն** իրենց ԿԱՊԿՈՒ երեխաներին պետական մանկապարտեզ տեղավորելու հարցում՝ նախընտրելով հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, մյուս կողմից՝ **մանկապարտեզների տնօրենները ցանկություն չունեն** ներգրավել ԿԱՊԿՈՒ երեխաներին՝ հիմնականում պատճառաբանելով, որ մանկապարտեզում չկան համապատասխան պարագաներ, մասնագետներ և հատուկ խնամքի պայմաններ: Ավելին՝ ՀԿ-ներից ընտրված փորձագետները նշեցին, որ հաճախ մանկապարտեզի համար ավելի հեշտ է հոգ տանել մտավոր խնդիրներ ունեցող երեխաների մասին, քան ֆիզիկական խնդիրներ ունեցողների: Բացի այդ, ըստ ԲՀՄԳ-ի փորձագետի՝ **հոգեբանամանկավարժական գնահատման համայնքային հանձնաժողովները օժտված չեն որևէ իրավասությամբ (հատուկ քայլեր ձեռնարկել երեխաների կրթության իրավունքի իրացումն ապահովելու համար, հետևել երեխայի՝ կրթության մեջ ներառման ընթացքին) առանձնահատուկ կրթական պահանջների մասին գնահատումը կատարելուց հետո:**

Հայաստանի մարզերում մինչ օրս փորձարկված նախադպրոցական կրթության այլընտրանքային մոդելներից մի քանիսը հետևյալն են.

- ա) նախադպրոցական խմբեր դպրոցում կամ դպրոցահենք նախակրթարաններ՝ նախատեսված 5 տարեկան երեխաների համար¹²,
- բ) մանկապարտեզ, որը հարմարեցված է առանձնահատուկ կրթական կարիքների համար կամ որտեղ առկա է հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատող և ըստ անհրաժեշտության աշխատակազմին վերապատրաստող շրջիկ մասնագիտական խումբ¹³,
- գ) ՎՄՁ կենտրոն, որը ոչ միայն կազմակերպում է ուսուցողական միջոցառումներ, այլև տրամադրում առողջապահական և երեխաների պաշտպանության ու վերականգնման ծառայություններ¹⁴,
- դ) ծնողների անհատական աջակցության կենտրոններ կամ տնային աջակցության («տնայց»)/շրջիկ աջակցման խմբեր¹⁵,
- ե) խաղերի, խնամքի և ուսուցողական միջոցառումների «ապահովում տան պայմաններում» ծնողական խմբերի միջոցով, հատկապես փոքր և հեռավոր համայնքների համար, որտեղ երեխաների թիվը բավարար չէ ՎՄՁ խումբ ստեղծելու համար¹⁶:

¹² Հիմնականում փորձարկվել է ՀՀ ԿԳՆ ԾԻԳ-ի կողմից 2010-2014թթ. Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպության կողմից:

¹³ Մի մասը ֆինանսավորվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի, «Ուրլոյ Վիժըն» կազմակերպության և այլ դոնոր կազմակերպությունների կողմից, մասնավորապես Երևանում:

¹⁴ Հիմնականում իրականացվել է «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից վերջին տարիներին Տավուշում:

¹⁵ Հիմնականում իրականացվել է «Հույսի կամուրջ» ՀԿ-ի կողմից վերջին տարիներին Տավուշում:

¹⁶ Փորձարկվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից Գավառում և Սյունիքի մարզի համայնքներում:

Հետազոտությունը պարզեց, որ պետական մակարդակում վերոնշյալ բոլոր մոդելների նկատմամբ հետաքրքրությունը բավականին փոքր է, բացառությամբ առաջինի, որը սահմանվել է կառավարության կողմից որպես հաջորդ տարիների համար ամենակարևոր և արդյունավետ ՎՄՁ կառավարման ձևաչափ: Հարցազրույցների ընթացքում փորձ է կատարվել ստանալ փորձագետների կարծիքը նշված այլընտրանքային մոդելների առավելությունների և թերությունների վերաբերյալ, որոնք ներկայացված են Աղյուսակ 6-ում: Ինչպես երևում է Աղյուսակ 6-ից, մոդելներից **միայն երկուսն են ապահովված նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և թիրախավորելու հատուկ մեխանիզմներով: Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և թիրախավորելու մեխանիզմի բացակայությունը ծառայությունների բոլոր մակարդակներում վտանգավոր է, քանի որ այն որևէ խթան չի ստեղծում դուրս մնացող երեխաներին ընդգրկելու համար:**

Աղյուսակ 6. Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների մոդելները

Այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների մոդելները	Առավելություն	Թերություն	Նախատեսում են նախադպրոցական կրթությունից դուրս մնացողների բացահայտում և թիրախավորում
Դպրոցահենք նախակրթարաններ կամ դպրոցին նախապատրաստող դասընթացներ	Ծախսարդյունավետություն, տարրական կրթությանը որակյալ նախապատրաստություն, հարմարում դպրոցական միջավայրին և ուսուցչական կազմին	Բացակայում է շուրջօրյա խնամքը, սնունդը, նախատեսված է միայն 4-5 տարեկան երեխաների համար, չի ենթադրում դուրս մնացած երեխաներին թիրախավորում կամ ընդգրկում	Ոչ
Մանկապարտեզ խնամքի շրջիկ մասնագիտական խմբով	Ծախսարդյունավետություն, որակյալ ծառայություններ առանձնահատուկ կրթության պայմանների կարիք ունեցող երեխաների համար, լիակատար ներառականություն, հատուկ հաստիքի պահանջի բացակայություն, տեղում անձնակազմի վերապատրաստում և հմտությունների տրամադրում	Մանկապարտեզը պետք է ապահովված լինի առանձնահատուկ կրթության պայմաններով և հարմարություններով	Ոչ
Զարգացման և վերականգնողական կենտրոններ	Ծախսարդյունավետություն, բարձրորակ մասնագիտական ծառայություններ, առանձնահատուկ կրթության պայմանների բարձր որակ	Հեռավորություն և ընտանիքի համար փոխադրման ծախսեր, հակասում համընդ-հանուր ներառականության գաղափարին	Այո
Տնայցեր շրջիկ խմբի կողմից	Ծախսարդյունավետություն, լայն ծածկույթ, շարժունություն, մասնագիտական ծառայություններ, ծնողների շրջանում հմտությունների ձևավորում	Հակասում համընդհանուր ներառականության գաղափարին	Այո

«Տնային պայմաններում» կրթություն կամ ծնողական խմբեր	Ծախսարդյունավետություն, ծնողների համար սոցիալական և մարդկային կապիտալի ձևավորում, ներդրումներ համայնքի սոցիալական կապիտալում	Խնամքի և կրթության անբավարար պայմաններ, մասնագիտական վերահսկման պակաս, դպրոցին նախապատրաստող հմտությունների և փորձառության ցածր որակ	Ոչ
---	---	---	-----------

Եվ՝ նախադպրոցական, և՛ միջին կրթության մակարդակներում ԿԱՊԿՈՒ երեխաների խնամքի և համալիր կրթության հաջողված դեպք կարող է համարվել Տավուշի մարզը: Լինելով հայ-ադրբեջանական սահմանային մարզ՝ այն դարձել է թիրախ տարբեր կազմակերպությունների համար: Բազմաթիվ ծրագրեր իրականացվում են «Հույսի կամուրջ» ՀԿ-ի, «Առավելության Արևելք» և «Վորլդ Վիժըն» Հայաստան կազմակերպությունների կողմից: Տավուշն այն մարզն է, որտեղ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ծրագրի շրջանակներում փորձարկվել է միջգերատեսչական համագործակցության գործառնման մոդելը (մասնավորաբար, Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության (ԱՍՀՆ), Տարածքային կառավարման և զարգացման նախարարության (ՏԿԶՆ), Առողջապահության նախարարության (ԱՆ), Կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) միջև): Համաձայն ՄԱԿ-ի և իրականացնող գերատեսչությունների որոշ ներկայացուցիչների փորձագիտական գնահատման՝ այդ փորձը պետք է վերլուծվի և առաջադրվի որպես հիմք նախադպրոցական կրթության ոլորտում պետության ջանքերի կենտրոնացման համար:

Մարզում գործում են ԿԱՊԿՈՒ երեխաներին սպասարկող վերականգնողական կենտրոններ (փորձագետների գնահատմամբ՝ 2016-2017թթ մոտավորապես 600 երեխա ստացել է համապատասխան ծառայություններ): «Հույսի կամուրջ» ՀԿ-ն «Միշըն Իսթ» դանիական միջազգային օգնության և զարգացման կազմակերպության հետ համատեղ ստեղծել են ինտերվենցիայի համայնքային արագ արձագանքման շրջիկ խմբերի մոդել, որը ներառում է տարբեր մասնագետների, ովքեր պատասխանատու են կոնկրետ տարածքի համար և սպասարկում են այդ տարածքի մանկապարտեզներում, համայնքային կենտրոններում կամ տնային պայմաններում խնամվող ԿԱՊԿՈՒ երեխաներին:

Մարտահրավերներ և հիմնախնդիրներ


ՎՄՁ ոլորտում իրականացվող ջանքերը կրում են տեղայնացված բնույթ, նկատվում է **ոլորտում գործող կազմակերպությունների, մարզային իշխանությունների և այլ շահագրգիռ կառույցների համաչափ համագործակցության պակաս**: Անհրաժեշտ է կատարել ծրագրերի ազդեցության գնահատում և վերլուծություն, համախմբել ջանքերը նախադպրոցական կրթության վերաբերյալ առավել համապարփակ քաղաքականության մշակման գործում: Ոչ-պետական ոլորտի փորձագետների կարծիքով՝ օրենսդրության մեջ գոյություն ունի բաց հատկապես այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների հետ կապված, ինչի առնչությամբ անհրաժեշտ է համակարգել և սահմանազօծել համընդհանուր պետական մոտեցում: Այդպես, օրինակ, ըստ ակադեմիական ոլորտից ընտրված փորձագետի՝ Երևանի պետական մանկավարժական համալսարանի հատուկ կրթության մասնագետներ որակավորող ստորաբաժանումների և համապատասխան գերատեսչությունների միջև գոյություն չունի ուղղակի համագործակցություն: Ոչ միայն համալսարանի մասնագետները, այլև շրջանավարտները ֆորմալ չեն համագործակցում ԲՀՄԳ կենտրոնի հետ, որը մոտակա տարիներին ստանձնելու է ԿԱՊԿՈՒ երեխաներին թիրախավորելու և սպասարկելու հիմնական գործառնությունը:

Պարզ է, որ Հայաստանում ՎՄՁ-ի համար պատասխանատու է ավելի քան մեկ նախարարություն: ԿԳՆ-ն գլխավոր դերակատարն է ՎՄՁ քաղաքականության մշակման և կրթական չափորոշիչների սահմանման գործում: ԱՆ-ն ևս ունի պատասխանատվության շրջանակ՝ իր հաստատությունների միջոցով վաղ տարիքում երեխաների առողջության պահպանման և ԿԱՊԿՈՒ

կամ հաշմանդամություն ունեցող երեխաների գնահատման տեսանկյունից: ԱՄՀՆ-ը պատասխանատու է աղքատ ընտանիքների երեխաների համար զարգացման բարենպաստ պայմաններ ստեղծելու համար: Եվ, վերջապես, ՏԿԶՆ-ը պատասխանատու է համայնքներում ՎՄՁ ծառայություններին ֆինանսական միջոցներ հատկացնելու համար: Ավելին, գոյություն ունեն մի շարք այլ գործակալություններ, ինչպիսիք են՝ Կրթության ազգային ինստիտուտը, Բժշկահոգեբանամանկավարժական Գնահատման Կենտրոնը և այլ դերակատարներ: **Սա նշանակում է, որ պետությունը, ՎՄՁ-ի հետ կապված, պետք է մշակի համակարգման մեխանիզմ, որով կերաշխավորվի միջգերատեսչական համագործակցությունն ու կապը այլ իրավասու մարմինների միջև:**

Ավելին, ոլորտում դերակատարների միջև գոյություն ունի շահերի բախում, քանի որ յուրաքանչյուրը փորձում է հետևել միայն իր պատասխանատվության շրջանակում գտնվող հարցերին՝ հնարավորինս կրճատելով դրանց առնչվող ծախսերն ու անտեսելով այն խնդիրները/կարիքները, որոնք ընկած են պատասխանատվությունների խաչման տիրույթում: Միջգերատեսչական համագործակցության ոլորտում նկատվում են կրկնակի ուշադրության արժանացող ուղղություններ և անուշադրության մատնված հարցեր (տես Պատկեր 2): Բոլոր 10 փորձագետները միակարծիք են, որ հասունացել է **միջգերատեսչական համագործակցության մոդելի ստեղծման պահանջը, որը հնարավորություն կտա դերակատարներին կիսվել իրենց փորձով, թիրախավորել ջանքերն ու ստեղծել համընդհանուր տվյալների շտեմարան ոլորտի մշտադիտարկան համար:** Ներկայումս տվյալները վերլուծության չեն ենթարկվում և չեն ծառայեցվում ծրագրերի կամ գործողությունների ռազմավարության մշակումներին: Շահագրգիռ հանրային մարմինների միջև գոյություն չունի տեղեկատվության փոխանակման կամ համակարգման հատուկ ընթացակարգ:

Պատկեր 2. Միջգերատեսչական համագործակցության ընդհատվող ցանց



Ամփոփելով հետազոտության արդյունքում հավաքագրված փորձագիտական կարծիքները՝ կարող ենք սահմանել Հայաստանում նախադպրոցական կրթության ոլորտում առկա հետևյալ հիմնախնդիրները.

- ոլորտում ակտիվ գործող դոնոր կազմակերպությունների միջև համաչափ համագործակցության պակաս,
- միջգերատեսչական համագործակցության, հաղորդակցության և համակարգման պակաս, որի արդյունքում տեղի է ունենում կամ գործառույթների մեկտեղում, կամ երեխաների որոշ կարիքների անտեսում,
- ամբողջական տվյալների շտեմարանի կամ տվյալների հավաքագրման, պահպանման, շրջանառման և վերլուծության ընթացակարգերի և մշտադիտարկման գործիքների բացակայություն,
- նախադպրոցական կրթության մակարդակում պարտադիր բաղադրիչի ներդրման անհրաժեշտություն,
- մինչև 4 տարեկան երեխաների վաղ մանկության զարգացման անտեսում,
- նախադպրոցական կրթությունից տարբեր պատճառներով դուրս մնացած երեխաների համակարգային բացահայտման, հավաքագրման և ընդգրկման մեխանիզմների պակաս,
- այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների թերագնահատում և պակաս,
- տարամիտում գյուղական ու քաղաքային քաղաքականության զարգացումներում:

ԳԼՈՒԽ III

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.

ՔԱՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՄՋ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՎՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Հարցվածների մեծամասնությունը շատ հետաքրքրված էին ՎՄՋ հարցերով և պատրաստակամ էին ոլորտին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ արտահայտելու իրենց կարծիքը: Հարցվողների 76%-ը նշում է, որ նրանք կամ լիովին իրազեկ են, կամ հիմնականում իրազեկ են իրենց համայնքում նախադպրոցական կրթության հիմնախնդիրներին (տես Աղյուսակ 7), իսկ ընտրանքի 85.8%-ը նշել է, որ շատ/հիմնականում հետաքրքրված է նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի և կրթության կազմակերպման գործընթացով/հիմնախնդիրներով (տես Աղյուսակ 8): Հետևաբար, կարող ենք եզրակացնել, որ թիրախավորված տնային տնտեսությունների հետաքրքրությունների շրջանակում ՎՄՋ-ն առաջնահերթություններից է: Հատկապես հետաքրքրված են այն հարցվողները, ովքեր բնակվում են Շիրակի, Արարատի և Սյունիքի մարզերում (համապատասխանաբար մարզում ՏՏ-ների 70.2%, 66.7% և 40.5%), մինչդեռ հիմնախնդիրներով չհետաքրքրվող ընտանիքների ամենամեծ խումբն է հայտ է եկել Կոտայքի մարզում (մարզի ընտանիքների 3.7%-ը): **Որքան բարձր է հարցվողի կրթական մակարդակը, այնքան ավելի մեծ է նրա հետաքրքրությունը նախադպրոցական կրթության հիմնախնդիրների նկատմամբ:**

Աղյուսակ 7. Նախադպր. կրթ. մասին իրազեկվածություն Աղյուսակ 8. ՎՄՋ նկատմամբ հետաքրքրվածություն

Որքանով իրազեկ եք Ձեզ համարում Ձեր համայնքում նախադպրոցական կրթության ոլորտի հիմնախնդիրների մասին.			Որքանով եք հետաքրքրված Հայաստանում նախադպրոցական տարիքի երեխաների խնամքի և կրթության կազմակերպման գործընթացով/ հիմնախնդիրներով:		
	Քանակ	Տոկոս		Քանակ	Տոկոս
Լիովին իրազեկ եմ	149	24.9	Շատ եմ հետաքրքրված	220	36.7
Հիմնականում իրազեկ եմ	306	51.1	Հիմնականում հետաքրքրված եմ	294	49.1
Հիմնականում իրազեկ չեմ	123	20.5	Հիմնականում հետաքրքրված չեմ	78	13.0
Ընդհանրապես իրազեկ չեմ	21	3.5	Ընդհանրապես հետաքրքրված չեմ	7	1.2
Ընդամենը	599	100.0	Ընդամենը	599	100.0

Ինչպես երևում է Հավելված 3-ի Աղյուսակ 1-ից, հարցվողների մի լայն շրջանակ (բոլոր հարցվողների մոտ 10%-ը) կրթության ոլորտի հետ իրենց կապը նկարագրեցին որպես շատ սերտ (նրանք աշխատում կամ սովորում են այս ոլորտում): Այս փաստը որոշ առումով կարող է արձանագրել տվյալ խմբի հարցվողների կողմից որոշակի կողմնապահ վերաբերմունքի հնարավորություն, սակայն մյուս կողմից՝ նշված հարցվողների պատասխանները կարող են համարվել ավելի ինֆորմատիվ:


Հարցման տվյալները հիմնավորեցին փորձագետների այն կարծիքը, որ որոշ մարզային իշխանությունների շրջանում գոյություն ունեցող կարծրատիպն այն մասին, թե Հայաստանի բնակչությունը բացասաբար է վերաբերվում նախադպրոցական կրթությանը, թյուր է և չի համապատասխանում իրականությանը (տես Աղյուսակ 9): Հարցվողների մեծամասնությունը կարծում է,

որ մինչև 6 տարեկան երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական կրթական հաստատություններում շատ կարևոր է/հիմնականում կարևոր է: Հարցվողների համար առավել կարևոր հաստատություններից են, ավանդաբար, մանկապարտեզներն ու դպրոցին նախապատրաստող դասընթացները: Հարցվողներից ոչ ոք չի նշել, որ երեխաների ընդգրկվածությունը «ընդհանրապես կարևոր չէ»: **Քաղաքականություն մշակողները պետք է հաշվի առնեն ՎՄՁ որևէ ծառայությունում երեխաներին ընդգրկելու վերաբերյալ հասարակության այսպիսի դրական ընկալումը, քանի որ այն հարցականի տակ է դնում նախադպրոցական կրթության նկատմամբ ցածր պահանջարկի մասին գործող կարծրատիպը:**

Աղյուսակ 9. Որքանով կարևոր եք համարում Ձեր համայնքում 3-6 տարեկան երեխաների ընդգրկումը նախադպրոցական կրթական հաստատություններում:

	Շատ կարևոր է	Հիմնականում կարևոր է	Հիմնականում կարևոր չէ	Ընդհանրապես կարևոր չէ	Ընդամենը
1. Մանկապարտեզ	88.1	10.7	1.2	0	100.0
2. Նախադպրոցական կրթության դասընթացներ	77.1	20.9	2.0	0	100.0
3. Զարգացման խմբակներ	76.3	21.4	2.2	.2	100.0

Ավելին, գոյություն ունի պարտադիր նախադպրոցական կրթության անհրաժեշտության վերաբերյալ դրական ընկալում: Հարցվողների միայն 1% -ն է կարծում, որ Հայաստանում նախադպրոցական կրթությունը չպետք է լինի պարտադիր բոլոր երեխաների համար: Հետևաբար, հայ հասարակության համար **Ընդգրկվածության պատրաստականության ցուցանիշը** կարող է գնահատվել որպես շատ բարձր՝ մոտ 99 %: Այս ցուցանիշը ներառում է այն հարցվողներին, ովքեր համարում են, որ 3-6 տարեկան երեխաների ընդգրկումը նախադպրոցական հաստատություններում պետք է լինի ցանկալի կամ պարտադիր բոլոր երեխաների համար (տես Գծապատկեր 1)։



Գծապատկեր 1 Ինչ եք կարծում, արդյո՞ք, 3-6 տարեկան երեխաների ընդգրկումը նախադպրոցական հաստատություններում պետք է լինի.

Ուշագրավ է, որ պարտադիր ՎՄՁ-ի նկատմամբ դրական վերաբերմունք ունեցող հարցվողները, իրենց դիրքորոշումը բացատրող տարբերակներից առավել քիչ մատնանշել են սոցիալ-տնտեսական պատճառները (ինչպիսիք են՝ հնարավորություն տալ ընտանիքի անդամներին աշխատել կամ ազատել ընտանիքը որոշ լրացուցիչ ծախսերից/հոգսերից) (պատասխանների 4.7%-ը): Նախադպրոցական կրթության գործառույթներն ավելի խորապես են հասկացվում հասարակության կողմից՝ շեշտադրվում են հատկապես դպրոցում ուսումնական առաջադիմության բարձրացման (պատասխանների 33.4%-ը), հաղորդակցության հմտությունների զարգացման (պատասխանների 31.4%-ը) և երեխայի ընդհանուր զարգացվածության ապահովման (պատասխանների 30.5%-ը) գործառույթները (տես Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Պարտադիր նախադպրոցական կրթության կարևորման պատճառները

Եթե պարտադիր է, ապա ինչո՞ւ:		
	Պատասխանների թիվը	Տոկոս
Ստեղծում է դպրոցում ուսումնական առաջադիմության նախապայմաններ	222	33.4%
Ձևավորում է երեխայի մոտ շփման և հաղորդակցության հմտություններ	209	31.4%
Ապահովում է երեխայի ընդհանուր զարգացվածությունը, բարեկրթությունը	203	30.5%
Հնարավորություն է տալիս ընտանիքի անդամներին աշխատել	30	4.5%
Ազատում է ընտանիքը որոշ լրացուցիչ ծախսերից/հոգսերից	1	.2%
Ընդամենը	665	100.0%

Մինչդեռ պարտադիր նախադպրոցական կրթության դեմ արտահայտված հարցվողները, որպես առավել տարածված իրավիճակներ, երբ նախադպրոցական կրթությունը պարտադիր չէ, նշել են այն դեպքերը, երբ երեխան ունի առողջության հետ կապված խնդիր, հատուկ խնամքի կարիքներ և մտավոր զարգացման կամ վարքագծի շեղումները (տես Աղյուսակ 11): Այս փաստն անուղղակիորեն ցույց է տալիս, որ գոյություն ունի կարծրատիպ նախադպրոցական հաստատություններում ԿԱՊԱՌԻ երեխաներին ներառելու անհնարինության վերաբերյալ¹⁷:

Աղյուսակ 11. Դեպքեր, երբ նախադպրոցական կրթությունը պարտադիր չէ

Եթե պարտադիր չէ, ապա ո՞ր դեպքերում	Պատասխաններից		Տոկոս հարցվողներից
	N	Տոկոս	
Երբ երեխան վատառողջ է կամ ունի հատուկ խնամքի կարիք	74	23.1%	32.7%
Երբ ընտանիքի անդամները/ծնողները չեն ցանկանում	66	20.6%	29.2%
Երբ երեխան ինքը չի ցանկանում մնալ մանկապարտեզում	58	18.1%	25.7%
Երբ երեխան ունի մտավոր զարգացման կամ վարքագծի շեղումներ	58	18.1%	25.7%
Երբ երեխայի խնամքի պայմանները տանն ավելի լավ են կազմակերպված	57	17.8%	25.2%
Այլ՝	7	2.2%	3.1%
Ընդամենը	320	100.0%	141.6%

¹⁷ Ներառական կրթության վերաբերյալ վերլուծությունը տես՝ տես էջեր՝ 35, 43-44, 55-56:

Ընդհանուր առմամբ, ամփոփելով նախադպրոցական կրթության իրազեկվածության և ընկալումների մասին հարցման բացահայտումները՝ կարելի է եզրակացնել, որ գոյություն ունի պարտադիր նախադպրոցական կրթության նկատմամբ դրական վերաբերմունք, ՎՄՁ-ի սոցիալական գործառույթների նկատմամբ կարևորության խորքային ըմբռնում:

ԲԱՑԱՐՁԱԿ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Վերլուծական նպատակներից ելնելով՝ այս հետազոտության համար կօգտագործվեն և կսահմանվեն նախադպրոցական կրթության մասնակցության 3 հիմնական ցուցանիշներ.

- Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշ (հիմնված ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների վրա). նախադպրոցական հաստատություններում պաշտոնապես ընդգրկված ՀՀ մանկահասակ բնակչության մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով:
- Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշ (հիմնված մարզային իշխանություններից հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալների վրա). նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 0-5 տարեկան երեխաների մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով:
- Հարաբերական ընդգրկվածության ցուցանիշ (հիմնված հարցման տվյալների վրա). հարցման ընտրանքում որևէ նախադպրոցական ծառայության/դասընթացի մեջ ընդգրկված 3-5 տարեկան երեխաների մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով:

2008-2015թթ. Կրթության զարգացման ազգային ծրագրի նպատակն էր ՀՀ-ում նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաների ընդգրկվածության ցուցանիշը հասցնել 90%-ի: Այնուամենայնիվ, համաձայն Ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝ 2015թ. համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական կրթական հաստատությունների թիվը կազմել է 717, որից 431-ը գործում էին քաղաքային և 286-ը՝ գյուղական բնակավայրերում¹⁸ (տես՝ Աղյուսակ 12): Այս հաշվարկները, ամենայն հավանականությամբ, չեն ներառում այլընտրանքային նախադպրոցական ծառայությունները, ինչպիսիք են օրինակ՝ դպրոցահենք նախակրթարանները, որոնք ստեղծվել են միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Հակառակ դեպքում 2014-ից մինչև 2015թ. ընկած ժամանակահատվածում նախակրթարանների թվի ավելացումը ընդամենը 4-ով վիճելի է դառնում՝ հաշվի առնելով վերջին տարիների ընթացքում Համաշխարհային Բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» առաջին և երկրորդ վարկային ծրագրերի շրջանակներում մեծ թվով (ավելի քան 200) նախակրթարանների բացումը:

ՎՄՁ կենտրոններում ներգրավված երեխաների (0-5 տարեկան բոլոր երեխաների) համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը 2013-2015թթ. համար միջինում կազմել է 28%: Այս ցուցանիշը քաղաքային բնակավայրերում կազմում է 35.6%, իսկ գյուղական բնակավայրերում այն շատ ցածր է՝ 15.8%: Պաշտոնական տվյալներից պարզ է դառնում, որ գյուղական բնակավայրերի նախադպրոցական տարիքի երեխաները հանդիսանում են առավել խոցելի խումբը, քանի որ նրանց 85%-ը ընդգրկված չէ նախադպրոցական կրթության մեջ:

¹⁸ Հայաստանը թվերով 2016. Կենսամակարդակի պայմաններն ու սոցիալական ոլորտը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016թ., էջ 37-38:

Աղյուսակ 12. Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը՝ հիմնված ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների վրա¹⁹

	2013		2014		2015	
	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական
Նախակրթական հաստատությունների թիվը	422	275	428	285	431	286
	Ընդամենը՝ 697		Ընդամենը՝ 713		Ընդամենը՝ 717	
Ընդգրկված երեխաների թիվը, 1 000 երեխա	55.2	13.7	57	15.7	56.8	15.6
	Ընդամենը՝ 68.9		Ընդամենը՝ 72.7		Ընդամենը՝ 72.4	
Ընդգրկվածության ցուցանիշը	35.2%	14.3%	36%	16.6%	35.7%	16.6%
	Ընդամենը՝ 27.3%		Ընդամենը՝ 28.7%		Ընդամենը՝ 28.6%	

Ինչպես երևում է վերը ներկայացված Աղյուսակից, 2013-2015թթ ընթացքում ընդգրկվածության ցուցանիշների լուրջ առաջընթաց չի նկատվում: Այնուամենայնիվ, ոլորտի փորձագետներն ու սպասարկողները մեծ թերահավատությամբ վերաբերվեցին պաշտոնական տվյալների հավաստիությանը՝ հիմնականում պատճառաբանելով դրա կողմնակալ բնույթը հատկապես նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվաքանակի մասով: Քաղաքային և տեղական ինքնակառավարման մակարդակի փորձագետների կարծիքով՝ հնարավոր է, որ մանկահասակ բնակչության թիվը ուռճացված է ներկայացվում, քան իրականում է, ինչի արդյունքում ցուցանիշի մեծությունը ակնհայտ իջնում է:

Հետազոտության ընթացքում թիմը փորձել է մարզային մակարդակում տեղական ինքնակառավարման մարմիններից հավաքագրել նախադպրոցական տարիքի երեխաների և նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակի վերաբերյալ թվային վիճակագրական տվյալներ՝ համեմատական հաշվարկներ իրականացնելու նպատակով (տես Աղյուսակ 13): Ցավոք, չնայած հանրային տվյալների թափանցիկության մասին օրենքի՝ Հայաստանի 10 մարզերից 6-ում և Երևանում իշխանության ներկայացուցիչները չէին տիրապետում կամ հրաժարվեցին տրամադրել 3-5 տարեկան կամ մինչև 6 տարեկան մանկահասակ բնակչության թիվը (մանրամասների համար տես՝ Հավելված 3, Աղյուսակ 2): Այնուամենայնիվ, հիմնվելով 4 մարզերից հասանելի տվյալների վրա՝ հաշվարկվել է **Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշը, որը միջինում կազմում է 50.5%** (օրինակ՝ Վայոց Ձորի մարզում այն մոտավորապես 60% է, իսկ Արագածոտնում 43%-ից մի փոքր ցածր է): Չնայած այս ցուցանիշը ներկայացուցչական չէ ողջ Հայաստանի համար՝ այն ավելի մոտ է փորձագիտական գնահատականի շեմին: Այսպիսով, ԱՎԾ ցուցանիշի և հետազոտության ընթացքում հաշվարկված ցուցանիշի տարբերությունը պայմանավորված է 0-5 տարեկան մանկահասակ բնակչության ԱՎԾ-ի պաշտոնական թվի և մարզկենտրոններից ստացված տվյալների միջև անհամապատասխանությամբ:

Ընդգրկվածության ցուցանիշի գնահատման մեկ այլ աղբյուր են հանդիսացել 2016թ. 599 տնային տնտեսությունների շրջանում անցկացված սույն քանակական հարցման արդյունքում ձեռք բերված տվյալները: Ըստ հարցման տվյալների՝ **3-6 տարեկան (6 տարեկանը չլրացած) երեխաների Հարաբերական ընդգրկվածության ցուցանիշը պետական և մասնավոր մանկապարտեզներում կազմում է մոտավորապես 60%** (տվյալները վերաբերվել են **684 երեխաների**, որոնցից 65.3%-ը 3-5 տարեկան են և 34.7%-ը՝ 5-6 տարեկան): Բացարձակ և հարաբերական ընդգրկվածության ցուցանիշների տարբերությունը կայանում է նրանում, որ Բացարձակ ցուցա-

¹⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016թ., էջ 116-118:

նիշը հաշվարկվում է մինչև 6 տարեկան երեխաների ընդհանուր թվից, մինչդեռ Հարաբերական ցուցանիշը՝ միայն 3-ից 6 տարեկան երեխաների թվից, ովքեր ավելի շատ են ընդգրկված լինում նախակրթական հաստատություններում, քան մինչև 3 տարեկանները:

Աղյուսակ 13. Ընդգրկվածության ցուցանիշների համեմատություն

2015թ. Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը 0-6 տարեկան երեխաների համար (հիմնված ԱՎԾ տվյալների վրա)	2016թ. Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշը 0-6 տարեկան երեխաների համար (հիմնված մարզային իշխանություններից հավաքագրված տվյալների վրա)	2016թ. Հարաբերական ընդգրկվածության ցուցանիշը 3-ից 6 տարեկան (6-ը չլրացած) երեխաների համար (հիմնված հարցման տվյալների վրա)
28.6%	50.5%	60%

Ստորև ներկայացված են ընդգրկվածության առանձնահատկություններին առնչվող **հարցման արդյունքները**:

Ինչպես երևում է Աղյուսակ 14-ից, հարցված ընտանիքների երեխաների 59.4%-ը հաճախում են պետական մանկապարտեզներ, իսկ մասնավոր մանկապարտեզներն այդքան էլ տարածված չեն (ցուցանիշը՝ երեխաների 3%-ը): Ավելին, շատ երեխաներ (համապատասխանաբար 5.1%, 3.8% և 12.5%) օգտվում են այնպիսի այլընտրանքային նախադպրոցական ծառայություններից, ինչպիսիք են՝ նախադպրոցական կրթական դասընթացները և խմբակներ կամ մասնավոր պարապուրներ (սպորտ, արվեստ, լեզուներ և այլն): Ընդհանուր առմամբ, նախադպրոցական կրթական հաստատությունների հաճախելիությունը բավական ինտենսիվ է, քանի որ ընդգրկված երեխաների 89.4%-ը հաճախում են նախադպրոցական կրթական հաստատություններ ամեն օր, իսկ ընդգրկվածների 84%-ը ՎՄՁ կենտրոններում օրական անցկացնում է 4 ժամից ավելի (տես Հավելված 3 Աղյուսակներ 5, 6):


Աղյուսակ 14. Նախադպրոցական կրթական հաստատությունների տեսակները

Պետական մանկապարտեզ	Մասնավոր մանկապարտեզ	Անվճար նախադպրոցական կրթական դասընթացներ	Վճարովի նախադպրոցական կրթական դասընթացներ/ քոլեջ	Խմբակներ կամ մասնավոր պարապուրներ /սպորտ, արվեստ, լեզու և այլն/
59.4%	2.9%	5.1%	3.8%	12.5%

Քաղաքային բնակավայրերում երեխաներն երկու անգամ ավելի են հակված հաճախելու նախադպրոցական կրթական հաստատություններ: Գյուղական բնակավայրերում երեխաների ընդգրկվածությունը պետական մանկապարտեզներ կազմում է 38.5%, իսկ քաղաքային բնակավայրերում՝ 71.5% (տես Գծապատկեր 2): **Միաժամանակ օրական տևողության առումով գյուղաբնակ երեխաներն ավելի ինտենսիվ են հաճախում մանկապարտեզ:** Գյուղական բնակավայրերի երեխաների 95%-ը հաճախում է ՎՄՁ կենտրոններ ամեն օր, իսկ քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը 87% է: Միաժամանակ գյուղաբնակ երեխաների ընդամենը 1.7%-ն է նախակրթական հաստատություններում անցկացնում 2 ժամից պակաս, իսկ քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը 5.4% է (տես Հավելված 3, Աղյուսակներ 7 և 8): Այս փաստն ապացուցում է, որ գյուղական բնակավայրի երեխաներն էլ ավելի խոցելի են ՎՄՁ կենտրոնների հասանելիության առումով, քանի որ մշտապես գործող նախադպրոցական կրթա-

կան հաստատությունների առկայության դեպքում երեխաների մեծ մասն ավելի ինտենսիվ են հաճախում, քան քաղաքային բնակավայրերի երեխաները:

Գծապատկեր 2. Պետական մանկապարտեզներ հաճախելիության ցուցանիշը քաղաքային և գյուղական բնակավայրերում



Ոչ աղքատ տնային տնտեսությունների հետ համեմատելով՝ աղքատ տնային տնտեսությունների մոտ ևս նկատելի է ավելի ինտենսիվ հաճախելու միտումը: **Մանկապարտեզ հաճախողներից ամեն օր և օրական 4 ժամից ավելի հաճախող երեխաները ավելի շատ են աղքատ տնային տնտեսությունների, քան ոչ աղքատ տնային տնտեսությունների շրջանում** (տես Աղյուսակ 15): Սա նշանակում է, որ նախադպրոցական կրթական հաստատություն ընդգրկվելիս աղքատ տնային տնտեսությունների երեխաները ավելի ինտենսիվ են օգտվում ծառայություններից, քան ոչ աղքատ SS երեխաները:


Աղյուսակ 15. Հաճախումների ինտենսիվությունը՝ աղքատ ու ոչ-աղքատ SS-ների շրջանում

Շաբաթվա ընթացքում որքան հաճախ է երեխան ընդգրկված որևէ նախադպրոցական կրթական ծառայությունում:				
		Աղքատության կարգավիճակ		Ընդամենը
		Ոչ աղքատ	աղքատ (եկամտի առնվազն 62%-ը ծախսվում է սննդի վրա)	
Շաբաթվա ընթացքում որքան հաճախ է երեխան ընդգրկված որևէ նախադպրոցական կրթական ծառայությունում:	Ամեն օր	86.4%	91.7%	88.0%
	Շաբաթական 3-4 անգամ	13.6%	8.3%	12.0%
Ընդամենը		100.0%	100.0%	100.0%
Օրվա կտրվածքով միջինում քանի՞ ժամ է երեխան գտնվում նախադպրոցական կրթական հաստատությունում:				
		Աղքատության կարգավիճակ		Ընդամենը
		Ոչ աղքատ	աղքատ (եկամտի առնվազն 62%-ը ծախսվում է սննդի վրա)	

Օրվա կտրվածքով միջինում քանի՞ ժամ է երեխան գտնվում նախադպրոցական կրթական հաստատությունում:	Մինչև 2 ժամ	4.3%	2.8%	3.8%
	2-4 ժամ	14.3%	8.3%	12.6%
	4 ժամից ավել	81.4%	88.9%	83.6%
Ընդամենը		100.0%	100.0%	100.0%

Երեխաներին պետական մանկապարտեզ ուղարկողների շրջանում ամենամեծ խումբը կազմում են այն ծնողները, ովքեր ունեն սերտ կապ կրթության ոլորտի հետ (աշխատում կամ սովորում են այդ ոլորտում), ինչպես նաև նրանք, ովքեր 3-5 տարեկան երեխաների ընդգրկումը նախակրթական հաստատություններում համարում են կարևոր ու պարտադիր բոլոր երեխաների համար: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ **նախադպրոցական կրթության կարևորության վերաբերյալ իրազեկվածության մակարդակն ու պարտադիր բաղադրիչի նկատմամբ դրական կողմնորոշումը պայմանավորում են ցանկությունը՝ երեխային ընդգրկել նախադպրոցական հաստատություն (տես Գծապատկեր 3):**

Գծապատկեր 3. Նախադպրոցական կրթության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկվածությունը՝ ըստ մանկապարտեզ հաճախելու



Ընդհանուր առմամբ, թիրախավորված ՏՏ-ների ընդամենը 31.6%-ն է, որ իրենց երեխաներից ոչ մեկին չի ուղարկում որևէ տեսակի նախադպրոցական կրթական հաստատություն: ՏՏ-ների 62.6%-ն օգտվում է առնվազն 1 նախադպրոցական կրթության ծառայությունից: 2 կամ ավելի նախադպրոցական կրթական ծառայություններից օգտվող ընտանիքների թիվը մեծ չէ՝ ընտրանքի ՏՏ-ների մոտ 6%-ը (տես Աղյուսակ 16):

Աղյուսակ 16. Սպառվող նախադպրոցական կրթական ծառայությունների թիվը ՏՏ-ներում

ՏՏ-ի կողմից սպառվող նախադպրոցական կրթական ծառայությունների թիվը	Քանակ	Տոկոս
Օգտվում են 0 ծառայությունից	189	31.6
Օգտվում են 1 ծառայությունից	375	62.6
Օգտվում են 2 և ավելի ծառայություններից	35	5.9
Ընդամենը	599	100.0

Առհասարակ նախակրթական հաստատություններից չօգտվողների ցուցանիշն առավել բարձր է հետևյալ մարզերում՝ Տավուշ (մարզային ընտրանքում ներառված երեխաների 61.7%-ը), Կոտայք (59.1%) և Լոռի (53.2%), մինչդեռ դուրս մնացածների ամենացածր ցուցանիշները ստացվել են Երևան քաղաքում (Երևանում երեխաների 17.3% չի հաճախում որևէ նախադպրոցական կրթական հաստատություն), Արագածոտնի (22.9%) և Արմավիրի մարզերում (24.5%) (տես Աղյուսակ 17):

Աղյուսակ 17. Երեխաների ընդգրկվածությունը (%-ը մարզում ՏՏ-ների թվից)

Մարզ	Երեխաներից ոչ ոք չի հաճախում որևէ նախադպրոցական կրթական հաստատություն	Առնվազն մեկ երեխա հաճախում է որևէ նախադպրոցական կրթական հաստատություն	Ընդամենը
Արմավիր	24,5%	75,5%	100,0%
Արագածոտն	22,9%	77,1%	100,0%
Արարատ	28,0%	72,0%	100,0%
Գեղարքունիք	48,1%	51,9%	100,0%
Կոտայք	59,1%	40,9%	100,0%
Լոռի	53,2%	46,8%	100,0%
Շիրակ	34,7%	65,3%	100,0%
Սյունիք	31,8%	68,2%	100,0%
Տավուշ	61,7%	38,3%	100,0%
Վայոց Ձոր	31,1%	68,9%	100,0%
Երևան	17,3%	82,7%	100,0%

Գոյություն ունի մեծ կապ ՏՏ-ների կողմից նախադպրոցական կրթության ծառայություններից օգտվելու և հարցվողների կրթության ու զբաղվածության միջև: **Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներն ավելի հակված են ընդգրկել իրենց երեխաներին նախադպրոցական կրթական հաստատություններում: Բացի դրանից, նրանք, ովքեր ունեն աշխատանք, երկու անգամ ավելի շատ են ուղարկում իրենց երեխաներին ՎՄՁ կենտրոններ, քան չաշխատող ծնողները:** Միաժամանակ մեր այն վարկածը, որ աղքատ ընտանիքներն ավելի քիչ են ընդգրկված պետական նախադպրոցական հաստատություններում, քան այլ ՏՏ-ները, չհաստատվեց: Աղքատ և ոչ աղքատ ՏՏ-ների շրջանում պետական մանկապարտեզ հաճախողների մասնաբաժինը գրեթե նույնն է (ընտրանքում աղքատ ՏՏ-ների 60%-ը և ոչ աղքատ ՏՏ-ների 61,2%-ը) (տես Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Պետական մանկապարտեզ հաճախողները՝ աղքատ և ոչ-աղքատ ՏՏ-ների շրջանում

		Աղքատության կարգավիճակ		Ընդամենը
		Ոչ աղքատ	աղքատ (եկամտի առնվազն 62%-ը ծախսվում է սննդի վրա)	
Արդյո՞ք նրանք հաճախում են պետական մանկապարտեզ	Այո	61.2%	60.0%	60.8%
	Ոչ	38.8%	40.0%	39.2%
Ընդամենը		100.0%	100.0%	100.0%

Ընտրանքում հայտնված ՏՏ-ների կազմում եղել են ԿԱՊԿՈՒ 11 երեխաներ (ընտրանքում երեխաների 1,6%-ը): ԿԱՊԿՈՒ երեխաներին առնչվող տվյալների առավել մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից ընդամենը 3-ն են հաճախում պետական մանկապարտեզ (ընտրանքում ԿԱՊԿՈՒ երեխաների մոտ 27%-ը): ԿԱՊԿՈՒ երեխաների մնացած 73%-ն առհասարակ չի հաճախում որևէ նախակրթարան, ներառյալ՝ մասնավոր մանկապարտեզներ, նախապատրաստական դասընթացներ և այլն: **Այս խմբի մեջ ընդգրկվածության ցուցանիշը բավականին ցածր է, սակայն հաճախումները ինտենսիվ են, քանի որ երեխաներն ամեն օր կամ շաբաթական 3 օրից ավելի օգտվում են նախադպրոցական կրթական ծառայություններից և գտնվում են այնտեղ 4 ժամից ավելի:** Փոխարենը ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքները նախընտրում են իրենց երեխաներին ուղարկել վերականգնողական կենտրոններ. 11 երեխայից 6-ը հաճախում են նման կենտրոններ: Հատկանշական է, որ ԿԱՊԿՈՒ երեխաներով ընտանիքները, բացառությամբ 1-ի, նշել են, որ տեղյակ են իրենց մարզում գործող վերականգնողական կենտրոնների մասին: ԿԱՊԿՈՒ երեխա ունեցող ընտանիքների կազմում ուշագրավ է նաև այն փաստը, որ դրանք բոլորը մեկ երեխա ունեցող ընտանիքներ են:

ՄՈՒՏՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական ծառայությունների հասանելիության վերաբերյալ առավել մանրամասն ուսումնասիրությունը քննադատել է միջարժեքային միտումներ: Առաջին հերթին, **հարցվողների կողմից մուտքը չի գնահատվել որպես լիարժեք կերպով բաց ու դյուրին:** Յուրաքանչյուր 10 ՏՏ-ներից մոտ 3-ը կամ մանկապարտեզներից օգտվող ՏՏ-ների 36,7%-ը նշել են, որ ելնելով իրենց անձնական փորձից՝ իրենց համայնքում հեշտ չէ 3-5 տարեկան երեխային տեղավորել պետական մանկապարտեզ: Հատկանշական է, որ մատչելիությունից չբավարարվածները ավելի մեծ թիվ են կազմում աղքատ ՏՏ-ների շրջանում (տես Աղյուսակ 19):

Աղյուսակ 19. Մուտքի դյուրինության գնահատականը՝ աղքատ և ոչ-աղքատ ՏՏ-ների շրջանում

		Աղքատության կարգավիճակ		Ընդամենը
		Ոչ աղքատ	աղքատ (եկամտի առնվազն 62%-ը ծախսվում է սննդի վրա)	
Ձեր անձնական փորձից ելնելով՝ գնահատե՞ք որքանո՞վ հեշտ է 3-6 տարեկան երեխային տեղավորել պետական մանկապարտեզ Ձեր համայնքում:	Շատ հեշտ է	30.7%	25.3%	29.1%
	Բավական հեշտ է	32.0%	30.5%	31.6%
	Այնքան էլ հեշտ չէ	29.3%	40.0%	32.5%
	Ընդհանրապես հեշտ չէր	8.0%	4.2%	6.9%
Ընդամենը		100.0%	100.0%	100.0%

Մանկապարտեզներից օգտվողների 14,6%-ը նշել է, որ երեխային մանկապարտեզ տեղավորելիս բախվել է որոշ խոչընդոտների (տես Աղյուսակ 20): Գյուղական/քաղաքային բնակչության պատասխանների բաշխումը ցույց է տալիս, որ գյուղական բնակավայրերում 2 անգամ ավելի հեշտ է երեխաներին ընդգրկել մանկապարտեզում, քան քաղաքային բնակավայրերում (տես Հավելված 3, Աղյուսակ 9): Ըստ հարցման արդյունքների՝ գյուղական բնակավայրում մանկապարտեզից օգտվող ընտանիքների 6.3%-ն է ունեցել մուտքի խոչընդոտ, իսկ քաղաքային բնակավայրերում այդ ցուցանիշը կազմում է 17.2%: Ուշագրավ է, որ մուտքի մատչելիության տեսանկյունից պետական ու մասնավոր մանկապարտեզների միջև առանձնապես տարբերություն չկա: Մասնավոր մանկապարտեզներում ընդգրկված ընտանիքների 10.5%-ն է նշել, որ ունեցել է մուտքի խոչընդոտ, իսկ պետական մանկապարտեզներում ընդգրկված ընտանիքների շրջանում՝ 14.8% (տես Հավելված 3, Աղյուսակ 10):

Ընդհանուր առմամբ, մուտքի խոչընդոտներ ունեցող ընտանիքների առավել մեծ մասնաբաժին արձանագրվել է Լոռվա մարզում (մանկապարտեզ հաճախող ընտանիքների 25%-ը), Երևանում (23.5%) և Կոտայքում (17.6%), իսկ առավել դյուրին մուտք են ապահովում Գեղարքունիքի և Տավուշի մարզերում (ոչ մի չի բախվել որևէ խոչընդոտի):

Աղյուսակ 20. Մուտքի խոչընդոտներն՝ ըստ մարզերի

		Բախվել է արդյոք որևէ խոչընդոտի Ձեր երեխային մանկապարտեզ տեղավորելիս:		Ընդամենը
		Այո	Ոչ	
Մարզ	Արմավիր	10,7%	89,3%	100,0%
	Արագածոտն	3,7%	96,3%	100,0%
	Արարատ	9,1%	90,9%	100,0%
	Գեղարքունիք	0%	100,0%	100,0%
	Կոտայք	17,6%	82,4%	100,0%
	Լոռի	25,0%	75,0%	100,0%
	Շիրակ	3,7%	96,3%	100,0%
	Սյունիք	10,7%	89,3%	100,0%
	Տավուշ	0%	100,0%	100,0%
	Վայոց Ձոր	14,3%	85,7%	100,0%
	Երևան	23,5%	76,5%	100,0%
Ընդամենը		14,6%	85,4%	100,0%

Երեխաներին մանկապարտեզ չընդունելու պատճառների վերլուծությունը ցույց է տվել, որ մանկապարտեզի տնօրենների կողմից ընտանիքներին տրված ամենատարածված պարզաբանումը հաստատության գերծանրաբեռնվածությունն է: Մանկապարտեզ չընդունվածների 77.3%-ը նշել են, որ երեխային չեն ընդունել մանկապարտեզ, քանի որ այնտեղ «տեղ չկա» (տես Աղյուսակ 21):


Աղյուսակ 21. Մանկապարտեզ ընդունելու պատճառաբանությունները

Ինչո՞ւ երեխային չեն ընդունել, Ձեր նախընտրած մանկապարտեզում/այլ նախադպրոցական հաստատությունում:


	Տոկոս
Տեղ չկար	77.3
Ասացին, որ երեխան ՀՀ քաղաքացի չէ/տվյալ համայնքում գրանցված չէ	9.1
Այլ /շուտ է երեխայի համար գնալ մանկապարտեզ. երեխան 4 տարեկանից փոքր է, իսկ մանկապարտեզը պետք է հաճախել 4-ից հետո /	9.1
Վճար, ծանոթի միջնորդություն կամ նվեր էին ակնկալում	4.5
Ընդամենը	100.0

Ընդունելության խոչընդոտների տարածվածությունը ներկայացված է Գծապատկեր 4-ում: Ընդունելության ամենատարածված խոչընդոտներից են (պատասխանների ավելի քան 60%-ը) ընդունելության ընթացակարգում բյուրոկրատական քաշքշուկը՝ մասնավորապես, կապված երկար սպասելու, հերթագրման և հաստատությունում բազմաթիվ փաստաթղթեր, տեղեկանքներ պահանջելու հետ: Կոռուպցիոն մեխանիզմները, ինչպիսիք են, օրինակ, համայնքի ղեկավարության հատուկ կարգադրությունը (ղեկավարի 8.2%-ը) կամ նվերների / ոչ պաշտոնական վճարման պահանջը (ղեկավարի ևս 8.2%-ը) դեռևս լայնորեն տարածված են:

Գծապատկեր 4. Մուտքի խոչընդոտների տարածվածություն



Միևնույն ժամանակ մանկապարտեզի ընդունելությունն ապահովվում է նաև մի շարք ոչ պաշտոնական մեխանիզմներով, որոնք կիրառվել են մանկապարտեզ հաճախող ընտանիքների շուրջ 28,4%-ի կողմից: Այդպիսի մեխանիզմներից առավել տարածվածներն են ծանոթների (ընկերների, բարեկամների) միջոցով կարգավորումները (տես՝ Գծապատկեր 5):



Գծապատկեր 5. Երեխային մանկապարտեզ տեղավորելու համար ձեռնարկված քայլերը
Այսպիսով, մանկապարտեզ հաճախող երեխա ունեցող հարցվողների 13,7%-ը կարողացել են ընդունվել մանկապարտեզ ընկերների/բարեկամների/այլ միջնորդների շնորհիվ, իսկ մանկապարտեզ հաճախողների 9,4%-ը դիմել են համայնքի ղեկավարությանը: Ուշագրավ է, որ չնայած խոչընդոտների մասին հարցում հարցվողների ավելի քան 8%-ը նշել է իրենից ոչ պաշտոնական վճար/նվեր պահանջելու մասին, 395 հարցողներից միայն 6-ը (կամ մանկապարտեզ հաճախողների 1,5%-ը) փաստել են, որ գումար կամ նվեր են տրամադրել մանկապարտեզի տնօրենին/մանկապարտեզի այլ աշխատակցի: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ նվերի/ոչ պաշտոնական վճարման պահանջն իրականացվել է կամ երրորդ անձի/սոցիալական կապերի միջնորդությամբ կամ բարեգործության ու այլ աշխատանքի տեսքով: Հարցվողները, որոնք ստիպված են եղել բարեգործություն, աշխատանք կամ նվիրատվություն կատարել մանկապարտեզի համար, կազմում են մանկապարտեզ հաճախող SS-ների մոտ 4%-ը:

Ամփոփելով մուտքի խոչընդոտների և ընդունելության վերաբերյալ արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ, մի կողմից, ծնողները իրենք են օգտագործում բոլոր նշված մեխանիզմները նախադպրոցական կրթական հաստատություններ ավելի հեշտ մուտք գործելու համար, սակայն, մյուս կողմից, նման մեխանիզմներն արհեստականորեն ստեղծվում են համայնքային կամ նախադպրոցական կրթության հաստատությունների ղեկավարների կողմից, որպեսզի սահմանափակվի մուտքը գերծանրաբեռնված մանկապարտեզներ: Համակարգը հնարավորություն է տալիս կատարել, այսպես ասած, նախնական ընտրություն և մուտքի սահմանափակում առանձին ընտանիքների համար, հատկապես բարձր պահանջարկ վայելող/գերծանրաբեռնված մանկապարտեզներում՝ դրանց ղեկավարության (այդ թվում տնօրենների, համայնքի ղեկավարների) կողմից:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

Ծառայությունների որակը

Հայաստանում մանկապարտեզների ծառայության որակի հետ առնչվող ամենալուրջ խնդիրներից է մանկապարտեզների անկանոն աշխատանքը. մանկապարտեզ հաճախող ընտանիքների 12,1%-ը նշել են, որ իրենց մանկապարտեզը սեզոնային է և կանոնավոր չի գործում (տես՝ Աղյուսակ 22): Այս ցուցանիշը հատկապես բարձր է գյուղական բնակավայրերի համար (գյուղական բնակավայրերում մանկապարտեզների մոտավորապես 15%-ը կանոնավոր չեն գործում):


Աղյուսակ 22. Մանկապարտեզների աշխատանքի կանոնավորությունը քաղաքային և գյուղական բնակավայրերում

Արդյո՞ք, մանկապարտեզը կանոնավոր է գործում ողջ տարվա ընթացքում:				
		Արդյո՞ք, մանկապարտեզը կանոնավոր է գործում ողջ տարվա ընթացքում:		Ընդամենը
		Այո	Ոչ	
	Քաղաքային	88.8%	11.2%	100.0%
	Գյուղական	85.3%	14.7%	100.0%
Ընդամենը		87.9%	12.1%	100.0%

Արմավիրի մարզում մանկապարտեզների կեսից շատը (53.6%) սեզոնային են, իսկ Արարատում՝ մոտ մեկ քառորդը (24.2%): Կանոնավոր ծառայությունների առումով լավագույն ցուցանիշները ստացվել են Կոտայքի, Սյունիքի, Վայոց Ձորի, Լոռվա, Տավուշի և Երևանի համար (տես Հավելված 3, Աղյուսակ 11):

Մանկապարտեզ հաճախող ՏՏ-ներում տրվել են մի քանի հարցեր մանկապարտեզի գործունեության որակի տարբեր կողմերը 1-ից 5 բալային սանդղակով գնահատելու համար: Գնահատվել է մանկապարտեզի նյութատեխնիկական հագեցվածությունն ու ծառայությունները՝ որպես այդպիսիք (տես Գծապատկեր 6 և Գծապատկեր 7): Ընդհանուր առմամբ, նյութատեխնիկական ապահովվածության գնահատականներն ավելի ցածր են, քան ծառայությունների որակի գնահատականները (4,05 միավոր 4,51-ի համեմատ): Արդյունքները բավականին հուսադրող են, քանի որ դրանք ցույց են տալիս, որ չնայած ոչ բավարար նյութատեխնիկական ապահովվածությանը՝ մանկապարտեզներին հաջողվում է տրամադրել որակյալ ծառայություններ:

Գծապատկեր 6. Մանկապարտեզների նյութատեխնիկական ապահովվածության գնահատականները (առկայության դեպքում)




4 միավորից ցածր են գնահատվել համակարգչային և տեխնիկական միջոցները, առկա խաղահրապարակներն ու մանկապարտեզի շենքային պայմանները (համապատասխանաբար 3,49, 3,87, 3,97): Միաժամանակ թիրախ մանկապարտեզներում առավել հաճախ առհասարակ բացակայում էին խաղահրապարակները, սպորտային դահլիճներն ու համակարգիչները: Այսպես, մանկապարտեզներից օգտվող հարցվողների 77,8%-ը նշել են, որ իրենց մանկապարտեզում ընդհանրապես բացակայում են համակարգիչներն ու տեխնիկական միջոցները (չնայած, որ մանկապարտեզում համակարգչի առկայությունը ՀՀ-ում պարտադիր չի համարվում), սպորտային դահլիճներ չկան մանկապարտեզների մոտ 50%-ում, մինչդեռ խաղահրապարակներ բացակայում են մանկապարտեզների մոտ 8%-ում:

Ամենաբարձր գնահատականները ստացվել են սննդի որակի (4,34), հակավարակային և սանիտարահիգիենիկ միջոցառումների, մասնավորապես, մանկապարտեզում տարվող մաքրության ու հակավարակային գործողությունների, (4,31) և ջեռուցման (4,30) համար (վերջիններիս առկայության դեպքում):

Համեմատաբար բարձր գնահատականներ են ստացել մանկապարտեզների ծառայությունների սոցիալական ու կրթական կողմերը. ընտրանքում միջին գնահատականը կազմել է 4,51 (տես Գծապատկեր 7) (4,48՝ քաղաքային և 4,63՝ գյուղական բնակավայրերում): Շատ կարևոր է, որ չնայած ծառայությունների որակի միջին գնահատականները բավարար են, դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցման գնահատականներն ավելի ցածր են (4,4 միավոր), քան ՎՄՁ այլ ծառայությունների վերաբերյալ գնահատականները, մասնավորապես՝ աշխատաժամերի հարմարության ստեղծագործականության զարգացման կամ ինքնուրույնության, տրամաբանելու հմտությունների փոխանցման մասերով (համապատասխանաբար՝ 4,6; 4,56; 4,53): Այս փաստը պետք է հաշվի առնվի հատկապես 11+1 բանաձևին անցման համատեքստում:

Գծապատկեր 7. Մանկապարտեզի գործունեության գնահատականները



Գյուղական և քաղաքային բնակավայրերի գնահատականները համեմատելիս պարզվում է, որ գյուղական բնակչությունն ավելի բավարարված է մանկապարտեզների և ապահովվածությամբ, և որակով, քան քաղաքային բնակչությունը (համապատասխանաբար, ապահովվածության համար միջինում 4,29 միավոր՝ 3,99-ի համեմատ, և որակի համար՝ միջինում 4,63՝ 4,28-ի համեմատ): Ամենայն հավանականությամբ այս փաստը պայմանավորված է

գյուղական բնակչության շրջանում առհասարակ սպասումների ավելի ցածր մակարդակով, քան քաղաքացիների շրջանում: Համաձայն ստացված տվյալների՝ գյուղական համայնքների բնակչությունն օգտագործում է գնահատման ավելի դրական սանդղակ, քան քաղաքային բնակիչները:

Պետք է նշել, որ պետական և մասնավոր մանկապարտեզների նյութատեխնիկական ապահովվածության գնահատականների միջև էական տարբերություն չի արձանագրվել. միջին գնահատականները կազմում են համապատասխանաբար 4.11 և 4.18 միավոր: Մինչդեռ գոյություն ունի որոշակի տարբերություն հաստատությունների կողմից մատուցվող սոցիալ-ուսումնական ծառայությունների գնահատականների մասով. պետական մանկապարտեզներն այս կտրվածքով ստացել են ավելի բարձր գնահատականներ, քան մասնավորները (համապատասխանաբար՝ 4.50 և 4.38 միավոր): Ավելի մանրակրկիտ վերլուծությունից պարզ է դառնում, որ մասնավոր մանկապարտեզներն ավելի արդյունավետ են գործում շենքային պայմանների (4.26՝ 3.95-ի համեմատ), ջեռուցման (4.47՝ 4.29-ի համեմատ), գույքի (4.21՝ 4.03-ի համեմատ) ապահովման մասով, իսկ ահա պետական մանկապարտեզները առաջ են անցնում տրամադրվող սննդի որակի գնահատականներով (3.8՝ 4.4-ի համեմատ) (տես Հավելված 3, Աղյուսակ 12): **Մասնավոր մանկապարտեզները ստացել են մի փոքր ավելի բարձր գնահատական՝ ըստ դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցման չափանիշի (4.5 միավոր՝ պետական մանկապարտեզների 4.4 միավորի համեմատ), սակայն ընդհանուր առմամբ նրանք ստացել են ավելի ցածր միավորներ բոլոր մնացած գնահատման չափանիշներով (հատկապես ֆիզիկական դաստիարակության և կոփման (4.1՝ 4.5-ի համեմատ) և դաստիարակության, քաղաքավարության նորմերի ուսուցման (4.3՝ 4.5-ի համեմատ) մասով (տես Աղյուսակ 23)):**

Աղյուսակ 23. Պետական և մասնավոր մանկապարտեզների ծառայությունների որակի գնահատումը

Գնահատեք, խնդրեմ, մանկապարտեզի ծառայությունների որակը	Ինչպիսի՞ մանկապարտեզ է հաճախում երեխան:					
	Մասնավոր			Պետական		
	Միջին	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Նվազագույն	Առավելագույն
Դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցում	4.47	3	5	4.40	1	5
Խոսքի, հաղորդակցման զարգացում	4.42	3	5	4.50	1	5
Դաստիարակություն, քաղաքավարության նորմերի ուսուցանում	4.32	2	5	4.54	1	5
Ինքնուրույնության, տրամաբանելու հմտությունների փոխանցում	4.47	2	5	4.55	2	5
Ստեղծագործականության զարգացում /նկարչ., երգ, պար/	4.42	2	5	4.57	1	5
Ֆիզիկական դաստիարակություն, կոփում	4.16	2	5	4.48	1	5

Մանկապարտեզներում տրամադրված ծառայությունների մասին մեկ այլ դրական արդյունք ստացվել է անձնակազմի կողմից երեխաների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի և հանդուրժողականության վերաբերյալ գնահատման անուղղակի հարցերի միջոցով: Հարցվողներին առաջարկվել էր նշել, թե որքանով են նրանք համամիտ որոշակի դատողությունների հետ (տես Աղյուսակ 24):

Աղյուսակ 24. Խոսելով Ձեր երեխայի մանկապարտեզի մասին՝ որքանով եք համամիտ հետևյալ դատողությունների հետ (տոկոսներով)


Դատողություն	Լիովին համամիտ եմ	Հիմնականում համամիտ եմ	Հիմնականում համամիտ չեմ	Ընդհանրապես համամիտ չեմ	Ընդամենը՝ մանկապարտեզ հաճախողներից
1. Երեխաների նկատմամբ ցուցաբերվում է մշտական խնամք և բարյացակամություն:	66.4	30.8	2.5	.3	100.0
2. Ծնողները շարունակաբար տեղեկացվում են իրենց երեխաների առաջընթացի մասին:	68.4	27.3	3.8	.5	100.0
3. Դաստիարակները/աշխատակիցները համբերատար լսում են բոլոր ծնողների պահանջներն ու առաջարկությունները:	67.8	25.6	5.8	.8	100.0
4. Տարբեր կենսամակարդակ ունեցող ընտանիքների երեխաները ստանում են միևնույն վերաբերմունքն ու ծառայությունները:	66.3	26.8	5.3	1.5	100.0

Պատասխանները ցույց են տալիս, որ, մեծամասամբ, երեխաների նկատմամբ ցուցաբերվում է մշտական խնամք և բարյացակամություն, իսկ ծնողները շարունակաբար տեղեկացվում են իրենց երեխաների առաջընթացի մասին: Այնուամենայնիվ, մանկապարտեզներից օգտվող հարցվողների 7%-ը համամիտ չեն, որ դաստիարակները/աշխատակիցները համբերատար լսում են բոլոր ծնողների պահանջներն ու առաջարկությունները: Մանկապարտեզներից օգտվող հարցվողների 7%-ն էլ համամիտ չէ, որ տարբեր կենսամակարդակ ունեցող ընտանիքների երեխաները ստանում են միևնույն վերաբերմունքն ու ծառայությունները:

Ներառական կրթության վերաբերյալ ընկալումները


Բավականին հիասթափեցնող արդյունքներ են ստացվել ներառական կրթության վերաբերյալ ընկալումների մասով: Հարցվողների պատասխաններից ելնելով՝ այն մանկապարտեզները, ուր հաճախում են ԿԱՊԿՈՒ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներ կազմում են մոտ 14%: Գյուղական համայնքներում **հարցվողների 92.6%-ը նշել է, որ իրենց երեխայի խումբ կամ մանկապարտեզ ԿԱՊԿՈՒ երեխաներ չեն հաճախում**, այդ ցուցանիշը քաղաքային համայնքներում կազմել է 83.7% (տես Գծապատկեր 8):

Գծապատկեր 8. Քաղաքային և գյուղական մանկապարտեզներում ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածությունը



Հարցվողների 14.5%-ը նշել են, որ բացասաբար կվերաբերվեին, եթե իրենց երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին ԿԱՊԿՈՒ կամ հաշմանդամություն ունեցող երեխաներ: Ներառական կրթության նկատմամբ բացասական ընկալում ունեցող հարցվողներն ավելի շատ հանդիպում են Կոտայք, Շիրակ և Գեղարքունիք մարզերում (համապատասխանաբար 23.5%, 22.2% և 20%): Հատկանշական է, որ գյուղական բնակավայրերի բնակիչներն ավելի հանդուրժող են ներառական նախադպրոցական կրթության հարցում, քան քաղաքային բնակչությունը: (տես Գծապատկեր 9):


Գծապատկեր 9. Հարցվողների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ երեխաներին մանկապարտեզներում ընդգրկելու վերաբերյալ



Մանկապարտեզներում ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկվածության մասով դրական վերաբերմունքի ամենացածր ցուցանիշն ու չեզոք վերաբերմունքի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Երևանում (մանկապարտեզ հաճախող երևանցի հարցվողների միայն 58.6%-ն է նշել, որ դրական կվերաբերվեին այդ փաստին և 22.1%-ը նշել է, որ իրենց համար միևնույնն է): Աշխատանք ունեցող հարցվողներն ավելի դրական են տրամադրված ներառական կրթության հանդեպ, հարցվողների մեջ կանայք ավելի անհանդուրժող են, քան տղամարդիկ (տես Հավելված 3, Աղյուսակներ 14, 15):

Ներառական կրթության հանդեպ վերաբերմունքը կապված է հարցվողների կենսափորձի կամ փորձառության հետ: Այն հարցվողները, ում երեխան հաճախում է այնպիսի մանկապարտեզ, որտեղ կան ԿԱՊԿՈՒ երեխաներ, ավելի դրական են տրամադրված ԿԱՊԿՈՒ երեխաների ներառվածության հարցում (տես՝ Գծապատկեր 10): Սա կարևոր միտում է, որը ցույց է տալիս, որ որքան շատ մանկապարտեզները որդեգրեն ներառական կրթության ծրագրեր, այնքան ներառականության հանդեպ վերաբերմունքը կփոխվի դեպի դրականը:

Գծապատկեր 10. Հարցվողների վերաբերմունքը ԿԱՊԿՈՒ երեխաներին մանկապարտեզներում ընդգրկելու վերաբերյալ՝ ըստ մանկապարտեզում այդպիսի երեխաների փաստացի ընդգրկվածության



Մանկապարտեզի հետ կապված ծախսերը

Ըստ ստացված տվյալների՝ ՀՀ-ում ընտանիքների կողմից նախադպրոցական կրթությանն առնչվող ամսական միջին ծախսը կազմում է 4700 ՀՀ դրամ: Ուշագրավ է, որ բացի պաշտոնական վճարներից (որոնք ընտրանքում միջինում կազմում են մոտ 4000 ՀՀ դրամ) ծնողներն ամսական վճարում են մոտ 220 ՀՀ դրամ դաստիարակների/օգնականների ոչ պաշտոնական նվերների և 150 ՀՀ դրամ հատուկ պարագաների/պիտույքների համար: Բացի այս գումարներից ամսական կազմակերպվում է դրամահավաք մոտ 290 ՀՀ դրամի չափով: Ընդհանուր առմամբ, դաստիարակներին նվերների/ոչ պաշտոնական վճարների հավաքագրումը տեղի է ունենում տարեկան մի քանի անգամ, ինչը նշանակում է, որ դաստիարակների համար տարեկան ավելի քան 2000 ՀՀ դրամ է հավաքվում: Պարզվել է նաև, որ ՏՏ-ների բյուջեներից բավականին մեծ գումար ծախսվում է երեխաների կարիքների համար. մասնավորապես սովորական ամսվա կտրվածքով բյուջեի ավելի քան 32%-ը ծախսվում է 3-6 տարեկան ընտանիքի անդամների վրա:

ՎՄՁ-ի հետ կապված ընդհանուր ծախսերն ավելի մեծ են քաղաքային բնակավայրերում, քան գյուղական, չնայած այդ տարբերությունը կազմում է ամսական մոտ 1000 ՀՀ դրամ (տես Հավելված 3, Աղյուսակ 16): Այնուամենայնիվ, քաղաքային բնակավայրերում նախադպրոցական կրթության ծառայությունների դիմաց առավելագույն ծախսը կազմում է մոտ 80.000 ՀՀ դրամ, ինչը մի քանի անգամ ավելի բարձր է գյուղական բնակավայրերի նմանատիպ ծախսերից (առավելագույնը 18.000 ՀՀ դրամ): Ամենաթանկ ՎՄՁ ծառայությունները արձանագրվել են Արագածոտնի, Արարատի, Շիրակի մարզերում և Երևան քաղաքում (ամսական ավելի քան 5000 ՀՀ դրամ):

Ընդհանուր ծախսերի կառուցվածքի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ գյուղական համայնքներում ոչ պաշտոնական վճարների, հատուկ պարագաների/պիտույքների և այլ դրամահավաքների հետ կապված ծախսերը մի քանի անգամ ցածր են, քան նույն-

նատիպ ծախսերը քաղաքային բնակիչների շրջանում (տես Աղյուսակ 25): Գյուղական բնակավայրերի ընտանիքները իրենց ընդհանուր ծախսերից միայն 3%-ից քիչ գումար են ծախսում ոչ պաշտոնական վճարների վրա, մինչդեռ քաղաքային բնակիչների շրջանում ավելի «տարածված» են ոչ պաշտոնական վճարումները: ՎՄՋ առնչվող ընդհանուր ծախսերի ավելի քան 17%-ը վերաբերվում են պաշտոնական վճարումներից բացի կատարվող, այլ ոչ-պաշտոնական ծախսերին:

Աղյուսակ 25. Մանկապարտեզների ծառայությունների համար ամսական ծախսերը

Բնակավայրի տիպը		Որքան գումար եք ծախսում մանկապարտեզի ծառայությունների համար սովորական ամսվա ընթացքում: (ՀՀ դրամով)			
		Պաշտոնական վճարում	Ոչ պաշտոնական վճար/նվեր դաստիարակին/օգնականին	Այլ դրամահավաքներ	Հատուկ պարագաներ/պիտույքներ
Քաղաքային	Միջին	4137.25	283.56	362.54	191.95
	Նվազագույն	0	0	0	0
	Առավելագույն	80000	20000	10000	10000
Գյուղական	Միջին	4112.77	34.74	73.23	37.89
	Նվազագույն	0	0	0	0
	Առավելագույն	18000	1000	1000	2000

Տվյալները ագրեգացվել են նաև պարզելու համար այն ՏՏ-ների բաշխումը ըստ մարզերի, որոնք մանկապարտեզում որևէ ոչ-պաշտոնական վճար առհասարակ չեն կատարում: **Լոռին, Արագածոտնը, Շիրակն ու Արարատը** այն մարզերն են, որտեղ ՏՏ-ների ավելի քան 90%-ը որևէ գումար չի ծախսում ոչ պաշտոնական վճարումների վրա, մինչդեռ **Գեղարքունիքը, Երևանն ու Սյունիքը** «ամենակոռումպացված» մարզերն են: Սյունիքում ՏՏ-ների միայն 71.4% -ն է, որ որևէ ոչ-պաշտոնական վճար չի կատարում, Երևանում և Գեղարքունիքում ցուցանիշները համապատասխանաբար կազմում են՝ 72.6% և 78.3% (տես Հավելված 3, Աղյուսակ 17)

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱԼՈՒ ՑՈՒՑԱՆԻՇԸ, ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Հետազոտության խնդիրներից ելնելով՝ «դուրս մնացած»/չընդգրկված հասկացությունը օգտագործվել է այն ՏՏ-ների կամ երեխաների նկատմամբ, որոնք հետազոտության պահին որևէ տեսակի նախադպրոցական կրթական հաստատությունում ընդգրկված չեն եղել: Ինչպես վերը նշվել է, թիրախավորված ՏՏ-ների 31.6%-ն իրենց երեխաներից ոչ մեկին չեն ընդգրկել որևէ տեսակի նախադպրոցական կրթական ծառայություններում: Հիմնվելով հարցման տվյալների վրա՝ **Հայաստանում 3-6 տարեկան երեխաների՝ նախադպրոցական կրթությունից դուրս մնալու ցուցանիշը կազմել է 32.7%:**

Տավուշի, Կոտայքի և Լոռու մարզերում թիրախավորված երեխաների կեսից ավելին ներգրավված չեն ՎՄՋ որևէ ծառայություններում (չընդգրկվածության ցուցանիշները՝ համապատասխանաբար 61.7%, 59.1% և 53.2%): Ամենացածր չընդգրկվածության ցուցանիշներ հաշվարկվել է Երևանում, Արագածոտն և Արմավիր մարզերում, որտեղ թիրախավորված երեխաների ¼-ից պակաս մասն է, որ որևէ տեսակի նախադպրոցական կրթական հաստատություն չի հաճախում (տես Նկար 1):

Նկար 1. Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած 3-5 տարեկան երեխաների ցուցանիշները ՀՀ մարզերում



Գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի հաճախ են դուրս մնում նախադպրոցական կրթությունից, քան քաղաքային բնակավայրերի երեխաները: Դուրս մնացած երեխաների բաշխումն ըստ սեռի ցույց է տալիս, որ դուրս մնացածների մեջ ավելի մեծ մաս են կազմում արական սեռի երեխաները, քան իգական սեռի երեխաները (տես Աղյուսակ 26):

Աղյուսակ 26. Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների բաշխումն ըստ բնակավայրի տիպի և երեխաների սեռի

Բնակավայրերի տիպը	3-5 տարեկան դուրս մնացած երեխաներ	Սեռ	3-5 տարեկան դուրս մնացած երեխաներ
	Տոկոս		Տոկոս
Քաղաքային	41.3	Արական	57.0
Գյուղական	58.7	Իգական	43.0
Ընդամենը	100.0	Ընդամենը	100.0

Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների խնամքը հիմնականում իրականացվում է նրանց ծնողների կողմից (հայր, մայր) (չընդգրկված ՏՏ-ների 86.4%-ում) և ոչ թե տա-

տիկ/պապիկների (չընդգրկված SS-ների 12.6%-ում) (տես Հավելված 3 Աղյուսակ 18): Սոցիալ-ժողովրդագրական այլ բնութագրերն ուսումնասիրելիս պարզվել է, որ նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաները առավել հաճախ աղքատ SS-ից են: Աղքատ ընտանիքներից նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաները կազմում են ընդհանուր երեխաների մոտ 32%-ը (տես Աղյուսակ 27):

Աղյուսակ 27. Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած/չընդգրկված երեխաների բաշխումն ըստ աղքատության կարգավիճակի

Աղքատության կարգավիճակ	Քանակ	Տոկոս
Ոչ աղքատ	115	68,0
աղքատ (սննդի ծախսը կազմում է 62%-ից պակաս)	54	32,0
Ընդամենը	169	100,0


Գոյություն ունի Հայաստանում չընդգրկվածության էության նախադպրոցական կրթությունից դուրս մնալու վերաբերյալ երեք մեկ ուշագրավ բացահայտում: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ **դուրս մնացած ընտանիքների ավելի քան 1/3-ի կողմից հատուկ քայլեր են ձեռնարկվել իրենց երեխային նախադպրոցական հաստատություն տեղավորելու ուղղությամբ** (տես Աղյուսակ 28): Հետևաբար, չընդգրկվածությունը դուրս մնալը անձնական ընտրության հետևանք չէ, այլ, ամենայն հավանականությամբ, սոցիալ-տնտեսական կամ կառուցվածքային հանգամանքների արդյունք: Այս ցուցանիշը եւս մեկ անգամ ապացուցում է, որ գոյություն ունեն ՎՄԶ մուտքի խոչընդոտներ, որոնք մեծացնում են նախադպրոցական կրթությունից դուրս մնացող երեխաների թվաքանակը:

Աղյուսակ 28. Չընդգրկված երեխաների ծնողների կողմից նախադպրոցական հաստատություններում ընդգրկելու փորձերը

Եթե չի/չեն հաճախում, ապա արդյո՞ր որևէ փորձ ձեռնարկվել է երեխային նախադպրոցական հաստատություն տեղավորելու համար:		
	Քանակ	Տոկոս դուրս մնացած SS-ներից
Այո	82	39.4
Ոչ	126	60.6
Ընդամենը	208	100.0

Հարցերի մի շարք վերաբերվում էր Հայաստանում նախադպրոցական կրթությունից դուրս մնալու պատճառներին: Այդպիսի հարցերից մեկը տրվել էր բոլոր հարցվողներին անկախ մանկապարտեզ հաճախելու հանգամանքից՝ բացահայտելու համար նրանց պատկերացումները չընդգրկվածների հնարավոր շարժառիթների մասին: Ինչպես ցույց է տրված Գծապատկեր 11-ում, ըստ հարցվածների, Հայաստանում որոշ ընտանիքներ չեն ուղարկում երեխաներին մանկապարտեզ՝ դաստիարակելով նրանց տան պայմաններում՝ ելնելով այնպիսի օբյեկտիվ պատճառներից, ինչպիսիք են՝ բարձր վճարները, մոտակայքում մանկապարտեզների բացակայությունը, հաստատությունների գերծանրաբեռնվածությունը: Հարցվողների բավականին մեծ խումբ (11.7%-ը) կարծում է, որ երեխաների դուրս մնալու տարածված պատճառներից է մանկապարտեզներում վարակիչ հիվանդությունների տարածվածությունը:

Գծապատկեր 11. Պատկերացումները նախադպրոցական կրթությունից դուրս մնալու հնարավոր պատճառների մասին



Միաժամանակ բացահայտվել են իրական պատճառները, թե ինչու մանկապարտեզ չեն հաճախում 3-6 տարեկան երեխաներ ունեցող ՏՏ-ների երեխաները: Այսպիսով, երեխաներին մանկապարտեզ չտանելու ամենատարածված 3 պատճառաբանություններն են՝ համայնքում/մոտակայքում որևէ գործող մանկապարտեզի բացակայությունը, ծառայությունների չբավարարելը ծնողների պահանջներին և որևէ պատճառով երեխային մանկապարտեզ չընդունելը աղմինիստրացիայի կողմից (տես Աղյուսակ 29):

Աղյուսակ 29. Չընդգրկվածության ընդհանուր պատճառները

Ինչո՞ւ երեխան/ները չի/չեն հաճախում որևէ նախադպրոցական կրթական հաստատություն:	Տոկոսը պատասխաններից
Համայնքում/մոտակայքում չկա որևէ գործող մանկապարտեզ կամ այլ նախադպրոցական ծառայություն	42.3%
Համայնքում գործող մանկապարտեզները կամ այլ նախադպրոցական ծառայությունները չեն բավարարում մեր պահանջներին	11.2%
Մեր նախընտրած մանկապարտեզում/այլ նախադպրոցական հաստատությունում երեխային չեն ընդունել	10.2%
Մեր երեխան նախադպրոցական որևէ կրթության/խնամքի կարիք չունի	5.1%
Երեխան վատառողջ է կամ ունի հատուկ խնամքի կարիք /հաշմանդամ է/	2.3%
Չունենք ֆինանսական միջոցներ	7.4%
Երեխան ինքը չցանկացավ մնալ մանկապարտեզում	7.9%

Եթե փորձենք խմբավորել նախադպրոցական կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառները, ապա կարելի է սահմանել հիմնական խնդիրների հետևյալ ուղղություններ.

1. Համակարգի արդյունավետությանը առնչվող խնդիրներ (մանկապարտեզների բացակայություն, գերծանրաբեռնվածություն, անմատչելիություն). շուրջ 55%:
2. Առանձին մանկապարտեզների ծառայությունների որակին առնչվող խնդիրներ (անբավարար պայմաններ, երեխայի հետ շփվելու եզրեր գտնելու անկարողություն, սանհիտարահիգիենիկ պայմաններ և այլն). շուրջ 19%:
3. Ընտանիքի սոցիալ-տնտեսական կենսամակարդակին առնչվող խնդիրներ. շուրջ 7.5%
4. Նախադպրոցական կրթության վերաբերյալ բացասական ընկալում և նախադպրոցական կրթության կարևորության մասին իրազեկության պակաս. շուրջ 5%:

Վերոնշյալ տվյալները կարող են հիմք հանդիսանալ Հայաստանում նախադպրոցական կրթությունից դուրս չմնալու համալիր միջոցառումների մշակման գործում: Եթե խնդիրների առաջին խումբն ուղղակիորեն կարգավորելը բարդ է անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղության պատճառով, ապա խնդիրների երկրորդ խումբը կարող է կարգավորվել տեղերում՝ ավելի արդյունավետ վերահսկման, աշխատակիցների որակավորման կամ այլ միջոցների օգտագործմամբ, որոնք չեն պահանջում հավելյալ գումարներ: Այսպես օրինակ՝ ծնողների պահանջներին չբավարարող մանկապարտեզների վերաբերյալ տվյալների վերլուծությունից պարզվում է, որ այդտեղ (պատասխանների 40%-ը) չեն ապահովում հակավարակային, սանհիտարահիգիենիկ միջոցառումներ (տես Աղյուսակ 30): Հետևաբար, սանհիտարահիգիենիկ պայմանների բարելավումն ու դրանց հանդեպ պատշաճ վերահսկողությունը կարող են որոշ չափով խթանել երեխաներին մանկապարտեզ տեղավորելու ծնողների ցանկությունը: Այլընտրանքային ծառայություններն ու մանկապարտեզների համար մշակված նորարարական ծրագրերը նույնպես կարող են բարելավել իրավիճակը:

Աղյուսակ 30. Մանկապարտեզների կամ այլ նախադպրոցական ծառայությունների հանդեպ չընդգրկված երեխաների ծնողների պահանջները (տոկոսը պատասխաններից)

Մատնանշեք այն պահանջները, որոնց չեն բավարարում Ձեր համայնքում գործող մանկապարտեզները կամ այլ նախադպրոցական ծառայությունները	Տոկոսը պատասխաններից
Գույքային/չենքային պայմանները վատն են	35.0
Չեն տալիս անհրաժեշտ գիտելիք	5.0
Չեն ապահովում նորմալ խնամք/սնունդ	15.0
Չեն ապահովում հակավարակային, սանհիտարահիգիենիկ միջոցառումներ	40.0
Այլ	5.0
Ընդամենը	100.0

Չնայած ֆինանսական միջոցների սղության պատճառով նախադպրոցական կրթությունից դուրս մնացած ընտանիքների թիվը մեծ չէ (մոտ 7.4%), սակայն այդ ընտանիքներից ոչ մեկը չի ստացել որևէ աջակցություն համայնքից, սոցիալական կամ առողջապահական ծառայությունների, այլընտրանքային կրթական ծառայությունների ներկայացուցիչներից երեխաներին նախադպրոցական կրթության հաստատությունում ընդգրկելու ուղղությամբ: Այս տվյալները թույլ են տալիս եզրակացնելու, որ աղքատ ընտանիքների համար ՎՄԶ ծառայություններին առնչվող ծախսերի կրճատման ուղղված որևէ միջոցների ձեռնարկման դեպքում, աղքատների շրջանում

ընդգկվածության ցուցանիշը կաճի: Անհրաժեշտ է ստեղծել թիրախավորված միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն աղքատների համար դեպի ՎՄՋ մուտքի մատչելիության ապահովմանը:

Մյուս կողմից, փորձագիտական հարցազրույցների ժամանակ պարզվել է, որ ո՛չ համայնքային մակարդակում, ո՛չ էլ սոցիալական ծառայությունների կամ սոցիալական քաղաքականության մակարդակում գոյություն չունեն գործնական մեխանիզմներ դուրս մնացած ընտանիքներին հավաքագրելու համար: Հարցման տվյալները նույնպես հիմնավարում են այս պնդումը, քանի որ **դուրս մնացած ընտանիքների 95%-ը նշել է, որ համայնքի, սոցիալական կամ առողջապահական ծառայությունների, այլընտրանքային կրթական ծառայությունների ներկայացուցիչները երբևէ չեն դիմել իրենց երեխաներին նախադպրոցական կրթության հաստատությունում ընդգրկելու առաջարկությամբ/հորդորով** (տես Աղյուսակ 31):

Աղյուսակ 31. Համայնքի, սոցիալական կամ առողջապահական ծառայությունների, այլընտրանքային կրթական ծառայությունների ներկայացուցիչների կողմից առաջարկություններ/հորդորներ նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաներին ընդգրկելու կապակցությամբ

Արդյո՞ք երբևէ համայնքի, սոց. կամ առողջապահական ծառայությունների, այլընտրանքային կրթական ծառայությունների ներկայացուցիչները դիմել են Ձեզ Ձեր երեխաներին նախադպրոցական կրթության հաստատությունում ընդգրկելու առաջարկությամբ/հորդորով:

Տոկոս դուրս մնացած SS-ներից	
Այո	5.3
Ոչ	94.7
Ընդամենը	100.0

ԳԼՈՒԽ IV

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ՄՆԱԼԸ. ՈՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Ֆև հարցազրույցների ընթացքում մասնակիցները ներգրավված էին նախադպրոցական կրթության ու ՎՄՁ ոլորտի վերաբերյալ տարբեր թեմատիկ ուղղությունների քննարկմանը: Ինչպես արդեն նշվել է, բոլոր մասնակիցները հանդիսանում էին մանկապարտեզ չհաճախող նախադպրոցական տարիքի երեխաների ծնողներ: Չնայած այն փաստին, որ մասնակիցներից ոչ մեկը չէր օգտվում մանկապարտեզների ծառայություններից, նրանց ընդհանուր թվից կամ 64 հոգուց միայն մի քանիսն էին կարծում, որ տնային պայմաններում խնամքն ավելի արդյունավետ է երեխաների համար, քան ինստիտուցիոնալացված խնամքը:

Քննարկումների առանցքային ուղղություններից մեկն էր ինստիտուցիոնալացված նախադպրոցական կրթության առավելությունների քննարկումը և համեմատությունը տնային պայմաններում խնամքի հետ: Ներքոնշյալ Աղյուսակում ամփոփված են վիզուալ որոշ տեխնիկաների կիրառմամբ ստացված քննարկման արդյունքները, բնութագրելու համար մասնակիցների կողմից ՎՄՁ գործառնությունների ընկալումն ու տնային պայմաններում ու հաստատություններում մատուցվող ծառայությունների որակը (տես Աղյուսակ 32): Բոլոր Ֆև-ներից արված հիմնական բացահայտումն այն է, որ երեխայի կենսական խնամքին առնչվող գործառնությունները, ինչպիսիք են սնունդը, քունն ու հիգիենան, ավելի լավ են կազմակերպվում տնային պայմաններում, քան նախադպրոցական կրթության հաստատություններում: Քննարկումների մեջ ընդգրկված բոլոր ծնողները, ներառյալ աղքատ և հեռավոր ու փոքր գյուղերի ընտանիքների անդամները, վստահ էին, որ նրանք կարող են խնամքի ավելի բարվոք պայմաններ ապահովել իրենց երեխաների համար, քան նախադպրոցական կրթական հաստատությունները, մասնավորապես պետական մանկապարտեզները: Խոսելով ՎՄՁ-ի հետ կապված այլ գործառնությունների մասին՝ բոլոր խմբերը համաձայնեցին, որ մանկապարտեզներն ավելի արդյունավետ են դրանց իրագործման հարցում, քան ընտանիքը: Դաստիարակության, քաղաքավարության նորմերի, ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության ու կոփման ուսուցանումը դիտարկվեց հավասար արդյունավետ տան պայմաններում և հաստատություններում: Այս արդյունքները ևս մեկ անգամ փաստում են, որ Հայաստանում ծնողներն ունեն հիմնականում դրական վերաբերմունք ինստիտուցիոնալացված ՎՄՁ ծառայությունների հանդեպ. ընդհանուր առմամբ նախադպրոցական կրթության կարևորության ընկալումը բավականին դրական է:

Աղյուսակ 32. Տնային պայմաններում և հաստատություններում ՎՄՁ ծառայությունների որակի համեմատություն

	Տանը	Մանկապարտեզներում, այլ նախադպրոցական կրթական հաստատություններում		
1. Խնամք /սնունդ, քուն և այլն/	+	*		
2. Դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցում		+	*	
3. Խոսքի, մայրենի լեզվի հաղորդակցման զարգացում		+	*	
4. Դաստիարակություն, քաղաքավարության նորմերի ուսուցանում	+	**	+	*
5. Ինքնուրույնության, տրամաբանելու հմտությունների փոխանցում		+	*	
6. Ստեղծագործականության զարգացում /նկարչություն, երգ, պար/		+	*	
7. Ֆիզիկական դաստիարակություն, կոփում	+	**	+	*

* Արդյունքները ստացվել են 9 Ֆև-ներում **Արդյունքները ստացվել են 1 Ֆև-ում

*** Արդյունքները ստացվել են 2 Ֆև-ներում:

Լավ սննդից և հիգիենայից բացի, որպես տնային պայմաններում երեխաների խնամքի առավելություններ, մասնակիցներն առանձնացրել են երեխայի սերտ կապը ընտանիքի այլ անդամների հետ, ավելի ինտենսիվ շփումը ծնողների և տատիկ-պապիկների հետ, ամուր դիմադրողական համակարգի առկայությունն ու սուր-վարակային հիվանդություններով հիվանդանալու հազվադեպությունը (տես Աղյուսակ 33): Պետք է նշել, որ սուր-վարակային հիվանդություններն ու առողջական խնդիրները հատկապես կարևորվել են աղքատ ընտանիքների կողմից: Աղքատ ընտանիքների հետ ՖԻՆ-ների ընթացքում մասնակիցների հիմնական մտահոգությունն իրենց երեխաների առողջությունն էր: ՖԻՆ մասնակիցներից շատերն են նշել իրենց երեխաների հիվանդությունների մասին: Մարզերի աղքատ ընտանիքների ծնողներից շատերն իրենց երեխաներին չեն տանում մանկապարտեզ նրանց վատ առողջության ու թույլ դիմադրողականության պատճառով:

Աղյուսակ 33. Տնային պայմաններում խնամքի առավելություններն ու թերությունները

	Առավելություն	Թերություն
Երեխայի հետ կապված	Հազվադեպ են հիվանդանում, ավելի ամուր դիմադրողականություն, ավելի լավ սնունդ, ավելի շատ սեր և ուշադրություն	Էգոիզմ, շփման պակաս, գիտելիքի պակաս, ամաչկոտություն, դաստիարակության պակաս, զբաքմունքի պակաս, համակարգից, հեռուստացույցից, սերիալներից կախվածություն
Խնամքն իրականացնողի հետ կապված	Ուժգին կապ երեխայի հետ, փոխվստահություն	Մորից կախվածություն, ազատ ժամանակի պակաս, աշխատանք ունենալու անհնարինություն, ճանձրալի առօրյա
Ընտանիքի հետ կապված	Ավելի արդյունավետ հաղորդակցում, ուժգին կապ ընտանիքի մեծերի հետ	հոգնածություն, որոշ կոնֆլիկտների/ վիճաբանությունների առաջացում

ՖԻՆ-ներից արված մեկ այլ բացահայտումներից է այն, որ նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաների խնամքն ավելի հաճախ կազմակերպվում է տատիկ-պապիկների կողմից Երևանում, քան մարզերում: Հատկանշական է, որ Երևանում տատիկներն աջակցում են իրենց դուստրերին կամ հարսներին երեխայի խնամքի հարցում, մինչդեռ գյուղական համայքներում մասնակիցները հաճախ պատմում էին, որ սկեսուրները չեն օգնում երեխային խնամել. ավելին՝ հաճախ առաջանում են տարաձայնություններ երեխայի խնամքի ու դաստիարակության հետ կապված: Գյուղական բնակավայրերում ընտանիքները հիմնականում ընդլայնված կազմ են ունենում. ավանդաբար երիտասարդ ամուսիններն ապրում են իրենց ծնողների հետ: Սակայն քննարկումների արդյունքում բացահայտվեց սերունդների միջև գոյություն ունեցող երեխայի խնամքի հետ կապված ներընտանեկան տարաձայնություններ: Պարզվում է, որ եթե մայրը աշխատանք չունի, ապա գյուղական բնակավայրերում ընտանիքի մեծերը հիմնականում չեն աջակցում երեխային խնամելու պարտականությունների հետ կապված: Նրանք նախընտրում են երեխայի հետ խաղալ կամ զբոսնել մի քանի ժամով, սակայն սննդի, հիգիենայի, քնելու և այլ հարցերը մեծամասամբ կազմակերպվում են մայրերի կողմից: Այս կապակցությամբ մեկ այլ անհանգստացնող բացահայտում կատարվել է ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ ՖԻՆ-ների ընթացքում. հաճախ ընտանիքի ավագ սերնդի ներկայացուցիչները թերագնահատում են բժշկական ծառայությունների կարևորությունն ու երեխային նախադպրոցական կրթական կամ վերականգնողական ծառայություններում ներառելու կարևորությունը: Երեխաների մայրերը բողոքում էին, որ հաճախ սկեսուրներն ու սկեսրայրները մորն են մեղադրում հաշմանդամություն ունեցող երեխա ունենալու համար, ինչպես նաև դժգոհում են մայրերի կողմից նախաձեռնվող բժշկական ու վերականգնողական ծառայությունների վրա կատարվող ավելորդ ծախսերից: ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողները տարաձայնություններ ու վիճաբանություններ են ունենում ընտանիքում ավագ սերնդի ներկայացուցիչների հետ՝ կապված երեխայի ներառականության անհրաժեշ-

տույթյան հետ: Ավագ սերունդն առավել հակված է թաքցնել ընտանիքի խնդիրները հասարակությունից և ԿԱՊԿՈՒ երեխաներին մեկուսացնել տանը:

Ֆեյս-ներից մեջբերումներ՝ երեխայի խնամքի հետ կապված տարաձայնությունների վերաբերյալ

Տավուշի Ֆեյս, ԿԱՊԿՈՒ երեխաներ.

«Ինչպես Քրիստինան նշեց, մենք միշտ մենակ ենք մեր պրոբլեմներով, անգամ եթե մենք ունենք ամուսին, ամուսնու ծնողներ, միայն մենք ենք հասկանում մեր կարիքները: Օրինակ՝ ես շատ եմ ուզում երեխայիս փանել ամեն փող՝ մանկապարտեզ, «Հույսի Կամուրջ», Արարկիր կենտրոն, բայց ոչ մեկը չի օգնում... Ինչո՞ւ պետք է հարազատներն օգնեն: Նրանք սիրում են երեխային, սակայն չեն հասկանում, թե ինչ է կատարվում ու չեն պարկերացնում, որ դա կարևոր է երեխայի համար...»

- Հս, արդեն չորս փարի է, ինչ ես բացառում եմ ամուսնու ծնողներին, որ դա կարևոր է, սակայն միշտ նույն պատասխանն են փախի, որ «մեկ է՝ ամեն ինչ նույնն է լինելու, անգամ եթե դու երեխային ոչ մի փող էլ չփանես»: Բայց ես անում եմ, քանի որ ուզում եմ ամեն ինչ անել, որ օգնեմ երեխայիս... Ընտանիքս չի ցանկանում օգնել ինձ ո՛չ ֆինանսապես, ո՛չ էլ ֆիզիկապես, նրանք ընդամենը խոսում են...

- Ճիշտ է, նրանք անգամ ասում են, որ իմ մեղքն է, որ մենք այսպիսի երեխա ունեն:

- Հս, օրինակ, երբ երեխային շնչառական սարքով հիվանդանոցից փրկեցինք ու ես սկսեցի անել այն ամենը, ինչ բժիշկն էր ասել, սկեսուրս սովորաբար ասում էր. «Ինչո՞ւ ես նման բաներ անում: Դա քո մեղքն է, որ երեխան սովորում է այդ սարքին»: Ես չեմ կարողանում բացառել նրան, որ դա կարևոր է, ու սա բժշկի խորհուրդներն են: Նա ասում է. «Չէ՛, էդ դու քեզանից ես վերցրել ու դու անում ես այն, ինչ ուզում ես...»»

Վայոց Ձորի Ֆեյս, բարեկեցիկներ

«-Տան բացասական կողմն այն է, որ հաճախ մայրը կամ հայրն ասում են. «Մի արա այդպես», մեկ էլ հեյոռ փափրկն ասում է. «Դե լավ, բան մի ասեք, թող անի:» Օրինակ՝ ես ասում եմ՝ «Հերիք ա, էլ մանդարին չուրեա:», մեկ էլ փեանեմ ինքը Էրեխուն փախի ա ու ասում ա՝ «Բանի փող մի դիր, թող ուրի, նորմալ է...»:

- Ճիշտ է, կամ էլ երբ դու բարկանում ես երեխայիդ վրա, նրանք սկսում են պաշտպանել նրան...»

Ֆեյս մասնակիցների քննարկման հաջորդ խնդիրն էր գնահատել իրենց համայնքներում նախադրյալական հաստատությունների կարևորությունն ու մատչելիությունը և փորձել դուրս բերել մուտքի հիմնական խոչընդոտները: Աղյուսակ 34-ում ամփոփված են բոլոր 9 Ֆեյս-ների կողմից տրված մանկապարտեզների, նախադրյալական կրթության դասընթացների և զարգացման խմբակների (ինչպիսիք են օրինակ՝ սպորտային, արվեստի) վերաբերյալ միջին գնահատականները: Նշված բոլոր հաստատությունների կարևորությունը ծնողների կողմից գնահատվել է շատ բարձր (առավելագույն 5 միավորի մոտ): Ուշագրավ է, որ սպորտային, արվեստի և այլ խմբակների կարևորության գնահատականներն ամենաբարձրն են: Մանկապարտեզներն ու դպրոցահեն նախակրթարանները հավասարապես կարևոր են համարվել՝ չնայած դրանց մատչելիության գնահատականները 3 և 3-ից պակաս են:

Աղյուսակ 34. Նախադպրոցական կրթական ծառայությունների կարևորությունն ու մատչելիությունը, հիմնական սահմանափակումները

Նախադպրոցական կրթական ծառայություններ	Կարևորությունը /1-5 բալ/	Մատչելիությունը /1-5 բալ/	Խոչընդոտներ, սահմանափակումներ
Մանկապարտեզ	4.8	3	Գյուղական ու փոքր քաղաքային բնակավայրերում պակաս/ բացակայություն, փոխադրման/ տրանսպորտի հետ կապված բարդություններ, հերթեր/ գերծանրաբեռնվածություն, երրորդ անձի/միջնորդի միջամտություն, վճարներ, խտրական վերաբերմունք, ոչ պաշտոնական դրամահավաքներ, վատ շենքային պայմաններ, դայակների պակաս պակաս
Նախադպրոցական կրթության դասընթացներ	4.7	2.3	Գյուղական ու փոքր քաղաքային բնակավայրերում պակաս/ բացակայություն, փոխադրման/ տրանսպորտի հետ կապված բարդություններ, վճարներ, օրվա և ամսվա կտրվածքով կարճատևություն
Զարգացման խմբակներ (սպորտ, արվեստ և այլն)	5	2	Գյուղական ու փոքր քաղաքային բնակավայրերում փոխադրման/ տրանսպորտի հետ կապված բարդություններ, վճարներ

Որպես փաստ, պետք է արձանագրել, որ խմբակների մատչելիությունը երեխաների համար ամենացածրն է (միջին գնահատականը 2 է): Փոքր գյուղական բնակավայրերում սովորաբար չկան որևէ տեսակի հարմարություններ սպորտային խմբակների գործունեության համար, հատկապես լողի, որը բազմիցս նշվել է որպես ցանկալի ծառայություն երեխաների համար: Հատկապես սպորտի, լողավազանի և դահլիճների անհրաժեշտությունն էական է ԿԱՊԿՈՒ ընտանիքների համար, քանի որ նրանց երեխաներն ունեն հատուկ ֆիզիկական վարժությունների կարիք: Տավուշի, Վայոց Ձորի և Արարատի մարզերի գյուղական և փոքր քաղաքային բնակավայրերում հնարավորություն չկա կազմակերպելու նման ծառայություններ: Ծնողները ստիպված են իրենց երեխաներին տանել մարզկենտրոններում կամ մեծ քաղաքներում գործող սպորտային խմբակներ, ինչը բավականին թանկ և բարդ գործ է՝ հաշվի առնելով տրանսպորտային ծախսերը: Միաժամանակ շատ բնակավայրերում գործում են ազգային պարի կամ երգի մանկական խմբակներ, սակայն վաղ տարիքի երեխաները չեն կարող հաճախել այդտեղ: Շատ դեպքերում բոլոր նշված ծառայությունները (սպորտ, պար, նկարչություն) վճարովի են, հետևաբար, հասու չեն աղքատ ընտանիքների երեխաների համար:

Այսպիսով, հիմնվելով որական տվյալների վրա, կարելի է եզրակացնել, որ ՎՄՁ ծառայություններ մուտք գործելու առումով երեխաների ամենախոցելի խումբը 4-5 տարեկանից փոքր տարիքի երեխաներն են: Երեխաների համար գործող ծառայությունների մեծ մասը նախատեսված են ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համար, իսկ առավել փոքրահասակները հիմնականում մնում են տանը կամ խաղում են բակում, որտեղ չկան

խաղահրապարակներ կամ հատուկ հարմարություններ: Տան պայմաններում խնամքի մեկ այլ խնդիր, որ նշվել է հատկապես բարեկեցիկ մասնակիցների կողմից, երեխաների կախվածությունն է համակարգչից, համակարգչային խաղերից, հեռուստահաղորդումներից և սերիալներից: Մասնակիցները նշել են, որ հաճախ նրանց չի հաջողվում երեխաներին զբաղեցնել այլ զարգացնող խաղերով կամ գործողություններով. համակարգիչները դառնում են երեխայի «ամենամոտ ընկերը» (տես Աղյուսակ 35):

Աղյուսակ 35. Այլընտրանքային նախադպրոցական կրթական ծառայությունների առավելությունների/թերությունների վերաբերյալ ընկալումները

Նախադպրոցական կրթական ծառայություններ	Առավելություն	Թերություն
Նախադպրոցական կրթության դասընթացներ, դպրոցահեն նախակրթարաններ	Դառնում են ակտիվ, շփվող, ամաչկոտ չեն, պատրաստ են դպրոցին, սովորում են օտար լեզուներ	Կարճատևություն, սննդի բացակայություն, հեռավորություն, համայնքներում պակաս, երեխային գիտելիքով գերժանրաբեռնում, խաղերի պակաս
Զարգացման խմբակներ (սպորտ, արվեստ և այլն)	Զարգացնում են կարողություններն ու տաղանդները, գործում են փոքր խմբերով և ցուցաբերում անհատական մոտեցում	Կարճատևություն, սննդի բացակայություն, հեռավորություն, գյուղական բնակավայրերում դրանց բացակայություն

Մասնակիցները քննարկել են ՎՄՋ ծառայությունների այն առաջնահերթությունները, որոնք իրենց մարզերում պետք է ավելի մեծ ուշադրության արժանանան պետական և համայնքային մակարդակով: Առաջին 8 մարտահրավերները ներկայացված են Աղյուսակ 36-ում: Զեռուցման խնդիրը հատկապես արդիական է մարզերում. մանկապարտեզների աշխատանքը կրում է սեզոնային բնույթ, քանի որ չկա կենտրոնացված ջեռուցման համակարգ: Տավուշի մարզում ծնողներն անհանգստանում են իրենց երեխաների անվտանգության համար մարզային մանկապարտեզներում, որտեղ էլեկտրական կամ փայտե վառարաններ են օգտագործվում: Վայոց Ձորում ծնողներին մտահոգում է սննդի որակը: Նրանք նշում են, որ պետական մանկապարտեզներում երբեմն երեխաներին թույլատրում են իրենց հետ սնունդ կամ ջրով շիշ բերել մանկապարտեզ: **Աղյուսակ 36. Նախադպրոցական կրթական հաստատությունների մարտահրավերների խմբային ընկալումը**

Մարտահրավեր	Առաջնահերթություն
1. Զեռուցում	1
2. Մսունդ	2
3. Գույք /փափուկ և կոշտ կահույք/	3
4. Կենցաղային պարագաներ /սպիտակեղեն, սրբիչներ, սպասք/	4
5. Շենքային պայմաններ	5

6. Խաղալիքներ և ուսումնասօժանդակ նյութեր	6
7. Սպորտ դահլիճ	7
8. Հակավարակային և սանիտարահիգիենիկ միջոցառումներ	8

Այնուամենայնիվ, բոլոր տիպի ՖԻՆ-ների մասնակիցների մեծամասնությունը համաձայնել է, որ նրանք իրենց երեխաներին կտանեին պետական մանկապարտեզ անկախ ծառայությունների որակից, եթե ունենային աշխատանք, տարածքում գործող մանկապարտեզներ լինեին ու վճարները մատչելի լինեին: Սա նշանակում է, որ ծառայությունների որակը ամենավերջին բանն է, որ հետ է պահում ծնողներին՝ իրենց երեխաներին մանկապարտեզ տանելու հարցում:

ԸՆԴԳԻԿՎԵԼՈՒ ՁԱՆՔԵՐՆ ՈՒ ՄՈՒՏՔԻ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

ՖԻՆ մասնակիցներից մեծ մասը քայլեր են ձեռնարկել իրենց երեխաներին մանկապարտեզ տեղավորելու ուղղությամբ: Բացահայտվել է ընդամենը 2-3 դեպք, երբ նախադպրոցական հաստատությունից դուրս մնալը ընտանիքի սուբյեկտիվ որոշման/ընտրության արդյունք է՝ հիմնված տնային պայմաններում խնամքը ինստիտուցիոնալացված խնամքից նախընտրելու վրա: Դեպքերի մեծ մասում երեխաները դուրս են մնացել նախադպրոցական կրթությունից կամ համայնքում/մոտակայքում պետական մանկապարտեզ չլինելու պատճառով, կամ ընդունելության խոչընդոտների հետևանքով:

Հատկանշական է, որ պետական մանկապարտեզ հաճախելու անհաջող փորձերից շատերը որևէ կերպ կապված են երեխաների հանդեպ վերաբերմունքի հետ: Ինչպես արդեն պարզ էր դարձել հարցումների ժամանակ, երեխային մանկապարտեզ տանելու փորձ ձեռնարկած ծնողներից շատերը ստիպված են եղել հանել երեխաներին այնտեղից, քանի որ երեխաները լաց են լինում, իսկ դաստիարակները չեն կարողանում շահել նրանց վստահությունը: ՖԻՆ-ների ընթացքում նույնպես ծնողները պատմում էին լացող երեխաների և անտարբեր դաստիարակների մասին պատմություններ: Ենթադրաբար այս խնդիրը լայն տարածում ունի ՀՀ նախադպրոցական կրթական հաստատություններում. այդ պատճառով, կարելի է պնդել, որ **մանկապարտեզում սկսնակ երեխայի հետ աշխատող մասնագետների համար գոյություն ունի ուղեցույցների պակաս՝ երեխաների հետ համագործակցության ձեռք բերման հմտությունների մասով:** Այս խնդրի հետ կապված անհրաժեշտ է մշակել հատուկ չափորոշիչներ, ինչպես նաև կազմակերպել հատուկ խորհրդատվություն սկսնակ երեխաների ծնողների համար:

ՖԻՆ-ներից մեջբերումներ՝ լացող երեխաների վերաբերյալ

Տալուշի ՖԻՆ, բարեկեցիկներ.
 «- Իմ երեխան 3 տարեկան էր: Նրան մի շաբաթ տարանք մանկապարտեզ, բայց նա հա լացում էր ու մենք նրան հանեցինք... Ոչ մի ձևով չկարողացավ հարմարվել նրանց... Մի օր զանգեցին մանկապարտեզից ու ասացին. «Արի՛ տար երեխայիդ, նա չի կարող այստեղ մնալ»:
 - Փոքրս լացում էր մեծ տղայիս համար ու նրան չընդունեցին մանկապարտեզ...»

Տալուշի ՖԻՆ, աղքատներ.
 «- Մեծիս տեղավորել էի մանկապարտեզ, բայց նա լացում էր, ուզում էր տանը մնալ: Մի օր էլ հայրը գնաց մանկապարտեզ ու տեսավ, որ նա լացում է: Նա ասաց. «Բավական է, հանիր նրան մանկապարտեզից»: Որոշ ժամանակ անց, երբ նորից տարանք մանկապարտեզ, նրանք (մանկապարտեզի անձնակազմը) ասացին. «Նա միշտ լացում է: Մենք չենք կարողանում լեզու գրել նրա հետ»: Բնականաբար, մենք հանեցինք նրան ու հիմա սպասում ենք՝ դպրոցի ժամանակը գա...»

- Իմ երեխան միշտ լացում էր... այ՛ էթե ուրիշ դաստիարակ լինե՞ր... երբ առաջին օրը դուրս եկա սենյակից ու կանգնեցի դրսում, լսեցի, թե ոնց է գոռում լացող երեխաների վրա... Նա գոռում էր. «Ձեններդ կտրեք, ով լացի մամայի հեղուկից, կտանի իրան ինչ եմ անելու...»: Երեխաս վախեցել էր, եկավ տուն ու հրաժարվեց նորից գնալ պարտեզ:

Վայոց Ձորի ՖԽԲ, աղքատներ

«- Ամենափոքր տղաս շատ կապված է ինձ: Նա մենակ չի կարող մնալ ու միշտ իմ հեղուկից լացում է... Մենք փորձել ենք նրան մանկապարտեզ տանել, բայց նա շատ է լացել, դրա համար որոշեցինք որոշ ժամանակ սպասել:»

Նախադպրոցական կրթությունից դուրս մնալու պատճառներից են նաև մանկապարտեզի ծառայությունների որակի վերաբերյալ հարցվողների մտահոգությունները՝ մասնավորապես կապված հաստատություններում խմբերի գերծանրաբեռնվածության ու երեխաների խնամքի համար պատասխանատուների թվի պակասով: **Հաստիքների պակասը և դաստիարակի օգնականի գերծանրաբեռնվածությունը հանգեցնում են երեխաների նկատմամբ ուշադրության պակասի և խնամքի որակի անկման:** Նման ընկալումը հաճախ ստիպում է ծնողներին հանել իրենց երեխաներին մանկապարտեզներից կամ ընտրել անհատական ծառայություններ, ինչպիսիք են՝ խմբակները կամ, այսպես կոչված, «մանկական քոլեջները» (դպրոցին նախապատրաստող դասընթացներ):

ՖԽԲ-ներից մեջընդունված վար խնամքի վերաբերյալ

Տալուշի ՖԽԲ, բարեկեցիկներ

«- Երեխան շատ էր հիվանդանում, քանի որ քնում էր, քրտնում ու մանկապարտեզում ոչ ոք չէր փոխում հագուստը... Պարճառն այն է, որ խմբում շատ երեխաներ կան ու անհնար է բոլորի հագուստը միաժամանակ փոխել: Մինչև դաստիարակները հասցնեն երեխաների մի մասի հագուստը փոխել, մյուս մասն արդեն մրսում ու հիվանդանում է...»

- Մյուս խնդիրն էլ այն է, որ նրանք կարգին չեն կազմակերպում երեխաների քունը... Իմ երեխան 2 ամիս մանկապարտեզ հաճախելիս չէր քնում այնպես: Ես սրիպված գնում էի ու նրան տուն բերում, որ քնի:»

Երևանի ՖԽԲ, բարեկեցիկներ

«- Մի խմբում երեխաները շատ շատ են: Նրանք չեն կարող հավասարապես ուշադրություն դարձնել բոլորին: Հաճախ եմ լսել, որ երեխաները քրտնում են ու նրանք (դաստիարակների օգնականները) ժամանակ չեն ունենում փոխել երեխաների հագուստը: Պարզապես հնարավոր չէ միաժամանակ փոխել 37 կամ 40 երեխայի հագուստը:

- Մեկ այլ խնդիր էլ կա. երբ մի անգամ մերա ննջասենյակ, երեխաները քնած էին ու շատ վար հոյ էր գալիս այնպեղից: Ես հարցրեցի՝ արդյոք նրանք պատրաստվում են օղափոխել սենյակը, երբ երեխաներն արթնանան, ուսուցիչն ասաց, որ դա հնարավոր չէ, քանի որ երեխաները պետք է սնվեն նույն սենյակում, իսկ պատուհանը բացելու դեպքում ցուրտ կլինի... Այսինքն՝ նրանք հաճախ նույն սենյակը օգտագործում են քնելու, սնվելու ու խաղալու համար:»

Բոլոր տեսակի ՖԽԲ-ների մասնակիցների կարծիքով մանկապարտեզ չտանելու ամենատարածված պատճառը մուտքի խոչընդոտներն են: **Մուտքի խոչընդոտների շարքում մասնակիցներն առաջին հերթին նշում են պետական մանկապարտեզներում տեղ չլինելն ու գրանցման երկար հերթերը:** Պետական հաստատությունների պակասն ակնհայտ է, հասկանալի է նաև, որ դժվար է բարձրացնել ընդգրկվածության ցուցանիշն առանց ավելացնելու դրանց թիվն ու ծածկույթը, սակայն ամենացավալի կողմերից մեկն այն է, որ մանկապարտեզ մուտք գործելու համար տարածված են կոռուպցիոն դիսկ պարունակող մեխանիզմները, ինչպիսիք են՝ կաշառքը, երրորդ անձի կամ միջնորդի ներգրավվումը, մանկապարտեզի տնօրենի կամ աշխատակիցների անհանդուրժող կամ կոպիտ վերաբերմունքը դիմորդների (երեխաների ծնողների) նկատմամբ:

**Ֆեյսբուքի մեջբերումներ գերծանրաբեռնվածության և երկար հերթերի վերաբերյալ
Տալուշի Ֆեյսբ, աղքատներ**

«... տեղ չկա... մահճակալներ չկան, սենյակը փոքր է... կան 4 տարեկան երեխաներ, ում հերթը կգա 2 տարուց և կան 2 տարեկան երեխաներ, որոնք արդեն գնում են... ես կարծում եմ, որ սա ճիշտ է...»

- Ես ամեն ինչ արեցի, որ երեխայիս մանկապարտեզ տեղավորեմ, բայց տեղ չկա... Անգամ երեխաների համար աթոռներ չկան նստելու... Ինձ ասել էին... «Եթե մի երեխա ավել ընդունենք, նա սրիաված կլինի կանգնած հաց ուտել»...»

Վայոց Ձորի Ֆեյսբ, բարեկեցիկներ

«... պետք է երեխային նախօրոք գրանցել, ես գրանցելու եմ օգոստոսին, որ նա մանկապարտեզ հաճախի հաջորդ սեպտեմբերից...»

Վայոց Ձորի Ֆեյսբ, աղքատներ

«...Ես դաստիարակին անձամբ եմ լավ ճանաչում, բայց տեղ չկա... Ասում են... «Սպասիր, մենք քեզ տեղյակ կպահենք»:

-... արդեն մի քանի ամիս է, ինչ մեր հերթին ենք սպասում...»

Երևանի Ֆեյսբ, աղքատներ

«...մենք մեր հերթին ենք սպասում, որը երբեք չի հասնի... երբ գնացի բողոքելու, ասացին. «Անհնար է, ամեն ինչ թափանցիկ է. ասիա ցանցում գրանցամատյանը»: Հեղու բացատրեցին, թե իբր ինչ-որ բան էր եղել, քանի որ երեխայի լուսանկարը չկար: Ես ասացի. «Ես երեկ մեկ այլ մանկապարտեզ էի գնացել ու առցանց գրանցամատյանում նկարը կար»: Հեղու նա (տնօրենը) հասկացավ, որ ես կարող է գնամ ու բողոք ներկայացնեմ քաղաքապետարան, ասաց. «Լավ, մենք Ձեզ նոյեմբերին կգանգենք: Հիմա արդեն դեկտեմբեր է, իսկ նրանք դեռ չեն գանգել»:

Մասնակիցները բազմաթիվ պատմություններ ներկայացրեցին այն մասին, թե ինչպես են փորձեր ձեռնարկել ընդունվելու կամ հերթում առաջ անցնելու համար ներգրավելու բարեկամների, ընկերների կամ ծանոթների: Համայնքային իշխանությունները, բարձրաստիճան պաշտոնյաները, տեղական ինքնակառավարման պաշտոնյաներն ընկալվում են որպես մանկապարտեզ ընդունվելու հնարավորությունն ապահովող հիմնական օղակներ: Որոշ մասնակիցներ պատմել են, որ իրենցից/իրենց ընկերներից պահանջել են կաշառք կամ ոչ պաշտոնական վճարներ (այսպես կոչված «մադարիչ»)՝ մանկապարտեզի տնօրենների համար, որպեսզի վերջիններս կազմակերպեն իրենց երեխայի ընդունելությունը կամ գրանցումը ցուցակում: Վայոց Ձորում ՖԲ մասնակիցները նշել են, որ իրենց մարզի մանկապարտեզներում կաշառակերություն չկա, սակայն բոլոր ծառայություններն ու հաստատությունները գործում են վճարովի հիմունքներով: Հատկանշական է, որ որակական տվյալները գալիս են հիմնավորելու հարցման արդյունքներն այն մասին, որ հատկապես աղքատ ընտանիքների նկատմամբ են ստեղծվում մուտքի լրացուցիչ խոչընդոտներ: Աղքատ ընտանիքների հետ ՖԲ-երի արդյունքները ցույց են տալիս, որ մանկապարտեզի տնօրենները շատ հաճախ անբարյացկամ և կոպիտ վերաբերմունք են ցուցաբերում նրանց նկատմամբ. ծնողներն արժանանում են ընտրողական վերաբերմունքի՝ ելնելով նրանց կենսամակարդակից: Ըստ արդյունքների՝ աղքատ ընտանիքներն ավելի հաճախ են ենթարկվել ոչ պաշտոնական վճարների կամ նվերների կորզման, քան բարեկեցիկները: Ամենայն հավանականությամբ, սա կարող է բացատրվել նրանով, որ մանկապարտեզների տնօրեններն ունեն թաքնված մտադրություն չընդունելու սոցիալապես խոցելի երեխաներին, հետևաբար, նրանք ստեղծում են լրացուցիչ խոչընդոտներ ծնողների համար՝ պարտադրելով նրանց ինքնուրույն հրաժարվել հաստատությունից: Երբեմն նման բան տեղի է ունենում, քանի որ ընտանիքները չեն կարող թույլ տալ պահանջված գումարները, իսկ երբեմն էլ՝ քանի որ նրանք աշխատակազմի կողմից վիրավորված

ու նվաստացված են իրենց զգում: Այս երևույթը հատկապես տարածված է Երևանում, որտեղ պետական մանկապարտեզները գերծանրաբեռնված են: Իհարկե վերջերս Երևանի քաղաքապետարանի կողմից մշակված էլեկտրոնային գրանցման համակարգը ինչ-որ չափով բարելավել է մուտքի ընթացակարգերի թափանցիկությունը, այնուամենայնիվ, չկան ելակետային տվյալներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ համեմատություն կատարել ոլորտում տեղի ունեցող փոփոխությունների մակարդակի ու ծավալի վերաբերյալ: Հետազոտությունը ցույց է տալիս, որ կաշառքների ու կոռուպցիայի հիմնախնդիրը դեռևս արդիական է, և այն վերջնական լուծում չի ստացել:

Տեղ-ներից մեջբերումներ կոռուպցիայի, կաշառակերության վերաբերյալ

Տալուշի Տեղ, աղբարներ

«Շատ հաճախ նրանք գրանցում էին իրենց ծանոթներին կամ բարեկամներին: Օրինակ՝ Կարենը էի երեխային գրանցելու Իջևանում, որտեղ ինձ ասացին. «Մենք տեղ չունենք», բայց հեղու ծանոթ մեջ գցեցինք, ու արդեն ասացին, որ մի տեղ ազատվել է...»

Երևանի Տեղ, աղբարներ

«Գնացի մանկապարտեզ, փնտրեմ ասաց. «Ես զբաղված եմ», հաջորդ անգամ ասաց. «Տեղ չկա»: Նույն խնդրով 2-3 անգամ գնացի: Տնօրենը նստած էր համակարգչի դիմաց ու անգամ չէր ցանկանում դեմքիս նայել, զոռով էր հեղու խոսում, ոնց որ չուզենար մի քան ասել... Հիասթափվեցի ու ինքս ինձ ասացի. «Հավ, երեխաներս փանք կմնան...»

- Երեխայիս գրանցել էի, բայց նրանք (մանկապարտեզի անձնակազմը) ինձ զանգ տվեցին ու ասացին, որ տեղ կա միայն այն ժամանակ, երբ երեխան արդեն դպրոց էր գնում: Ես մի քանի տեղ դիմել էի, սակայն «մադարիչ» էր պետք կամ ծանոթ խառնել...

«...Եկա մանկապարտեզի փնտրեմ մոտ ու ասացի. «Ես գիտեմ, որ երեխաներին գումարով եք ընդունում: Ես պատրաստ եմ վճարել...»: Նա ասաց. «Հայ, ինչ եք ասում, երեքը»: Բայց ընկերներիցս մեկն ինձ ասել ա, որ նա 80-100 000 դրամի դիմաց երեխա է ընդունում մանկապարտեզ...»

- Երեխայիս գրանցել էի, բայց փնտրեմ շատ ագրեսիվ ու կոպիտ էր: Սովորաբար իրանք «մադարիչ» կամ գումար են ակնկալում, բայց երբ ներս ես մտնում, էսպես են վերաբերվում քեզ, որ ուզում էս շուր դուրս գալ...

- Այո՛, պետական մանկապարտեզում նրանք 8000 դրամ են պահանջում, փնտրեմ է ինձ ասել այդ մասին: Ես ասացի, որ անգամ պատրաստ եմ 10 000 դրամ վճարել, միայն թե ընդունեք երեխայիս: Այժմ սպասում ենք...

«...երբ գնացի փնտրեմ մոտ, նա կանգնած էր միջանցքում ու անգամ ուշադրություն չդարձրեց ինձ վրա: Զբաղված էր երևում ու ինչ-որ տեղ էր շրայալում... ես նրան գումար առաջարկեցի, բայց նա ասաց. «Անհնար է... ես չեմ կարող ընդունել Ձեր երեխային...»

- Ես դիմեցի փնտրեմին, նա ասաց. «Գնացեք վարիչի մոտ... Նա էլ չօգնեց: Հեղու ինձ ասացին, որ ավելի լավ է գրնես ինչ-որ ծանոթ, բայց ինձ չհաջողվեց... Ես պետք է գրանցեմ երեխայիս ու սպասեմ իմ հերթին, բայց մեր հերթը կգա երևի այն ժամանակ, երբ երեխան արդեն 7 տարեկան կլինի...»

- Բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նկարները տարել էի: Հեղու նա (փնտրեմ) տղայիս ասաց, որ ինձ ասի, որ ես պետք է վճարեմ 8000 դրամ: Ես վճարեցի 10 000 դրամ ու նա մեզ գրանցեց: Բայց մեր հերթը կգա միայն 7 ամսից:

- Միակ քան, որ կցանկանայի տեսնել, դա նորմալ վերաբերմունքն է՝ անկախ նրանից, թե ով ես դու. երիտասարդ ես, պատանի, թե ծեր կին... Ես շատ կուզենայի, որ նրանք (անձնակազմը) քեզ չդարեն քո կարգավիճակով, այլ անձի տեսանկյունից... Նրանք նայում են, թե ով է ջիպով գալիս, կամ արդյոք երեխան թանկարժեք հագուստ է կրում: Այս դեպքերում նրանք ներողություն կխնդրեն ու կժպտան, բայց եթե դու գալիս ես Օ6-ով (սովետական հին ավտոմեքենա) առանց ծամոնի, առանց կարգին դիմախարդարման և հագուստի, ապա նրանք անգամ ուշադրություն չեն դարձնի քեզ...»

Երևանի ՖեՔ, բարեկեցիկներ

«Որոշ մարդիկ ասում են. «Դու պետք է «մաղարիչ» փաստարկ», մյուսներն էլ. «մեկին գրիր քաղաքապետարանում, որ գործդ առաջ փանի...»

-Մի օր գնացի փեսանեմ, թե երբ է մեր հերթը գալու: Նա նայեց... ու ասաց. «Դուք 1000-րդ քանիսն եք»: Բայց ես հիշում էի, որ նախորդ անգամ, որ գնացել էի, մենք 500-րդ փողով էինք: Սկսեցի գոգոռալ: Հետո մենք համայնքապետարանում մարդ ճարեցինք, ով զանգ կապարեց ու հաջորդ օրը մեզ հետ զանգեցին ու ասացին, որ շուրջով մեզ կընդունեն: Հիմա սպասում ենք»

Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած ամենախոցելի խումբը ԿԱՊԿՈՒ երեխաների խումբն է: Հայաստանի տարբեր մարզերում ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների հետ անցկացվել է 3 ՖԽ: Հարկ է նշել, որ մասնակիցների հավաքագրումը տեղի է ունեցել մարզում աշխատող ՀԿ-ների և պետական մարմինների միջոցով, հետևաբար, նրանք հիմնականում «ակտիվ» մայրեր են. մայրեր, ովքեր ջանում են իրենց երեխաներին ներգրավել տարբեր ծրագրերի մեջ և լիովին կիսում են համընդհանուր ընդգրկվածության և ներառական նախադպրոցական կրթության գաղափարը: Այդուհանդերձ, պարզվել է, որ նրանք բոլորը բախվել են բազմաթիվ խոչընդոտների իրենց երեխաներին պետական ներառական նախակրթական հաստատություններ ընդգրկելու ընթացքում: ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողներին պետական մանկապարտեզներում առավել հաճախ պարզաբանվել է, որ հաստատությունը չունի համապատասխան պայմաններ: Նրանց չեն մերժում, սակայն բացատրում են, որ ոչ մի պարտավորություն կամ պատասխանատվություն չեն կարող կրել երեխայի խնամքի որակի համար՝ փորձելով համոզել ծնողներին, որ նրանց համար միակ լավագույն լուծումը տան պայմաններում խնամքի ապահովումն է: Սահմանափակ ընդունելության բացահայտ պատճառը պետական հաստատություններում հատուկ հարմարությունների և մասնագետների պակասն է: Սակայն ավելի խորը վերլուծության արդյունքում պարզվում է, որ տեղերում մանկապարտեզների տնօրենները շահագրգռված չեն անցնելու ներառական ծառայությունների մատուցման: Նրանք անում են հնարավոր ամեն ինչ «ավելորդ գլխացավանքից» խուսափելու համար: Ընդունելությունը հատկապես բարդ է ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար: Համաձայն ՖԽ մասնակիցների՝ մանկապարտեզների աշխատակազմի համար ավելի հեշտ է խնամել մտավոր խնդիրներ ունեցող երեխաներին, քան նրանց, ովքեր ունեն ֆիզիկական խնդիրներ ոչ միայն այն պատճառով, որ այդ դեպքում հենաշարժական հատուկ հարմարությունների և խնամքի կարիք է զգացվում, այլև քանի որ նրանք կարող են ծնողներին պատմել, թե ինչպիսի վերաբերմունքի են արժանանում մանկապարտեզում:

ՖեՔ-ներից մեջբերումներ ԿԱՊԿՈՒ երեխաների համար մուրքի խոչընդոտների վերաբերյալ

Արարաթի ՖեՔ

«- Ես աշխատում եմ ու սրիսված երեխայիս մանկապարտեզ եմ փնտրում... Շատ դժվար է, քանի որ նա չի կարողանում զուգարան գնալ ու հաճախ փակն է անում... ինչն էլ մյուս երեխաների մոտ փհաճություն է առաջացնում... Դասարանայինները չեն հասցնում խնամքի հարցում, բացի այդ էլ նա չի խոսում ու չի կարող ասել, թե ինչ է ուզում...»

- Շատ մանկապարտեզներում գործում է մի կանոն, համաձայն որի չեն ընդունում նման երեխաներ, քանի որ մանկապարտեզները ներառական չեն... Օրինակ՝ ես դիմեցի փոօրենին ու նա ինձ ուղիղ ասաց. «Արևիկ ջան, մենք չունենք ներառական ծառայություն, մենք չունենք հասարիք... Ձեր կարծիքով՝ արդյոք Ձեր երեխան ապահով կլինի՞ այսպեղ: Մենք կարող ենք վերցնել նրան, բայց ավելին մեզնից չպահանջեք...»... Օրինակ՝ երբ դառնի սինդրոմով երեխան աղջիկների մազերն է սկսում քաշել, պետք է լինի մասնագետ, ով ճիշդ կարձագանքի: Տնօրենն ասում է, որ եթե նրանք չունեն մասնագետ, ով կհասկանա այս ամենը, ինչպես կարող ենք մենք խնամել Ձեր երեխային:

- Ես գիրեն, որ մեր համայնքում չկա ներառական կրթությամբ մանկապարտեզ. հետևաբար ես ոչ ոքի չգիտեցի...

- Ես դիմել եմ, բայց նրանք հրաժարվեցին ընդունել իմ երեխային... Նրանք ասացին, որ նա կարող է հրմշրել մնացած երեխաներին և այլն... բայց նա որևէ մրավոր ինդիք չունի...

- Ես փորձել եմ խոսել մի քանի տնօրենի հետ... Անգամ առաջարկել եմ մնալ այնպեղ երեխայիս հետ մի ժամ, բայց նրանք հրաժարվեցին՝ բացատրելով, որ նրանց մոտ ներառական կրթություն չի գործում:»

Երևանի Ֆեբ

«- Ես դիմել էի ներառական մանկապարտեզ, բայց ինձ ասացին, որ կարող եմ ընդունել միայն մրավոր ինդիքներ ունեցող երեխաներին, եթե երեխան ֆիզիկական արարներ ունի, ապա չեն կարող ընդունել...»

- Նույն բանը մեզ ասացին...

- Կույր ասած՝ եթե երեխան ունի մրավոր ինդիք, ապա նրանք կարող են անել այն, ինչ ուզում են ու նա չի կարող անա պարմել այդ մասին տանը... Մինչդեռ աղջիկս կգա տուն ու բառ առ բառ կպարմի, թե ինչպես են նրան վերաբերվել... Սրացվում է, որ մեր երեխաները, ովքեր ավելի մեծ շանսեր ունեն դառնալու նորմալ քաղաքացիներ, ավելի շատ խոչընդոտներ ունեն և նրանք ամեն ինչ անում են, որպեսզի մենք հնարավորություն չունենանք...

- Այո՛, նրանք ասում են, որ քաղաքապետարանում «մարդ» պիտի ունենաս, որ հասարիք իջեցնի, եթե չունես, ապա ոչ մի բան չես ունենա...

- Մենք խոսել ենք քաղաքապետարանում աշխատող մեր ընկերներից մեկի հետ, նա ասաց, որ նրանք հարուկ հասարիք էին ավելացրել աշխատակցի համար, բայց մանկապարտեզը չցանկացավ ընդունել...

- Ես նույնպես խոսել եմ տնօրենի հետ, նա ասաց, որ չի կարող մերժել, բայց հետո ավելացրեց. «Տեսեք, մենք ունենք 30 երեխա ու 1 դաստիարակ, եթե նա խնամի Ձեր երեխային, ինչ կլինի մնացած երեխաների հետ»...

- Սա նշանակում է, որ ամեն ինչ կախված է տնօրենից...

- Այո՛, եթե ցանկություն լինի, ամեն ինչ էլ հնարավոր կլինի...

- Նրանք ուղղակի ավելորդ գլխացավանք չեն ուզում ունենալ. նրանք մրաժում են, որ եթե հանկարծ մի բան լինի երեխային, մենք նրանց ենք մեղադրելու... Դրա համար նրանք մրաժում են՝ մի երեխա է էլի, ոչ մի բան չի լինի, եթե նա տանք մնա...

- Գնացի մանկապարտեզ ու բացատրեցի, որ իմ երեխան ինքնուրույն ուրում է, խմում է, ինքն իր մասին հոգ է տանում: Իմ երեխան լիովին պարտասպ է մանկապարտեզին, բայց նրանք անգամ թույլ չտվեցին հանդիպել տնօրենին... Ամեն անգամ, որ ես գնում եմ, քարտուղարուհին ասում է, որ նա տեղում չէ, ես խոսել եմ նրա հետ հեռախոսով ու նա ասել է. «Լավ, ես գրանցել եմ Ձեզ»... այդքան բան: Ու այդ օրվանից ոչ ոք չի զանգել ինձ...»

Համաձայն ՖԽ արդյունքների՝ ԿԱՊԿՈՒ երեխաներն ու նրանց ընտանիքները մշտապես հանդիպում են խտրականության ոչ միայն պետական հաստատություններում, այլև իրենց համայնքներում: Գոյություն ունի անհանդուրժող վերաբերմունք այլ երեխաների ծնողների, հարևանների, համայնքի ղեկավարների կողմից: Մարդիկ նրանց դեմ հատուկ քայլեր չեն անում, բայց նաև չեն ցանկանում նրանց հետ մոտիկից շփվել կամ ընկերանալ: ՖԽ մասնակցիները նշել են, որ ավելի հաճախ նրանք նախընտրում են մասնավոր ծառայություններն ու հատուկ վերականգնողական կամ զարգացման կենտրոնները, որոնցում վերաբերմունքն իրենց հանդեպ շատ ավելի բարյացակամ է: Նրանց կարծիքով մասնավոր հաստատություններում անգամ այլ երեխաների ծնողներն են իրենց ավելի ընկերական պահում: Հետևաբար, նրանք նախընտրում են վճարել և վստահ լինել, որ չկա խտրականություն: Այս տարբերակը մատչելի չէ աղքատ ընտանիքների

համար, ովքեր ստիպված են մնալ անվճար հաստատություններում: Հետազոտությունը պարզել է նաև, որ նկատվում է տեղական իշխանությունների կողմից աջակցության պակաս ԿԱՊԿՈՒ երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ընդգրկման հարցում՝ ֆինանսական, տրանսպորտային միջոցների և հարմարանքների ապահովման տեսանկյունից: Որոշ մայրեր պատրաստակամ էին համագործակցել և օգնել միմյանց տրանսպորտի հարցում, սակայն անգամ այս դեպքերում գյուղապետերը ոչնչով չէին աջակցում: ՎՄՁ և վերականգնողական ծառայությունները շատ թանկ արժեն ընտանիքների համար: Նրանք ստիպված են ծառայությունների և տրանսպորտի համար և՛ շատ ժամանակ, և՛ մեծ գումարներ ծախսել: Ծախսերը մեծ են հատկապես մարզաբնակ ընտանիքների համար, որտեղ նման կենտրոնները սակավաթիվ են, և ընտանիքները ստիպված են հավելյալ միջոցներ ծախսել դեպի հեռավոր կենտրոններ/ծառայություններ փոխադրման վրա:

Հիմնվելով այդ արդյունքների վրա՝ կարելի է եզրակացնել, որ անհրաժեշտ է ստեղծել համագործակցության որոշակի ծրագրեր ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների համար՝ ստեղծելով տվյալների շտեմարաններ կամ պորտալներ, որոնց միջոցով հնարավոր կլինի կիսել ընդհանուր շահերը, համատեղել ջանքերն ու փոխադրամիջոցները, ինչպես նաև կատարել բյուջեների ավելի ծախսարդյունավետ պլանավորում: Օրինակ՝ նույն տարածքից ԿԱՊԿՈՒ երեխաներով մի քանի ընտանիքներ կարող են համատեղ ուժերով հոգալ տրանսպորտի կարիքները՝ կիսելով փոխադրման ծախսերն ու պարտականությունները կամ օգտագործելով մեկ մեքենա մի քանի ընտանիքների կարիքների համար հերթափոխով: Նման ընտանիքների համար շատ օգտակար կարող է լինել նաև պարտականությունների ժամանակացույցի մշակումը՝ որով համագործակցության ցանցի միջոցով կբաժանվեին ծնողների միջև պարտականությունները՝ բարելավելով փոխադրման և ժամանակի պլանավորման հնարավորությունները:

Ֆեսթ-ներից մեջբերումներ ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքի և աջակցության պակասի վերաբերյալ Տավուշի Ֆեսթ «- Շատ ծնողներ մեզ այնպես են նայում, կարծես մենք տարօրինակ ենք: Ես երեխաներ գիտեմ, որ սիրում են տղայիս ու միշտ բարևում են, բայց նրանց ծնողները քաշում են ձեռքից ու հեռու տանում... Երեխաների կողմից չկա վատ վերաբերմունք, բայց նրանց մայրերն են վատը, որ չեն ընկալում հիվանդության և ախտորոշման իմաստը...» Արարատի Ֆեսթ «Միշտ ինչ-որ խտրականություն կա: Բայց անկեղծ ասած ես երբեք ուշադրություն չեմ դարձնում դրան: Պատահել է, որ մեզ ուշադիր նայում էին փողոցում և այլն, բայց ես Արսենին սովորեցրել եմ ուշադրություն չդարձնել ու պատասխան չտալ, բայց, միևնույն է, ծանր է...» - Մի անգամ նա իր պրոթեզներն էր հագնում, մի ծեր կին նայեց երկինքին ու խաչակնքվեց: Ես այնքան վատ զգացի...» Տավուշի Ֆեսթ «- Լուրջ ֆինանսական խնդիրներ կան: Իմ երեխան մանկապարտեզ գնում է շաբաթը երեք անգամ մի քանի ժամով: Մնացած ժամերն անց է կացնում «Հույսի Կարմրջում»: Գյուղապետարանը վճարում է միայն այս 3 օրվա համար: Ուրիշ ոչ մի բան: - Մենք դիմել ենք համայնքապետարան օգնության համար, սակայն նրանք չեն վճարել: - Այո, ես էլ եմ դիմել: Հաշվապահը մի քանի անգամ ինձ տեսել է ու ասել, որ գումարը չի վճարվել: Ես շատ եմ խնդրել նրանց, սակայն որևէ արձագանք չկա...» - Ինչ կարող է անել տնօրենը, եթե համայնքի ղեկավարը չի աջակցում նրան: Նրանք չեն ֆինանսավորում մեզ: Ես խնդրեցի մեզ մեքենա տրամադրել, 2 հոգի ենք, որ ունենք հատուկ կարիքներ, եթե նրանք գոնե կարողանային մեքենա տրամադրել, մեզնից յուրաքանչյուրը կկարողանար իր երեխաներին հերթով տանել, բայց նրանք չօգնեցին:»	Ֆեսթ-ներից մեջբերումներ ԿԱՊԿՈՒ երեխաների նկատմամբ մասնավոր հաստատություններում և հատուկ կենտրոններում բարյացակամ վերաբերմունքի մասին Երևանի Ֆեսթ «-Մասնավոր հաստատություններն ավելի լավն են: Ոչ ոք չի նայում քեզ, ոչ ոք քո հետևից չի խոսում...Մենք հաճախում ենք մասնավոր քոլեջ, ու ես ինձ շատ հարմարավետ եմ զգում: Առաջին օրը ես ենթադրում էի, որ ականջիս մի վատ բան կհասնի, բայց ոչ մի բան...Ես ամսական 7000 դրամ եմ վճարում... Ու ես շատ գոհ եմ նրանց վերաբերմունքից: Առաջին հերթին ծնողներն ու հետո արդեն նրանց երեխաները գիտեն, որ իմ երեխան կարող է թեքվել ու նրանք միշտ օգնում են...» - Մենք հաճախում էինք Նորագյուղի ներառական մանկապարտեզը ու բոլոր երեխաներն այնքան հոգատար էին... Նրանք անգամ խնդրում էին մեզ, որ նրա կղբին նստեն և օգնեն նրան, երբ նա թեքվում է:»
--	---

Հաջորդ մարտահրավերը, որի հետ առերեսվում են ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքները, հավելյալ ծախսերն ու դժվարություններն են: Վերջիններս կապված չեն նախադպրոցական ծառայությունների հետ ուղղակիորեն, սակայն անուղղակիորեն առնչվում են ՎՄՋ կենտրոնների հետ՝ դեպի առողջապահական և վերականգնողական ծառայություններ մուտք ունենալու տեսանկյունից: Հետազոտության ընթացքում բացահայտվել են բազմաթիվ դեպքեր/պատումներ ամբուլատոր և այլ բժշկական ծառայություններում կոռուպցիոն դրսևորումների, ոչ պատշաճ վերաբերմունքի և անմատչելիության վերաբերյալ, հատկապես հատուկ կարիքների գնահատման և անվճար բժշկական ծառայությունների կազմակերպման գործընթացներում: Անձնակազմը հաճախ պահանջում է ոչ պաշտոնական վճարներ, հերթագրումն ու այցերի ժամանակացույցերը հաճախ անհամար են ընտանիքների համար: Յուրաքանչյուր երեխայի համար տարեկան 2 անգամ անվճար բժշկական ծառայության տրամադրումը չի իրականացվում ժամանակին և չի կազմակերպվում կամ մշտադիտարկվում պատշաճ մակարդակով: Երեխաների համար առող-

ջապահական ծառայությունների և դրանց հետ կապված փոխադրման ծախսերը չափազանց մեծ են, այնինչ այդ հատկացումները կարող էին ուղղվել երեխաների ՎՄՁ և ներառական կրթությանը: Երեխային զարգացման կենտրոն տանելու փոխարեն ծնողները ստիպված են կազմակերպել ֆորմալ այցեր ամբուլատորիա, կատարել ոչ պաշտոնական վճարներ և սպասել երկար հերթերում: Բացի ֆինանսական խնդիրներից, այս ամենը ծնողների և նրանց երեխաների մոտ առաջացնում է հոգեբանական ճնշվածություն և սթրես: Մասնակիցները շատ նյարդայնացած և հիասթափված էին պատմում երեխաների հաշմանդամության գնահատման հանձնաժողովների և ամբուլատոր մասնագետների հետ իրենց առնչության մասին: Հատկանշական է, որ բուժում իրականացնող հիմնական մասնագետները, ինչպիսիք են օրինակ՝ ֆիզիոթերապևտները, ավելի հանդուրժող են, քան ընդունարանների և գնահատման բաժինների աշխատակիցները:

Ֆեբ-ներից մեջբերումներ պեդական բժշկական ծառայությունների որակի վերաբերյալ Արարատի Ֆեբ

«- Ամենաահավորը բժիշկներն են: Որոշ բժիշկներ այնպես են պարասիսանում քեզ, որ դա պարզապես անտանելի է... Մեր ամբուլատորիայում մի Կլարա կա, կուզեի նրա մասին խոսել: Նա միշտ այցելության օր է նշանակում դեկտեմբերին՝ իմանալով, որ ձմռանն այնպեղ հասնելը շատ դժվար է: Ու նա դա անում է դիրմամբ՝ նպատակ ունենալով այնպես անել, որ որոշ մարդիկ չկարողանան գալ... Մենք տարեկան 2 անվճար այցելություն ունենք, բայց նրանք անում են ամեն ինչ, որ մենք չայցելենք...»

- Ճիշդ է, մենք էլ բուժման 2 անվճար կուրս ունենք, բայց նրանք չեն ուզում, որ մենք օգտվենք դրանցից...

- Նրանք ասում են. «Մենք ժամանակ չունենք, մենակ դու չես...»

- Ես իմ երկրորդ հղիության ընթացքում Արսենիս չկարողացա տանել: Նրանք անգամ չզանգեցին՝ տեսնեն՝ ինչու չեմ գնացել... Հեյրո ես հարցրեցի նրան (բժշկին). «Ինչո՞ւ չեք զանգում ու կազմակերպում Արսենի կուրսը»: Նա կուպիր պարասիսանեց. «Գիտե՞ս ինչ, քո Արսենը մեծ տղա է ու ես չպետք է զանգեմ քեզ»:

- ...Անգամ անվճար կուրսը, որը պետք է անվճար լինի, անվճար չէ...

- Այո՛, «մադարիչ» պետք է տաս (ոչ պաշտոնական վճար կամ նվեր):

- Այո՛, դու պետք է «շնորհակալություն ասես» նրանց:

- Այո՛, ես նրանց տվել եմ, որպեսզի երեխաս 2-րդ անգամը գնա:

- Ճիշդ է, մեզ երկու անգամը անվճար հասնում է, բայց եթե չզանգես ու չանհանգստացնես նրանց, անգամ դա կարող ես կորցնել...

- Այս վերջին անգամը նրանք զանգեցին ինձ, բայց միայն այն բանից հետո, երբ ծանոթ մեջ գցեցինք...»

Երևանի Ֆեբ

«- Ես մի բան պատմեմ, որ ընդամենը 2-3 օր առաջ տեղի ունեցավ: Հերթական կոմիսիայի էինք ու բաժնի վարիչը մեզ սրիպեց սպասել 4 ժամ մի թղթի կտորի համար, որը կազմվել էր շատ օրեր առաջ ու դրված էր նրա քարտուղարուհու մոտ: Հեյրո նա ասաց. «Գնացե՛ք ու վաղը եկե՛ք»: Ես ասացի. «Վաղը հանձնաժողով չկա, եթե ես վաղը գամ, ոչ ոք այսպեղ չի լինի...»

- Դե, նույն պարմությունն ինձ հետ էլ է եղել: Նրանք ինձ տարան-բերեցին մի շաքար շարունակ մինչև տվեցին այդ թուղթը...

- Հա՛, թղթաբանությունը շատ վատ է աշխատում... Ինչպես նրանք նշեցին, երեխաները սրիպված են ժամերով նստել մեքենայի մեջ կամ միջանցքներում, մի սենյակից մյուսը գնալ: Մեր երեխաները այդքան չեն դիմանում...»

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հաշվետվությունում ներկայացվել է Հայաստանում նախադպրոցական կրթության ծառայությունների մատչելիության գնահատումը՝ համապետական հարցման, փաստաթղթերի ավանդական վերլուծության և որակական հետազոտության միջոցով հավաքագրված տվյալների հիման վրա: Հետազոտությունից ստացված բացահայտումներն ու եզրահանգումները ներկայացված են ստորև:

1. Չնայած Հայաստանում որոշում կայացնողների շրջանում նկատվել է նախադպրոցական կրթության մեջ երեխաների ընդգրկվածությունը մեծացնելու և համընդանուր կրթության հայեցակարգը զարգացնելու պատրաստականությունը, այնուամենայնիվ, գործառնական մակարդակում նախադպրոցական կրթության հայեցակարգի վերջնական տարբերակի մշակումները գտնվում են անցումային փուլում: Առաջիկա տարիների ՎՄՋ ռազմավարության հիմնական բնութագրերն են՝ անցում դեպի պարտադիր նախադպրոցական կրթության 5-6 տարեկան երեխաների համար՝ այլընտրանքային առավել ծախսարդյունավետ մոդելների կիրառմամբ, նախադպրոցական կրթության տեղայնացում առավել համապարփակ հիմնական և ավագ դպրոցի կրթության ռազմավարության համատեքստում՝ որդեգրելով, այսպես կոչված, «11+1» բանաձևը: Այնուամենայնիվ, այս ոլորտի քաղաքականությունն ունի մի շարք լուրջ մարտահրավերներ, որոնցից են օրինակ՝ թիրախավորված քաղաքականության բացակայությունը ներառական նախադպրոցական կրթության՝ հատկապես վաղ տարիքի երեխաների խնամքի (0-ից 3 տարեկան երեխաների համար) բնագավառում, տարամիտումը գյուղական ու քաղաքային քաղաքականության զարգացումներում: Նկատվում է ամբողջական տվյալների շտեմարանի, ինչպես նաև տվյալների հավաքագրման, պահպանման, շրջանառման և վերլուծության ընթացակարգերի և մշտադիտարկման գործիքների պակաս՝ մասնավորապես նախադպրոցական տարիքի երեխաների թվի, տարբեր տեսակի նախակրթարանների թվի՝ ներառյալ այլընտրանքային նախադպրոցական կրթական կենտրոնների վերաբերյալ, ընդգրկվածության և բացառման ցուցանիշների, սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների, ԿԱՊԿՈՒ երեխաների, փախստական-տեղահանված ընտանիքների երեխաների թվի վերաբերյալ:
2. Հայաստանի մարզերում առայսօր փորձարկված նախադպրոցական կրթության այլընտրանքային ծառայությունների մոդելներն ու այս ոլորտում գործունեություն ծավալող մարմիններն օժտված չեն նախադպրոցական կրթությունից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և թիրախավորելու հատուկ մեխանիզմներով: ՎՄՋ ոլորտում իրականացվող ջանքերը կրում են տեղայնացված բնույթ, նկատվում է ոլորտում գործող կազմակերպությունների, մարզային իշխանությունների և այլ շահագրգիռ կառույցների համագործակցության պակաս: Միջգերատեսչական համագործակցության ոլորտում նկատվում են կրկնակի ուշադրության արժանացող ուղղություններ և անուշադրության մատնված հարցեր: Առկա է այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների պակաս հատկապես սոցիալապես խոցելի ընտանիքների երեխաների և մինչև 5 տարեկան երեխաների համար:
3. Նախադպրոցական մակարդակի կրթության ներառականության փորձագիտական գնահատականն ամենացածրն է՝ համեմատած հիմնական կամ բարձրագույն կրթության օղակների հետ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բացահայտման և կարիքների գնահատման գործակալությունները չեն գործում որպես ամբողջական համակարգ ներառական կրթություն իրականացնող հաստատությունների հետ, հետևաբար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի առկայության

պատճառով նախակրթական ծրագրերից դուրս մնացած երեխաների վերաբերյալ ճշգրիտ տվյալները բացակայում են:

4. Երեխայի ընդգրկվածությունը որևէ տեսակի ՎՄՁ ծառայությունների մեջ և նախադպրոցական կրթության **պարտադիր** բնույթը դրական են ընկալվում հայ հասարակության կողմից: Երեխաների և ծնողների համար նախադպրոցական կրթության սոցիալական գործառնությունների մասին ձևավորված է բավականին խորքային պատկերացում. հատկապես շեշտադրվում են այնպիսի սոցիալական գործառնություններ, ինչպիսիք են՝ դպրոցում ուսումնական առաջադիմության ապահովումը, երեխայի մոտ շփման և հաղորդակցության հմտությունների ձևավորումը և երեխայի ընդհանուր զարգացվածության, բարեկրթության ապահովումը:
5. Գոյություն ունի որոշակի տարբերություն պաշտոնական վիճակագրության հիման վրա հաշվարկված ընդգրկվածության ցուցանիշների և այլ աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա հաշվարկված ցուցանիշների միջև: Տարբերությունը պայմանավորված է, նախ և առաջ, նախադպրոցական տարիքի սահմանման մոտեցումներով (0-ից 6 տարեկան երեխաներ կամ միայն 3-6 տարեկան երեխաներ), ինչպես նաև նախադպրոցական տարիքի երեխաների թվաքանակի մասին տարբեր տվյալներով: Համընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը 2013-2015թթ.-ին միջինում կազմում է 28%: Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշը 2016թ.-ի համար կազմում է 50.5%: Հարաբերական ընդգրկվածության ցուցանիշը կազմում է մոտավորապես 60%: Հետևաբար, անգամ ամենաբարձր ցուցանիշի պարագայում ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում նախադպրոցական տարիքի երեխաների ավելի քան 40%-ը չի հաճախում որևէ ՎՄՁ հաստատություն:
6. Պետական մանկապարտեզներն ավելի նախընտրելի են, քան մասնավոր մանկապարտեզները, երեխաների շրջանում բավականին մեծ տոկոս են կազմել այլընտրանքային ծառայություններից օգտվողները: Ընդհանուր առմամբ, նախադպրոցական կրթական հաստատություններ հաճախելիությունը բավական ինտենսիվ է՝ օրական կտրվածքով մանկապարտեզում գտնվելու և հաճախելու պարբերականության տեսանկյունից: Քաղաքաբնակ երեխաները երկու անգամ շատ են ընդգրկված նախադպրոցական կրթական հաստատություններում, քան գյուղաբնակները: Միաժամանակ օրական տևողության և հաճախումների պարբերականության առումով գյուղերի բնակիչներն ու աղքատ ընտանիքների երեխաներն ավելի ինտենսիվ են հաճախում մանկապարտեզ: Բարձրագույն կրթություն ունեցող հարցվողներն ավելի են հակված ընդգրկել իրենց երեխաներին նախադպրոցական կրթական հաստատություններում: Բացի այդ, նրանք, ովքեր ունեն աշխատանք, երկու անգամ ավելի շատ են իրենց երեխաներին ուղարկում նախադպրոցական կրթական հաստատություններ, քան աշխատանք չունեցող ծնողները:
7. Միտքը դեպի նախադպրոցական կրթություն թափանցիկ և դյուրին չէ՝ հաշվի առնելով մուտքի և ընդունելության բազմաթիվ խոչընդոտների առկայությունը: Մանկապարտեզների մատչելիությունից դժգոհների թիվն առավել մեծ է աղքատ ՏՏ-ների շրջանում: Գյուղական բնակավայրերում երկու անգամ ավելի հեշտ է տեղավորել երեխային պետական մանկապարտեզ, քան քաղաքային բնակավայրերում: Մանկապարտեզ չընդունելու ամենատարածված պատճառներն են մանկապարտեզներում տեղերի բացակայությունն է: Ընդունելության ամենատարածված խոչընդոտներից է ընդունելության ընթացակարգում բյուրոկրատական քաշքշուկը՝ մասնավորապես կապված երկար ժամանակ սպասելու, հերթագրման և հաստատությունում բազմաթիվ փաստաթղթեր, տեղեկանքներ պահանջելու հետ:
8. Կոռուպցիոն մեխանիզմները, ինչպիսիք են օրինակ՝ համայնքի ղեկավարության հատուկ կարգադրությունը կամ նվերների/ոչ պաշտոնական վճարման պահանջը, դեռևս լայն-

րեն տարածված են: Միաժամանակ մանկապարտեզի ընդունելությունն ապահովվում է նաև ոչ ֆորմալ մեխանիզմներով, ինչպիսիք են՝ երրորդ անձանց/միջնորդների ներգրավվածությունը: Առանձին ընտանիքների համար ստեղծվում է ընտրովի ընդունելության և մուտքի սահմանափակման հնարավորություն:

9. Հայաստանում մանկապարտեզների գործունեության որակի հետ առնչվող ամենալուրջ խնդիրներից է դրանց անկանոն աշխատանքը: Այս ցուցանիշը հատկապես բարձր է գյուղական համայնքներում: Չնայած ծառայությունների որակի միջին գնահատականները բավարար են, դպրոցին նախապատրաստող գիտելիքների փոխանցման հետ առնչվող ծառայությունների գնահատականներն ավելի ցածր են, քան ՎՄՋ այլ ծառայությունների վերաբերյալ գնահատականները:
10. ՎՄՋ-ի հետ կապված ընդհանուր ծախսերն ավելի մեծ են քաղաքային բնակավայրերում, քան գյուղական: Ընդհանուր ծախսերի կառուցվածքում ոչ մեծ մաս են կազմում դեռևս գոյություն ունեցող ոչ պաշտոնական վճարների և նվերների հետ կապված ծախսերը: Սակայն գյուղական համայնքներում ոչ պաշտոնական վճարների, հատուկ պարագաների/պիտույքների և այլ դրամահավաքների հետ կապված ծախսերը մի քանի անգամ նվազ են քաղաքային բնակիչների ամսական նույն ծախսերի մեծությունից:
11. Հայաստանում նախադպրոցական կրթությունից դուրս մնացած 3-6 տարեկան երեխաների ցուցանիշը կազմում է 32.7%: Գյուղական բնակավայրերի երեխաներն ավելի հաճախ են դուրս մնում նախադպրոցական կրթությունից, քան քաղաքային բնակավայրերի երեխաները: Դուրս մնացած ընտանիքների ավելի քան 1/3-ն իրենց կողմից ձեռնարկել են հատուկ քայլեր երեխային նախադպրոցական հաստատություն տեղավորելու ուղղությամբ: Հետևաբար, նախադպրոցական կրթությունից դուրս մնալը անձնական ընտրության հետևանք չէ, այլ սոցիալ-տնտեսական կամ կառուցվածքային այնպիսի հանգամանքների արդյունք, ինչպիսիք են՝ համայնքում/մոտակայքում որևէ գործող մանկապարտեզի բացակայությունը, ծառայությունների չբավարարելը ծնողների պահանջներին և որևէ պատճառով երեխային մանկապարտեզ չընդունելը աղմինստրացիայի կողմից: Նախադպրոցական կրթության մատչելիությունը սահմանափակված է ոչ թե ծնողների բացասական վերաբերմունքի պատճառով, այլ պետական ու տեղական բյուջեներում ծառայությունների մատուցման համար միջոցների սակավության հետևանքով:
12. Մուտքի խոչընդոտների շարքում մասնակիցներն առաջին հերթին նշում են պետական մանկապարտեզների գերծանրաբեռնվածությունն ու գրանցման երկար հերթերը, ինչը կապված է կոռուպցիոն ռիսկ պարունակող մեխանիզմների գործառնման հետ, ինչպիսիք են՝ կաշառքը, երրորդ անձի կամ միջնորդի ներգրավվումը, մանկապարտեզի տնօրենի կամ աշխատակիցների անհանդուրժող կամ կոպիտ վերաբերմունքը դիմորդների նկատմամբ: Մանկապարտեզի տնօրենների կողմից աղքատ ընտանիքների ծնողների համար ստեղծվում են լրացուցիչ խոչընդոտներ՝ պարտադրելով նրանց ինքնուրույն հրաժարվել հաստատությունից:
13. Նախադպրոցական կրթությունից դուրս մնացած ամենախոցելի խումբը ԿԱՊԿՈՒ երեխաների խումբն է: Հարցվողների 1/5-ը նշել են, որ բացասաբար կվերաբերվեին, եթե իրենց երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին ԿԱՊԿՈՒ երեխաներ: Գոյություն ունի կարևոր միտում, որը ցույց է տալիս, որ որքան շատ մանկապարտեզները որդեգրեն ներառական կրթության ծրագրերը, այնքան ներառականության հանդեպ վերաբերմունքը կփոխվի դեպի դրականը: ԿԱՊԿՈՒ ընտանիքները հանդիպել են մուտքի և ընդունելության բազմաթիվ խոչընդոտների իրենց երեխաներին պետական ներառական նախակրթական հաստատություններ ընդգրկելու ընթացքում: Ավագ սերունդն առավել հակված է թաքցնել ընտանիքի խնդիրները հասարակությունից և ԿԱՊԿՈՒ երե-

խաներին մեկուսացնել տանը: Հաջորդ մարտահրավերը, որի հետ առերեսվում են ԿԱՊԿՈՒ երեխաների ընտանիքները, հավելյալ ծախսերն ու բարդություններն են: Վերջիններս կապված չեն նախադպրոցական ծառայությունների հետ ուղղակիորեն, սակայն անուղղակիորեն առնչվում են ՎՄՋ կենտրոնների հետ՝ դեպի առողջապահական և վերականգնողական ծառայություններ մուտք ունենալու տեսանկյունից: Հետազոտության ընթացքում բացահայտվել են բազմաթիվ դեպքեր/պատումներ ամբուլատոր և այլ բժշկական ծառայություններում կոռուպցիոն դրսևորումների, ոչ պատշաճ վերաբերմունքի և անմատչելիության վերաբերյալ՝ հատկապես հատուկ կարիքների գնահատման և անվճար բժշկական ծառայությունների կազմակերպման գործընթացներում:

Հաշվետվության մեջ արտացոլված պատկերը թույլ է տալիս առաջ քաշել մի շարք առաջարկություններ.

- Կենտրոնացնել ջանքերը **նախադպրոցական կրթությունը առավելագույնս ներառական** դարձնելու ուղղությամբ, ինչը կլուծի նախադպրոցական կրթությունից դուրս մնացած ԿԱՊԿՈՒ երեխաների ներգրավման խնդիրը:
- Մշակել հատուկ մեխանիզմներ համապատասխան նախարարությունների և ոլորտում գործունեություն ծավալող գերատեսչությունների կողմից նախադպրոցական կրթությունից տարբեր պատճառներով դուրս մնացած երեխաներին **համակարգված բացահայտելու, թիրախավորելու և ընդգրկելու ուղղությամբ**:
- **Ավելացնել հատկապես մինչև 4 տարեկան երեխաների համար այլընտրանքային նախադպրոցական ծառայությունների** թիվն ու տեսակները՝ համապատասխան միջգերատեսչական, համայնային, դոնոր կազմակերպությունների միջև համագործակցության միջոցով և մեկտեղելով իրագործվող ծրագրերի արդյունքների գնահատման և վերլուծության ջանքերը:
- Ստեղծել համաչափ միջգերատեսչական համագործակցության կոորդինացման մեխանիզմներ՝ պարտադրելով բոլոր դերակատարներին կատարել փորձի փոխանակում, կենտրոնացնել ջանքերը և ստեղծել ոլորտի մշտադիտարկման համար **ամբողջական և միասնական տվյալների շտեմարան**:
- Ձևավորել համալիր միջոցառումների համակարգ՝ Հայաստանում նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության մակարդակի կրճատման համար՝ հավելյալ բյուջետային հատկացումներ չպահանջող ծառայությունների որակի արդյունավետ վերահսկման, անձնակազմի որակավորման և այլ միջոցներով:
- Աջակցել աղքատ ընտանիքներին ՎՄՋ ծառայություններից օգտվելու ծախսերի նվազեցման մասով՝ նրանց շրջանում ընդգրկվածության ցուցանիշների բարձրացման նպատակով:
- Ավելացնել հասարակության մեջ ներառական նախադպրոցական կրթության առավելությունների վերաբերյալ իրազեկվածությունը, գործի դնել ԿԱՊԿՈՒ երեխաների հավաքագրման մեխանիզմներ այլընտրանքային ՎՄՋ ծառայությունների գծով:
- Հիմնադրել համագործակցության կենտրոններ աշխարհագրական մոտ տարածքներում գտնվող նախադպրոցական տարիքի ԿԱՊԿՈՒ երեխաների ծնողների համար՝ փոխաջակցման ժամանակացույցների և ծախսարդյունավետ բյուջեի պլանավորման ջանքերը կենտրոնացնելու նպատակով:

Հավելված 1. Հարցաթերթ

Հասանելի է կայքում՝

www.armenia.savethechildren.net/resources

Հավելված 2. Ընտրանքի իրագործումը

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումն ըստ բնակավայրերի

ՄԱՐԶ	Քանակը	Տոկոս	Վավեր տոկոս
Արմավիր	Արմավիր	10	24,4
	Մեծամոր	10	24,4
	գ. Սրգաշատ	5	12,2
	գ. Խորունկ	5	12,2
	գ. Նալբանդյան	6	14,6
	գ. Զարթոնք	5	12,2
	Ընդամենը	41	100,0
Արագածոտն	Աշտարակ	10	23,8
	Թալին	10	23,8
	գ. Կարբի	5	11,9
	գ. Ագարակ	5	11,9
	գ. Ոսկեպատ	6	14,3
	գ. Աղծք	6	14,3
	Ընդամենը	42	100,0
Արարատ	Արտաշատ	10	23,8
	Վեդի	10	23,8
	գ. Տափերական	5	11,9
	գ. Գորավան	5	11,9
	գ. Այգեպատ	6	14,3
	գ. Դաշտակար	6	14,3
	Ընդամենը	42	100,0
Գեղարքունիք	Գավառ	10	23,8
	Վարդենիս	10	23,8
	գ. Լճաշեն	5	11,9
	գ. Երանոս	5	11,9
	գ. Ծակքար	6	14,3
	գ. Չկալովկա	6	14,3
	Ընդամենը	42	100,0

Կոտայք	Հրազդան	10	23,3	23,3
	Բյուրեղավան	10	23,3	23,3
	գ. Մեղրաձոր	5	11,6	11,6
	գ. Կոտայք	6	14,0	14,0
	գ. Արտավազ	6	14,0	14,0
	գ. Արամուս	6	14,0	14,0
	Ընդամենը	43	100,0	100,0
Լոռի	Վանաձոր	10	23,8	23,8
	Թումանյան	10	23,8	23,8
	գ. Լեռնապատ	5	11,9	11,9
	գ. Գուգարք	5	11,9	11,9
	գ. Արջուտ	6	14,3	14,3
	գ. Փամբակ	6	14,3	14,3
	Ընդամենը	42	100,0	100,0
Շիրակ	Գյումրի	10	23,8	23,8
	Արթիկ	10	23,8	23,8
	գ. Տուֆաշեն	5	11,9	11,9
	գ. Կապս	5	11,9	11,9
	գ. Հայրենյանց	6	14,3	14,3
	գ. Ազատան	6	14,3	14,3
	Ընդամենը	42	100,0	100,0
Սյունիք	Կապան	10	23,8	23,8
	Միսիան	10	23,8	23,8
	գ. Սյունիք	5	11,9	11,9
	գ. Շաքի	5	11,9	11,9
	գ. Չապնի	6	14,3	14,3
	գ. Ծղուկ	6	14,3	14,3
	Ընդամենը	42	100,0	100,0
Տավուշ	Իջևան	10	24,4	24,4
	Այրում	10	24,4	24,4
	գ. Խաշտարակ	5	12,2	12,2
	գ. Հաղարծին	5	12,2	12,2
	գ. Հովք	6	14,6	14,6
	գ. Լուսահովիտ	5	12,2	12,2
	Ընդամենը	41	100,0	100,0

Վայոց Ձոր	Եղեգնաձոր	10	23,8	23,8
	Վայք	10	23,8	23,8
	գ. Գետափ	5	11,9	11,9
	գ. Սալիշկա	5	11,9	11,9
	գ. Արենի	6	14,3	14,3
	գ. Զեղեա	6	14,3	14,3
	Ընդամենը	42	100,0	100,0
Երևան	Ավան	16	8,9	8,9
	Արաբկիր	7	3,9	3,9
	Դավթաշեն	16	8,9	8,9
	Էրեբունի	16	8,9	8,9
	Կենտրոն	22	12,2	12,2
	Մալաթիա-Սեբաստիա	16	8,9	8,9
	Նոր-Նորք	16	8,9	8,9
	Նորք-Մարաշ	32	17,8	17,8
	Շենգավիթ	6	3,3	3,3
	Քանաքեռ-Զեյթուն	16	8,9	8,9
	Աջափնյակ	17	9,4	9,4
	Ընդամենը	180	100,0	100,0

Աղյուսակ 2. Ընտրանքի բաշխումը մարզերում ըստ բնակավայրերի տիպերի

ՄԱՐԶ		Քանակ	Տոկոս
Արմավիր	Քաղաքային	20	48,8
	Գյուղական	21	51,2
	Ընդամենը	41	100,0
Արագածոտն	Քաղաքային	21	50,0
	Գյուղական	21	50,0
	Ընդամենը	42	100,0
Արարատ	Քաղաքային	20	47,6
	Գյուղական	22	52,4
	Ընդամենը	42	100,0
Գեղարքունիք	Քաղաքային	20	47,6
	Գյուղական	22	52,4
	Ընդամենը	42	100,0

Կոտայք	Քաղաքային	20	46,5
	Գյուղական	23	53,5
	Ընդամենը	43	100,0
Լոռի	Քաղաքային	20	47,6
	Գյուղական	22	52,4
	Ընդամենը	42	100,0
Շիրակ	Քաղաքային	20	47,6
	Գյուղական	22	52,4
	Ընդամենը	42	100,0
Սյունիք	Քաղաքային	20	47,6
	Գյուղական	22	52,4
	Ընդամենը	42	100,0
Տավուշ	Քաղաքային	20	48,8
	Գյուղական	21	51,2
	Ընդամենը	41	100,0
Վայոց Ձոր	Քաղաքային	20	47,6
	Գյուղական	22	52,4
	Ընդամենը	42	100,0
Երևան	Քաղաքային	180	100,0

Աղյուսակ 3. Հարցվողների բաշխումն ըստ սեռի

Սեռ	Քանակ	Վավեր տոկոս
Տղամարդ	131	21.9
Կին	468	78.1
Ընդամենը	599	100.0

Աղյուսակ 4. Հարցվողների բաշխումն ըստ տարիքի

Հարցվողի տարիքը		Քանակ	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	18-35	378	63.2	63.2
	36-45	98	16.2	79.4
	46-60	90	15.1	94.5
	61 և ավելի	33	5.5	100.0
	Ընդամենը	599	100.0	

Աղյուսակ 5. Հարցվողների կապը երեխայի հետ

Կապը 3-6 տարեկան անչափահաս երեխայի/ների հետ /եթե մի քանիսն են, նշել առավել սերտ կապը/:

	Քանակ	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Մայր/հայր	491	82.0
	Քույր/եղբայր	6	1.0
	Տատիկ/պապիկ	99	16.5
	Այլ բարեկամ	3	.5
	Ընդամենը	599	100.0

Աղյուսակ 6. Հարցվողների կրթամակարդակը

Ձեր կրթությունը					
	Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս	
Վավեր	Տարրական/միջնակարգ	265	44.2	44.4	44.4
	Միջին մասնագիտական/թերի բարձրագույն/ուսանող	146	24.4	24.5	68.8
	Բարձրագույն/գիտական աստիճան (գիտ. թեկնածու, դոկտոր և այլն)	186	31.1	31.2	100.0
	Ընդամենը	597	99.7	100.0	
	Հրաժարվեց պատասխանել	2	.3		
Ընդամենը	599	100.0			

Աղյուսակ 7. Հարցվողների մոտ աշխատանքի առկայությունը

Աշխատում եք				
	Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Այո	185	30.9	30.9
	Ոչ	414	69.1	100.0
	Ընդամենը	599	100.0	100.0

Աղյուսակ 8. Հարցվողների զբաղվածությունը

Եթե այո, ապա արդյո՞ք այդ աշխատանքը					
		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ամենօրյա աշխատանք է անսովորաբար	149	24.9	80.5	80.5
	Մեկնագամյա կարճաժամկետ աշխատանք է	7	1.2	3.8	84.3
	Պարբերական կարճաժամկետ աշխատանք է	24	4.0	13.0	97.3
	Այլ	5	.8	2.7	100.0
	Ընդամենը	185	30.9	100.0	
Բացառված	Չունի աշխատանք	414	69.1		
Ընդամենը		599	100.0		

Աղյուսակ 9. Զբաղվածության բնագավառները

Ո՞ր բնագավառում եք աշխատում:					
		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Պետական կառավարում և պաշտպանություն	26	4.3	14.1	14.1
	Կրթություն	53	8.8	28.8	42.9
	Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	20	3.3	10.9	53.8
	Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	2	.3	1.1	54.9
	Սպասարկման այլ ծառայություններ	18	3.0	9.8	64.7
	Արհեստագործություն	4	.7	2.2	66.8
	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն	11	1.8	6.0	72.8
	Հանքագործական արդյունաբերություն	1	.2	.5	73.4
	Էլեկտրականության, գազի մատակարարում, ջրամատակարարում, կոյուղի	6	1.0	3.3	76.6
	Շինարարություն	11	1.8	6.0	82.6
	Մեծածախ և մանրածախ առևտուր	11	1.8	6.0	88.6
	Տրանսպորտ և փոխադրումներ	4	.7	2.2	90.8
	Տեղեկատվություն և կապ	3	.5	1.6	92.4
	Ֆինանսական և ապահովագրական, անշարժ գույքի հետ կապված գործունեություն	6	1.0	3.3	95.7
	Այլ	8	1.3	4.3	100.0
	Ընդամենը	184	30.7	100.0	
Բացառված	Հրաժարվեց պատասխանել	1	.2		
	Աշխատանք չունի	414	69.1		
	Ընդամենը	415	69.3		
Ընդամենը		599	100.0		

Հավելված 3. Լրացուցիչ բազմաչափ բաշխման աղյուսակներ

Աղյուսակ 1. Ինչպիսի՞ առնչություն ունեք կրթության ոլորտին:				
	Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
ոչ այնքան սերտ. որպես ծնող հետևում եմ մանկապարտեզի անցուղարձին	233	38.9	40.8	40.8
բավականին սերտ. որպես ծնող ակտիվորեն մասնակցում եմ մանկապարտեզի բոլոր իրադարձություններին	278	46.4	48.7	89.5
սերտ. աշխատում/սովորում եմ կրթության/գիտության ոլորտում	60	10.0	10.5	100.0
Ընդամենը	571	95.3	100.0	

Աղյուսակ 2. Բացարձակ ընդգրկվածության ցուցանիշը՝ հիմնված մարզային իշխանություններից հավաքագրված 2016թ.-ի տվյալների վրա

	Մարզ	Մինչև 6 տարեկան երեխաների ընդհանուր թիվը	Նախադարձական կրթական հաստատություններում ընդգրկված մինչև 6 տարեկան երեխաների թիվը	Ընդգրկվածության ցուցանիշ
1	Արմավիր	*	6226	**
2	Արարատ	20017	9371	46.8%
3	Արագածոտն	5838	2486	42.6%
4	Գեղարքունիք	*	5042	**
5	Լոռի	11590	6186	53.4%
6	Շիրակ	*	*	**
7	Վայոց Ձոր	1988	1176	59.2%
8	Տավուշ	*	4392	**
9	Սյունիք	*	4405	**
10	Կոտայք	*	7318	**
11	Երևան		32.628	**
Ընդգրկվածության միջին ցուցանիշը				50.5%

* Հրաժարվեցին տրամադրել տվյալներ:

** Հաշվարկն անհնար է:

Աղյուսակ 3. Ընդգրկվածությունը թիրախավորված երեխաների շրջանում (% մարզում ընտրված երեխաների թվից)

Մարզ	Առհասարակ չեն հաճախում որևէ նախադպրոցական կրթական հաստատություն	SS-ից առնվազն մեկ երեխա հաճախում է որևէ նախադպրոցական կրթական հաստատություն	Ընդամենը
Արմավիր	24,5%	75,5%	100.0%
Արարատ	22,9%	77,1%	100.0%
Արագածոտն	28,0%	72,0%	100.0%
Գեղարքունիք	48,1%	51,9%	100.0%
Լոռի	59,1%	40,9%	100.0%
Շիրակ	53,2%	46,8%	100.0%
Վայոց Ձոր	34,7%	65,3%	100.0%
Տավուշ	31,8%	68,2%	100.0%
Սյունիք	61,7%	38,3%	100.0%
Կոտայք	31,1%	68,9%	100.0%
Երևան	17,3%	82,7%	100.0%

Աղյուսակ 4. Ինչ եք կարծում, արդյո՞ք, 3-6 տարեկան երեխաների ընդգրկումը նախադպրոցական հաստատություններում պետք է լինի.		
	Քանակ	Տոկոս
Պարտադիր բոլորի համար	369	61.6
Ցանկալի, սակայն ոչ պարտադիր	221	36.9
Ոչ պարտադիր բոլոր երեխաների համար	9	1.5
Ընդամենը	599	100.0

Աղյուսակ 5 Շաբաթվա ընթացքում որքան հաճախ է երեխան ընդգրկված որևէ նախադպրոցական կրթական ծառայությունում:

		Քանակ	Ընդգրկվածներից վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Ամեն օր	412	89.4	89.4
	Շաբաթական 3-4 օր	49	10.6	100.0
	Ընդամենը	461	100.0	

Աղյուսակ 6. Քանի ժամ է երեխան գտնվում նախադպրոցական կրթական հաստատությունում:

	Քանակ	Ընդգրկվածներից վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Մինչև 2 ժամ	20	4.4
	2ից 4 ժամ	53	16.0
	4-ից ավելի	383	100.0
	Ընդամենը	456	100.0

Աղյուսակ 7. Քաղաքային/գյուղական բնակավայրերում հաճախելիության պարբերականությունը

Որքան հաճախ է երեխան այցելու նախադպրոցական կրթական ծառայություններ:			Բնակավայրի տիպը		Ընդամենը
			Քաղաքային	Գյուղական	
	Ամեն օր	Թիվը	297	115	412
		% բնակավայրում	87.4%	95.0%	
	Շաբաթական 3-4 օր	Թիվը	43	6	49
		% բնակավայրում	12.6%	5.0%	
Ընդամենը		Թիվը	340	121	461
			100%	100%	

Աղյուսակ 8. Քաղաքային/գյուղական բնակավայրերում նախադպրոցական կրթության հաստատությունում երեխայի գտնվելու ժամաքանակը

Քանի՞ ժամ է երեխան գտնվում նախադպրոցական կրթական հաստատությունում:			Բնակվայրի տիպը		Ընդամենը
			Քաղաքային	Գյուղական	
	Մինչև 2 ժամ	Թիվը	18	2	20
		% բնակավայրում	5.4%	1.7%	
	2ից 4 ժամ	Թիվը	32	21	53
		% բնակավայրում	9.6%	17.4%	
	4-ից ավելի	Թիվը	285	98	383
		% բնակավայրում	85.1%	81.0%	
Ընդամենը		Թիվը	335	121	456
		%	100%	100%	

Աղյուսակ 9. Արդյո՞ք բախվել եք որևէ խոչընդոտի երեխային մանկապարտեզ տեղավորելիս քաղաքային/գյուղական բնակավայրերում:

		Արդյո՞ք բախվել եք որևէ խոչընդոտի երեխային մանկապարտեզ տեղավորելիս:		Ընդամենը
		Այո	Ոչ	
Բնակավայրի տիպը	Քաղաքային	17.2%	82.8%	100.0%
	Գյուղական	6.3%	93.7%	100.0%
Ընդամենը		14.6%	85.4%	100.0%

Աղյուսակ 10. Ինչպիսի՞ մանկապարտեզ է հաճախում երեխան: * Արդյո՞ք բախվել եք որևէ խոչընդոտի երեխային պետական/մասնավոր մանկապարտեզ տեղավորելիս:

		Արդյո՞ք բախվել եք որևէ խոչընդոտի երեխային պետական/մասնավոր մանկապարտեզ տեղավորելիս		Ընդամենը
		Այո	Ոչ	
Ինչպիսի՞ մանկապարտեզ է հաճախում երեխան:	Մասնավոր	10.5%	89.5%	100.0%
	Պետական	14.8%	85.2%	100.0%
Ընդամենը		14.6%	85.4%	100.0%

Աղյուսակ 11. Արդյո՞ք, մանկապարտեզը կանոնավոր է գործում ողջ տարվա ընթացքում. Ըստ ՀՀ մարզերի

		Արդյո՞ք, մանկապարտեզը կանոնավոր է գործում ողջ տարվա ընթացքում.		Ընդամենը
		Այո	Ոչ	
Մարզ	Արմավիր	46,4%	53,6%	100.0%
	Արարատ	85,2%	14,8%	100.0%
	Արագածոտն	75,8%	24,2%	100.0%
	Գեղարքունիք	78,3%	21,7%	100.0%
	Լոռի	100,0%		100.0%
	Շիրակ	95,0%	5,0%	100.0%
	Վայոց Ձոր	81,5%	18,5%	100.0%
	Տավուշ	100,0%		100.0%
	Սյունիք	94,4%	5,6%	100.0%
	Կոտայք	96,4%	3,6%	100.0%
	Երևան	94,6%	5,4%	100.0%
Ընդամենը		87,9%	12,1%	100,0%

Աղյուսակ 12. Գնահատել, խնդրեմ, մանկապարտեզի նյութատեխնիկական ապահովվածությունը՝ ըստ թվարկված չափանիշների

Ինչպիսի մանկապարտեզ է հաճախում երեխան:		Շենքային պայմաններ	Ջեռուցում	Մուտնդ	Գույք	Կենցաղային պարագաներ	Խաղալիքներ և այլ ուսումնաօժանդակ նյութեր	Հակավարակային և սանիտարահիգիենիկ միջոցառումներ	Սպորտ դահլիճ	Խաղահրապարակ	Համակարգչային և տեխնիկական միջոցներ
Մասնավոր	Միջին	4.26	4.47	4.13	4.21	4.26	4.26	4.37	3.80	4.07	3.43
	Նվազագույն	2	3	2	3	1	3	3	1	2	1
	Առավելագույն	5	5	5	5	5	5	5	5	5	5
Պետական	Միջին	3.95	4.29	4.50	4.03	4.05	4.08	4.31	4.04	3.86	3.48
	Նվազագույն	1	1	2	1	1	1	1	1	1	1
	Առավելագույն	5	5	5	5	5	5	5	5	5	5

Աղյուսակ 13. Գնահատել, խնդրեմ, մանկապարտեզի ծառայությունների որակը՝ բաշխում ըստ մանկապարտեզի տիպի

Գնահատել, խնդրեմ, մանկապարտեզի ծառայությունների որակը	Ինչպիսի մանկապարտեզ է հաճախում երեխան:					
	Մասնավոր			Պետական		
	Միջին	Նվազագույն	Առավելագույն	Միջին	Նվազագույն	Առավելագույն
Դպրոցին նախապատրաստող զիտելիքների փոխանցում	4.47	3	5	4.40	1	5
Խոսքի, հաղորդակցման զարգացում	4.42	3	5	4.50	1	5
Դաստիարակություն, քաղաքավարության նորմերի ուսուցանում	4.32	2	5	4.54	1	5
Ինքնուրույնության, տրամաբանելու հմտությունների փոխանցում	4.47	2	5	4.55	2	5
Ստեղծագործականության զարգացում / նկարչություն, երգ, պար/	4.42	2	5	4.57	1	5
Ֆիզիկական դաստիարակություն, կոփում	4.16	2	5	4.48	1	5

Աղյուսակ 14. Որոշ մանկապարտեզներ այսօր իրականացնում են ներառական կրթություն: Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե Ձեր երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին ԿԱՊԿՈՒ երեխաներ: / Ըստ աշխատանքի առկայության

Աշխատու՜մ եք:		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Այո	Դրական. բոլոր երեխաներն էլ ունեն կրթություն ստանալու իրավունք	108	58.4	76.6	76.6
	Չեզոք. մեր երեխայի համար միևնույնն է	14	7.6	9.9	86.5
	Բացասական. այդպիսի երեխաները հատուկ խնամքի կարիք ունեն և պետք է հաճախեն հատուկ հաստատություններ	19	10.3	13.5	100.0
	Ընդամենը	141	76.2	100.0	
	Հրաժարվեց պատասխանել	1	.5		
	Չի հաճախում	43	23.2		
	Ընդամենը	44	23.8		
		185	100.0		
Ոչ	Դրական. բոլոր երեխաներն էլ ունեն կրթություն ստանալու իրավունք	182	44.0	72.5	72.5
	Չեզոք. մեր երեխայի համար միևնույնն է	31	7.5	12.4	84.9
	Բացասական. այդպիսի երեխաները հատուկ խնամքի կարիք ունեն և պետք է հաճախեն հատուկ հաստատություններ	38	9.2	15.1	100.0
	Ընդամենը	251	60.6	100.0	
	Հրաժարվեց պատասխանել	1	.2		
	Չի հաճախում	158	38.2		
	Ընդամենը	163	39.4		
	Չգիտեմ, չեմ հիշում	4	1.0		
		414	100.0		

Աղյուսակ 15. Որոշ մանկապարտեզներ այսօր իրականացնում են ներառական կրթություն: Ինչպե՞ս կվերաբերվեիք, եթե Ձեր երեխայի խումբ կամ մանկապարտեզ հաճախեին ԿԱՊԿՈՒ երեխաներ: / Ըստ սեռի

Սեռ		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Տղամարդ	Դրական. բոլոր երեխաներն էլ ունեն կրթություն ստանալու իրավունք	63	48.1	84.0	84.0
	Չեզոք. մեր երեխայի համար միևնույնն է	6	4.6	8.0	92.0
	Բացասական. այդպիսի երեխաները հատուկ խնամքի կարիք ունեն և պետք է հաճախեն հատուկ հաստատություններ	6	4.6	8.0	100.0
	Ընդամենը	75	57.3	100.0	
	Հրաժարվեց պատասխանել	55	42.0		
	Չի հաճախում	1	.8		
	Ընդամենը	56	42.7		
		131	100.0		

Կին	Դրական, բոլոր երեխաներն էլ ունեն կրթություն ստանալու իրավունք	227	48.6	71.6	71.6
	Չեզոք, մեր երեխայի համար միննույնն է	39	8.4	12.3	83.9
	Բացասական, այդպիսի երեխաները հատուկ խնամքի կարիք ունեն և պետք է հաճախեն հատուկ հաստատություններ	51	10.9	16.1	100.0
	Ընդամենը	317	67.9	100.0	
	Հրաժարվեց պատասխանել	145	31.0		
	Չի հաճախում	1	.2		
	Ընդամենը	150	32.1		
	Չգիտեմ, չեմ հիշում	4	.9		
		467	100.0		

Աղյուսակ 16. Նախադպրոցական կրթության վրա կատարվող ընդհանուր ամսական ծախսերը քաղաքային/գյուղական բնակավայրերում

Քաղաքային	N	Վավեր	290
		Չի հաճախում	91
	Միջին		5088.4138
	Նվազագույն		0.00
	Առավելագույն		80000.00
Գյուղական	N	Վավեր	92
		Չի հաճախում	126
	Միջին		
	Նվազագույն		
	Առավելագույն		

Աղյուսակ 17. ՏՏ-ների ոչ պաշտոնական վճարների բաշխումն ըստ մարզերի

Մարզ	Ոչ պաշտոնական վճարները մանկապարտեզներին	տոկոսը մանկապարտեզներից օգտվող ՏՏ-ներից
Արմավիր	Ոչինչ չեն վճարում	89.3
	Վճարել են առնվազն 1դր	10.7
	Ընդամենը	100.0
Արագածոտն	Ոչինչ չեն վճարում	96.3
	Վճարել են առնվազն 1դր	3.7
	Ընդամենը	100.0
Արարատ	Ոչինչ չեն վճարում	93.9
	Վճարել են առնվազն 1դր	6.1
	Ընդամենը	100.0

Գեղարքունիք	Ոչինչ չեն վճարում	78.3
	Վճարել են առնվազն 1դր	21.7
	Ընդամենը	100.0
Կոտայք	Ոչինչ չեն վճարում	88.2
	Վճարել են առնվազն 1դր	11.8
	Ընդամենը	100.0
Լոռի	Ոչինչ չեն վճարում	100.0
Շիրակ	Վճարել են առնվազն 1դր	92.6
	Ընդամենը	7.4
	Ոչինչ չեն վճարում	100.0
Սյունիք	Վճարել են առնվազն 1դր	71.4
	Ընդամենը	28.6
	Ոչինչ չեն վճարում	100.0
Տավուշ	Վճարել են առնվազն 1դր	83.3
	Ընդամենը	16.7
	Ոչինչ չեն վճարում	100.0
Վայոց Ձոր	Վճարել են առնվազն 1դր	82.1
	Ընդամենը	17.9
	Ոչինչ չեն վճարում	100.0
Երևան	Վճարել են առնվազն 1դր	72.6
	Ընդամենը	27.4
	Ոչինչ չեն վճարում	100.0

Աղյուսակ 18. Եթե երեխաները չեն հաճախում մանկապարտեզ, ապա ո՞ւմ կողմից է կազմակերպվում նրանց խնամքը.

		Քանակ	Տոկոս	Վավեր տոկոս	Կուտակային տոկոս
Վավեր	Մայր/հայր	178	29.7	86.4	86.4
	Տատիկ/պապիկ	26	4.3	12.6	99.0
	Այլ	2	.3	1.0	100.0
	Ընդամենը	206	34.4	100.0	

Հավելված 4. Կիսափակ հարցերի «Այլ» տարբերակների բառային մեջբերումներ

Հարցի համարը հարցաթերթում	Կիսափակ հարցեր	«Այլ» տարբերակի առավել տարածված պատասխանները
7	Եթե պարտադիր չէ, ապա ո՞ր դեպքերում:	Եթե չկան բավարար ֆինանսական միջոցներ Եթե ծնողները չեն աշխատում
8	Հայաստանում շատ ընտանիքներ չեն ուղարկում երեխաներին մանկապարտեզ՝ դաստիարակելով նրանց տան պայմաններում: Ո՞րն է, ըստ Ձեզ, հիմնական պատճառը.	Ծնողների մոտ կրթության պակաս Ծնողների սահմանափակ մտածելակերպ Դաստիարակների նկատմամբ վստահության պակաս Տնային խնամքի պայմաններն ավելի լավն են
14	Ինչո՞ւ երեխան/ները չի/չեն հաճախում որևէ նախադպրոցական կրթական հաստատություն:	Մեր երեխան դեռ փոքր է մանկապարտեզ հաճախելու համար Երեխան 4 տարեկանից փոքր է, և մանկապարտեզ կգնա 4 տարեկանից հետո
22	Եթե այո, ապա ինչպիսի՞ խոչընդոտների եք հանդիպել:	Տեղ չկար Կապված էր գրանցման հասցեի հետ Կապված էր համայնքում գրանցում չունենալու հետ